

գիտականը պատմագիտական հանդես

# Երևան Աշխարհու

№ 1, 2017 թ.

ISSN 1829-0345

"TRES ARMENII  
FRATERS ԵՐԳԻ  
ՀԱՎԱՆԱԿԱՆ  
ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐԸ

2

«ՆԱՐԻՆԵ»-ի  
ՀԱՂԹԱՐԾԱԿԸ


38

ԱՅՆ  
ԶԱՐՄԱՆԱՀՐԱԾ  
ՀԵՂՈՒԿ  
ԲՅՈՒՐԵԴԱՆԵՐԸ  
ՆՈՐ ՍԵՐՆԻԻ  
ՕԴՏԻԿԱ

20

ՄԱԳՆԻՍԱԿԱՆ  
ԲԱՐՁՈՎ  
ԱՐԱԳԸՆԹԱՑ  
ԳՆԱՑՔՆԵՐ

58



Գիտահանրամատչելի հանես  
**ԻՆՍՈՒԹՅԱՆ  
ԱՇԽԱՐՀՈՒՄ**

№1, 2017 թ.

Լրատվական գործունեություն	
իրականացնող՝	ՀՀԱՆ Նախագահություն
Նախագահ՝	Ռ. Սարգսիրոսյան
Պետական գրանցման	
վկայականի համարը՝	03Ա055313
Տրված՝	28.06.2002 թ.
Գլխավոր խմբագիր՝	Ղազարյան Էդ.
Գլխավոր խմբագիր	
տեղական	Սուվարյան Յո.
Բաժինների խմբագիրներ՝	Ղազարյան Ա., Դանագովյան Գ. Խառասյան Ա., Սիմոնյան Ս.
Գործադիր տնօրին՝	Սարգսյան Ա.
Պատասխանատու	
քարտուղար՝	Վարդանյան Ն.
Տեղականիկան	
խմբագիր	Կիրակոսյան Ա.
Համագործակին	
օպերատոր՝	Հովհաննիսյան Ք.
Դիզայներ՝	Օհանջանյան Ա.
Թարգմանչ:	Սարգսյան Մ.
Համարի	
պատասխանատու՝	Կիրակոսյան Ա.
Ստորագրմած՝	
տպագրության՝	21.02.2017
«Գիտահանրամատչելի համագրական խորհրդի կամք»՝	

Արաման Կ., Արարովյան Լ., Արմավայր Ա. (ՌԴ), Աֆրիկյան Ե., Բրոտսան Գ., Գալստյան Հ., Եսայան Ա. (ԱՄՆ), Թավալյան Լ., Հարությունյան Հ., Հարությունյան Ռ., Հարությունյան Ս., Համբարձումյան Ա., Հովհաննիսյան Լ., Ղազարյան Հ., Մարտիրոսյան Բ. (ԲԴ), Մելքոնյան Ա., Ներսիսյան Ա., Շահինյան Ա., Շուրովյան Ա., Զքրաշյան Ռ., Սեդրակյան Դ., Մինասյան Ա.

#### Խմբագրության հասցեն՝

Մարշալ Բարյանյան 24 դ,  
ՀՀմանաբար գիտական գրադարանի շենք, 9-րդ հարկ,  
Հեռ.՝ +374 60 62 35 99, ֆաք.՝ +374 10 56 80 68  
e-mail: journal@cam.am

«Գիտության աշխարհում» գիտահանրամատչելի հանեսը սեղմնելի է << կառավարության և << ԳԱԱ նախագահության որոշմամբ:

Տպաբանակը՝ 500 օրինակ:  
Ծավալ՝ 64 էջ:  
Գիրը՝ պայմանագրային:  
Հողագործերի վերատպումը հնարավոր է միայն խմբագրության գրավոր համաձայնության դեպքում: Մերժումների դեպքում հնարագործությունը հրումը պարտադիր է: Խմբագրությունը միշտ չէ, որ համակարգիր է հեղինակների հետ: Խմբագրությունը պատասխանատվություն չի կրում գովազդային նյութերի բովանդակության համար:



## 2 "TRES ARMENII FRATERS" ԵՐԳԻ ՀԱՎԱՍԱՐԱԿԱՆ ՍԿՂԲՆԱՂԲՑՈՒՐԸ

ԱՐԾՎԻ ԲԱԽՉԻՆՅԱՆ

1999 թվականի սեպտեմբերի 27-ին ֆրանսիական BMG ձայնագրման ֆիրման թողարկել է «Երուսաղեմ. հազարամյակի առեղծվածը» ("Solyma: Mystik Der Jahrtausende") վերնագրով երաժշտական լազերային խտակավառական: Ալրոմի վերնագիրը լսադիներեն է, ենթավերնագիրը՝ գերմաներեն: Ընդգրկում է 13 երգ: Ալրոմի չորրորդ գործը կոչվում է "Tres Armenii fraters", այսինքն՝ «Երեք հայ եղայրները»: Տասներորդը նոյն երգի ուսմիքը է: Գեղեցիկ մեղեդիով օժտված այս գործն այրոմի լավագույն երգերից է:

## 6 ԳԵՎՈՐԳ ԶԱՀՈՐԻԿՅԱՆ ԲԱՆԱՍԵՂՋԸ

ԿԱՐԻՆԵ ԱՌԱԲԵԼՅԱՆ

Ականավոր լեզվաբան, ակադեմիկոս Գևորգ Զահորյակյանի անունը բացաձանող է մտավորական հանրությանը. ԳԱԱ լեզվի ինստիտուտի բազմամյա ու բազմարդյուն տնօրեն, հեղինակ բազմաթիվ մենագրությունների, դասագրքերի, գիտական հոդվածների: Նրա գիտամանկավարժական գործունեության մասին շատ է խոսվել ու դեռ պիտի խոսվի: Այս ամենով հանդերձ՝ նրա տաղանդն ուներ մեկ այլ, քչերին հայտնի, թաքնված կողմէ բանաստեղծը:

## 12 ԳԵՆԵՐԱԼ-ԼԵՅՏԵՆԱՏ ՄՈՎԱԵՍ ՍԻԼԻԿՅԱՆ


ՈՈՒԲԵՆ ՍԱՀԱԿՅԱՆ

Հայաստանի Առաջին հանրապետության կայացման գործում անգնահատելի է հայ զինվորների և սպաների դերը: Հայ զինվորականների թվում էր գեներալ Մովսես Բարայի Միլիկյանը (Սոհիսէ Միլիկով, 1862-1937): Նրա անոնը մշտապես կապված է 1918-1920 թթ. իրադարձությունների հետ, և գեներալի գործունեության այդ շրջանը գորեք ամբողջովին ուսումնասիրվել է պատմաբանների կողմից: Սակայն անհայտ են մասցել Ս. Միլիկյանի միջնադարակամյան և հետպատերազմյան կյանքի մանրամասները, որոնք կցանկանանել են բարերցողին:

## 20 ԱՅԴ ԶԱՐՄԱՆԱՀՐԱԾ ՀԵՂՈՒԿ ԲՅՈՒՐԵՂՆԵՐԸ ՆՈՐ ՍԵՐԵԴԻ ՕՊՏԻԿԱ

ՀԱԿՈԲ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Այսօր դժվար է գտնել մեկին, ում ծանոթ չեն հեղուկրյուեղային վահանակներ՝ սկսած թջային հեռախոսներից, վերջացրած ժամանակակից հեռուստացույցներով, համակարգչային էլեկտրոնի ու ժամացույցներով: Իսկ ինչ են հեղուկ բյուրեղները, երբ և ինչպես են դրանք հայտնագործվել և ինչ ապագա է դրանց սպասում:



12

20

28

## ՄԻԶՈՒԿԱՅԻՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՐԳԱՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ԱԼԲԵՐՏ ԱՎԵՏԻՆՅԱՆ

Կրտեն մի քանի տասնամյակ է, ինչ միջուկային էներգիան ծառայում է մարդկությանը: Ծատերը մինչև այժմ էլ մտածում են, որ միջուկային արդյունաբերությունը՝ լրկ ասոմային էլեկտրակայաններն են, միջուկային գենր է և ուրանի հանքարդյունաբերությունը: Իրականում վերը նշվածը հակայական սաոցադաշտի գագաթն է միայն: Այսօր կյանքն անհնար է պատկերացնել առանց միջուկային տեխնոլոգիաների:

## «ՆԱՐԻՆԵ»-Ի ՀԱՂԹԱՐԾԱԿԸ

ԼԱՌԻՐԱ ՀԱԿՈԲՅԱՆ

Լևոն Երգինկյանը 1949 թ. անջատել է կաթնաթթվային ացիդոֆիլային բակտերիաներ, ընտրել դրանց լավագույն տեսակներ՝ ստեղծելով բուժիչ ացիդոֆիլային կաթ՝ «Նարինե»:

## ԴԵՂԵՐԻ ԱՆՀԱՄԱՏԵՂԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

ՈՈՒԴՈՒՖ ՀԱԿՈԲՅԱՆ

Բազմադեպարուժությունը կամ պոլիֆարմակոթերապիան զարգացել է դեռևս մ.թ.ա.: Ներկայում, չնայած 15000-ից ավելի պատրաստի դեղաձևերի առկայությանը, հանպարաստի դեղատոմսերը չեն կորցրել իրենց նշանակությունը: Բժիշկների դեղանյութերի զուգակցված օգտագործման ձգտումը հետապնդում է 2 նպատակ՝ բարձրացնել բուժամիջոցի արդյունավետությունը և վերացնել կամ մեղմացնել ակտիվ նյութի կողմնակի, վտանգավոր ազդեցությունը:

## ՄԱԳՆԻՍԱԿԱՆ ԲԱՐՁՈՎ ԱՐԱԳԸՆԹՅԱՑ

ԳՆԱՑՔՆԵՐ

ԱՐԵԳ ԳՐԻԳՈՐՅԱՆ, ՆԱՐԵԿ ԱՊԵՏՅԱՆ

Ժամանակակից գնացքները զարգացնում են բավականաչափ մեծ արագություններ, որի հետևանքով անհիների ու ոնքսերի միջև առաջանում են համեմատաբար մեծ շիման ուժեր, որոնք կարող են շարքից հանել գնացքների ընթացամասը: Այս ուժերը փորձացնելու և դրա չնորոշիվ գնացքների արագությունները հնարավորինս մեծացնելու նպատակով դրանց տակ տեղադրում են մագնիսական կախոցներ, որոնք էլեկտրամագնիսական ուժի չնորոշիվ գնացքը բարձրացնում են շարժուղու վեր և պահում օրուակ կախված վիճակում: Կախոցների չնորոշիվ վերանում է անհիների և ոնքսերի միջև շիման ուժը, քանի որ գնացքը ոչ թե ընթանում է ոնքսերի վրայով, այլ թռչում (ձախրում) է շարժուղու վրայով: Շարժուղու և օրուակ կախված գնացքի միջև առաջացած օրային շերտը, որին «հինգում-թիկնում» է գնացքը, պայմանականորեն անվանում են «մագնիսական բարձ»:



38



48



58

# "TRES ARMENII FRATERS" ԵՐԳԻ ՀԱՎԱՆԱԿԱՆ ՍԿԶԲՆԱԴՅՅՈՒՐԸ




ԱՐՄՎԻ ԲԱԽՉԻՆՅԱՆ

քանասիրական գիտությունների թեկնածու

«ՀԱՅ պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող Գիտական հետաքրքրությունների դոկտոր՝ հայ գաղթավայրերի պատմություն, հայ ժողովրդի պատմաշակութային կապերն աշխարհի հետ, հայ կինոյի և խորենգրաֆիայի պատմություն, հայերի կենսագրություններ

1999թ վական սեպտեմբերի 27-ին Փրանսիական BMG ձայնագրման ֆիրման թողարկել է «Երուսաղեմ. հազարամյակի առեղծվածը» ("Solyma: Mystik Der Jahrtausende") վերնագրով երաժշտական լազերային խտասկավառակ: Ալբոմի վերնագիրը լատիներեն է, ենթավերնագիրը՝ գերմաներեն: Ըստգրկում է 13 երգ (երկուսը՝ երգերի ռեմիքսներ) չորս լեզվով՝ երրայերեն, լատիներեն, հունարեն և արաբերեն՝ միջնադարյան մեղեդիների հիման վրա: Վեց տղամարդ և կին. կատարողների անունները, ցավոր, նշված չեն: Որպես պրոդյուսերներ և գործիքավորողներ, նշված են Ալեն Պազները և Պատրիկ Լեժեն: Երգերից երկուսի հեղինակն է Լ. Կաենան, մնացածինը՝ Ալեն Պազները:



Որպես երգերի խոսքերի հեղինակներ, նշվում են Պոլ Սերժը (Կակոնը) և Ֆարրիս Տալիանը, միայն մեկինը՝ Ալեն Պազները:

Ալբոմի չորրորդ գործը կոչվում է "Tres Armenii fraters", այսինքն՝ «Երեք հայ եղբայրները»: Տասներորդը նույն երգի ռեմիքսն է: Գեղեցիկ մեղեդինվ օժտված այս գործն ալբոմի լավագույն երգերից է: Ներկայացնում ենք երգի

բնագիրը և հայերեն տողացի թարգմանությունը՝

Media in pugna furente se ostenderunt cernuatores tres, qui se inter pugnantes repente interpesuerunt. In locum odii succedit miratio; silet clamor infestus et stupentes inter se contuentes bellatores, tum arma ad terram dant. Saltationem occipiunt, tamque miros edunt risus ut, hoc risu, diem agitent pacis. Nonne cernuatores illi, fratres illi tres, quasi prophetae esse videntur?






Tres Armenii fratres  
Quos vidimus in via  
Tres Armenii fratres  
Petuturi Solyma  
Splendida voce  
Cantantes et saltantes  
Tres Armenii fratres  
Cernuatores.

Tres Armenii fratres  
Repente tetigere  
Tres Armenii fratres  
Locum asperae pugnae  
Splendida voce  
Perrexere cantare  
Tres Armenii fratres  
Cernuatores.

Statim eos cum spectavere  
In strage occupati milites.

Arma reposuere  
Quasi risu omnes corruere  
Ac ludorum ob contagium  
Incepert cantare saltare.

Կատաղի ձակատամարտի  
կեսին հանկարծակի հայտն-  
վեցին երեք թափառական ար-  
տիստներ և կանգնեցին կովող-  
ների մեջ, որոնց ատելությունը  
փոխվեց խսկական ապշառի:  
Կովի աղաղակները լուեցին,  
կովողները զարմացան՝ նախ  
նայելով միմյանց, հետո ծիծաղ  
պայթեց, որն ավարտվեց խա-  
ղաղությամբ:



Երեք հայ եղբայրները,  
Ճանապարհ էին գնում,  
Երեք հայ եղբայրները,  
Գնում էին երուսաղեմ,  
Հրաշալի ճայներով,  
Երգում էին ու պարում,  
Երեք հայ եղբայրները,  
Արտիստները:

Երեք հայ եղբայրները  
Եկան հանկարծակի,  
Երեք հայ եղբայրները  
Կատաղի մարտի մեջ,  
Հրաշալի ճայներով  
Շարունակում էին երգել,  
Երեք հայ եղբայրները,  
Արտիստները:

Հենց նայեցին նրանք  
Զինվորներին, որ կոտորում էին,  
Զենքերը ցած դրեցին,  
Գրեթե մեռան ծիծաղից,  
Ապա, վարակված խաղից,  
Սկսեցին երգել և պարել:



Երգի տեքստի համահեղինակ Ֆարբիս Տալիանը թերևս եղել է ֆրանսահայ ընտանիքի զավակ, ինչով կարելի է բացատրել անդրադարձը հայկական թեմային: Մեզ հասու աղբյուրներում Տալիանի մասին միայն գտանք այն փաստը, որ 1974-ին նրա հեղինակությամբ լուս է տեսել «Երազող կատվի մաշկը» ("La peau d'un chat qui reve") ֆրանսերեն վեպը:

Փորձենք պարզել, թե ո՞րն է այս երեք հայ եղբայրների մասին երգի սկզբնաղբյուրը:

13-րդ դարում, ավելի ստույգ՝ 1248 թվականին, ֆրանսիացի ասպետ Ժուլենիլը, որը Տրանսիայի Սուրբ Լյուդովիկոս թագավորի հետ մեկնել էր խաչակրաց արշավանքի, վկայել է Երուսաղեմ ուխտի գնացող հայ եղբայրների մասին, որոնք ծանապարհին զբաղվել են պարով, նվազով և ակրոբատիկայով: Դեռևս 1862 թվականին Մխիթարյան հայրերն այդ սկզբնաղբյուրը թարգմանաբար ներկայացրել են «Բազմավիճակ» էջերում: «Իշխանին հետ եկան չորս գուսանը ի Մեծ Հայոց, որը եղբարը էին. ասոնք Երուսաղեմ ուխտի կ'երթային, և երեք փող ունէին, որոնց ձայնը երեսին կը զարնէր: Երբ կը սկսէին փողերն ինչեցնել, կարծես թէ լճակէն եկող կարապներու ձայն էր, և

անանկ քաղցր ու շնորհալի ներդաշնակութիւններ կը հանէին, որ լսողը կը իիանար: Իրենք զարմանալի պար մը կը բռնէին. ոտքերնուն տակ տախտակ մը կը բերուիր և իրենք ոտքի վրայ կեցած կլոր կը դառնային, անանկ որ ոտքերնին միշտ տախտակին վրայ կուգար նորէն. երկուքը գլուխնին դէա ի կրնակն ծոած կը դառնային, նոյնպէս անդրանիկն ալ. և երբ որ գլուխը դէա ի առջև դարձել կու տային անոր, կը խաչակնքէր երեսը. որովհետո կը վախէր, որ չըլլայ թէ դառնալու միջոցը վիզը խորտակի»<sup>1</sup>:

Այս փաստը ծանոթ է հայ թանասերներին, թատրոնի և կրկեսի պատմաբաններին<sup>2</sup>: Այս թեմայով գերմանացի բանաստեղծ Կառլ Տրիդրիխ Մայերը գրել է բանաստեղծություն, որն արձակ թարգմանել է Ավետիք Խաչակյանը<sup>3</sup>, միայն թե այս գործում եղբայրները ոչ թե չորսն են, այլ երեքը:

Ինչպես տեսնում ենք, Ժուլենիլը ծակատամարտ չի իիշատակել, սակայն զուգադիպություններն ակնհայտ են. հայ եղբայրներ, որ գնում են Երուսաղեմ և ծանապարհին

<sup>1</sup> Ազգային պատմութեան մասն պարագայք, «Բազմավիճակ», 1862, Ի. տարի, թիվ 1, Ցունուար, էջ 16:

<sup>2</sup> Տես Վ. Թերգիբարյան, «Հայ դրամատուրգիայի պատմություն», 1668-1868, Երևան, Հայպետհրատ, 1959, էջ 22-23; Հենրիկ Հովհաննիսյան, «Թատրոնը միջնադարյան Հայաստանում. պատմության և տեսության հարցեր», ՀԱՍՀ ԳԱ Արվեստի ինստիտուտ, Երևան 1978, էջ 243-244; Գրիգոր Օրդոյան, «Հայ կրկեսային արվեստի անցած ուղին. հնադարից մինչև նորագոյն ժամանակներ», Երևան, «Վան Արյան», 2012, էջ 49:

<sup>3</sup> Ավետիք Խաչակյան, Երկերի ժողովածու վեց հատորով, հատոր 2, Երևան, «Հայաստան», 1974, էջ 284:

պարում են (մի դեպքում նաև փող նվազում): Ճիշտ է, բնագրում չորս եղբայր են, սակայն խոսվում է երեք փողի մասին: Եղբայրները երեքն են ինչպես Մայերի նշված բանաստեղծության մեջ, այնպես էլ “Tres Armenii fraters” երգում, քանի որ գեղարվեստական մշակման մեջ, եղբայրներում ընդունված ավանդությունով ավելի ընդունելի է երեք եղբայրը, քան չորսը:

Ուստիև անհիմն չէ պնդել, որ հենց Ժուլենիլի վկայությունը և կամ Կարլ Տրիդրիխ Մայերի բանաստեղծությունն է 20-րդ դարի վերջին ֆրանսի-



ացի հեղինակներին ներշնչել գրելու “Tres Armenii fraters” երգը՝ օժտելով այն նոր մոտիվով՝ հայ թափառական արտիստներին ներկայացնելով որպես հաշտություն սերմանողներ, այդպիսով նաև արվեստին վերագրելով խաղաղադարեր բնույթը: «Երուսաղեմ. հազարամյակի առեղծվածը» ալբոմի հեղինակները ներշնչվել են միջնադարյան իրականությունից և, մասնավորապես, Սուրբ քաղաքին վերաբերող իրողությունից, իսկ հայ եղբայրներին առնչվող պատմական վկայությունը մի գտնված, հարմարագույն այուժե է սույն համատեքստում:



Արքայական կորբայի թույնը բաղկացած է 20 տեսակի տարբեր թույներից:



Վիրուսաբանների գնահատմամբ՝ վիրուսների ընդհանուր թիվն աշխարհում 10 քվինտիլիոն է՝ թիվ, որն արտահայտվում է 1 թվանշանով և դրանից հետո 31 հատ զրոյով:



Ասցյալ դարի կեսերին 1 կգ թուլյա արտադրելու համար օգտագործվում էր 170 լ ջուր, իսկ այժմ՝ 10 լ:



Մարդկության կեսն այժմ խոսում է աշխարհի 20 տարածված լեզուներից մեկով՝ չինարեն, արաբերեն, հինդի, անգլերեն, իսպաներեն, պորտուգալերեն, բնագալերեն, ռուսերեն և ևս մի քանի լեզվով:




Արքայականներից ստացված տվյալների համաձայն՝ աշխարհում կա 2000 քառ. մ-ից ավել մակերեսով 117 միլիոն լիճ, որոնք միասին գրաղեցնում են

5 միլիոն քառ. կմ, այսինքն՝ սառուցից ազատ ցամաքի 3,7 %-ը:



Ինդոնեզիայի Սուլավեսի կղզու մի քարանձավում հայտնաբերվել են քարանձավային գեղանկարչության ստեղծագործություններ, որոնց տարիքը շուրջ 40.000 տարի է: Մինչ այժմ այդքան հին նկարներ հայտնաբերվել են միայն եվրոպական քարանձավներում:



Առողջապահության համաշխարհային կազմակերպության վիճակագրության համաձայն՝ 1990-ից մինչև 2012 թթ. կյանքի համաշխարհային միջին տևողություն աճել է 6 տարով: Ըստ որում առանձին երկրների միջև առկա տարբերությունը շատ մեծ է. Ճապոնիայում այդ ցուցանիշը գերազանցել է 80 տարին, իսկ աֆրիկյան 9 երկրներում այն 55 տարուց ցածր է:



Մեկ տարվա ընթացքում ամբողջ աշխարհում ինքնաթիռից օգտվում են ավելի քան 3 միլիարդ ուղևորներ: Աշխարհի օդանավակայաններում յուրաքանչյուր 3 վայրկյանը մեկ օդ են բարձրանում կամ վայրէջք են կատարում երկուական մարդատար ինքնաթիռներ:




Թոքերի քաղցկեղով հիվանդացած մարդկանց շուրջ քառորդ մասը երբեք չի ծխել կամ կյանքում ծխել է 100-ից պակաս գյանակ:



Շոտլանդացի աստղագետների հաշվարկների համաձայն՝ մեր Գալակտիկան կրկնակի թերթ է մեզ ամենամոտ գալակտիկայից՝ Անդրոմեդի միգամածությունից, որն ունի գրեթե նույն չափերը և կառուցվածքը: Գիտնականները ենթադրում են, որ այստեղ ավելի շատ մութ նյութ կա:



Հստ վերջին գնահատման՝ մարդն ունի 19000 գեն: Մարդու գենոմի վերծանման ծրագիրն սկսվելուց հետո նախնական գնահատականը 100.000 էր (1990 թ.), բայց հետագայում տվյալները բազմիցս վերանայվել են ունի կրծատում:



# ԳԵՎՈՐԳ ԶԱՀՈՒԿՅԱՆ ԲԱՆԱՍՏԵՂԸԸ

ԿԱՐԻՆԵ ԱՌԱՋԵԼՅԱՆ

ԳԱԱ լեզվի ինստիտուտի  
գիտաշխատակից



Ա կանավոր լեզվաբան, ակադեմիկոս Գևորգ Զահուկյանի անունը քաջածանոթ է մտավորական հանրությանը. ԳԱԱ լեզվի ինստիտուտի բազմամյա ու բազմարդյուն տնօրեն, հեղինակ բազմաթիվ մենագրությունների, դասագրքերի, գիտական հոդվածների: Նրա գիտամանկավարժական գործունեության մասին շատ է խոսվել ու դեռ պիտի խոսվի: Այս ամենով հանդերձ՝ նրա տաղանդն ուներ մեկ այլ, քերին հայտնի, թաքնված կողմ՝ բանաստեղծը: Այս հոդվածում պիտի փորձենք համառոտ ներկայացնել Զահուկյանի բանաստեղծական աշխարհը:

Ինչպես նշել է մեծ գիտնականը, իր կյանքում ի թիվս այլոց, կա մի արժանահիշատակ տարեթիվ ևս՝ 1935 թվականը, «Երբ,— գրում է նա,— սկսվել է իմ բանաստեղծական կյանքը: Ճիշտ է, եղել են ավելի վաղ (7–8 տարեկանից) փորձեր, բայց 1935 թվականից ես պարբերաբար բանաստեղծություններ եմ գրել՝ առանց դրանք հրատարակելու: Իսկ ինչո՞ւ չեմ հրատարակել: Կյանքիս երիտասարդ տարիները համընկել են ստալինյան բռնապետության շրջանին, երբ իմ գրած բանաստեղծությունները կարող էին որակվել որպես «անկումային տրամադրությունների արտահայտություններ», և

երբ իշխում էր ինձ համար ատելի ջատագովական պոեզիան, որին տուրք են տվել նույնիսկ մեր նշանավոր բանաստեղծները: Որպեսզի խուսափեմ դրանից և խղճիս դեմ չգնամ, ես այդպես էլ չտպագրվեցի»<sup>1</sup>: Թեև կային մարդիկ, որոնք փորձում էին համոզել:

Մեծ լեզվաբանին համոզելու ձանապարհին «Առարյալ» թերթը 1997 թ. առաջին համարում տպագրում է հարցագրույց իր՝ Զահուկյանի հետ և ընթերցողին խոստանում նոր «գրական» հանդիպում: Լրագրողի այն հարցին, թե «գեղարվեստական գրվածքներ ունե՞...», Զահուկյանը պատասխանում է. «Այո՛, բանաստեղծություններ, որոնք թերևս կարելի է և հրատարակել առանձին գրքով»<sup>2</sup>:

Գիրքը լույս տեսավ 2001թ. «Բանաստեղծական գիրք» խորագրով և անմիջապես իր վրա սևուեց բազմաթիվ մտավորականների ուշադրությունը: Իր քնարերգության առաջին անաշառ քննադատը եղավ ինքը՝ Գևորգ Զահուկյանը և գրքի առաջաբանում նշեց. «Ընդառաջելով իմ բարեկամներին՝ ես որոշեցի ընթերցողի դարին հանձնել տարիների իմ բանաստեղծական վաս-

1 Գևորգ Զահուկյան, Բանաստեղծական գիրք, Ե., 2001, էջ 3: Այսուհետև այս գրքոց կատարվլող մեջբերումների էշերը կնշվեն շարադրանքում՝ փակածների մեջ:

2 Մարդկային ոչինչ խորթ չէ ինձ, «Առարյալ», Ե., 1997, N 1:

դրակը, հաճախ անթվակիր, խոնացած թերթերի վրա զրված, դարբեր ժամանակների հետաքրքրությունների կնիքը կրող, լավ և, գուցե, ոչ այնքան լավ, բայց ոչ վասր: Տարիների հեռվից ես ավելի քննադատաբար եմ նայում իմ վաստակին, բայց դրանով հանդերձ զգնում, որ դրանց կորուսն, այնուամենայնիվ, ինձ համար (թերևս, ոչ միայն ինձ համար) ցավալի կլիներ: Անթվակիր այն բանասպելությունները, որոնց ժամանակը ես գոնե մոլորապես կրահում էի, դրված են մոլոր ձշգրկությամբ, մնացածը զետեղված է վերջին էջերում: Ես իմ կյանքում ծանոթացել եմ արևմտյան և արևելյան ամենապարբեր երկրների պոեզիային և այս կամ այն չափով կրել դրանց ազդեցությունը, բայց իմ պոեզիան, այնուամենայնիվ իմ պոեզիան է: Դա նոյնպես եղել է իմ կյանքը, և, երևի, առանց դրա իմ կյանքի պարկերը թերի կլիները» (4):

Զահուկյանի քնարերգության մեջ կարելի է առանձնացնել թեմատիկ մի քանի հիմնական ուղղություններ՝ հայրենասիրական, քաղաքացիական, խոհափիլխոփայական, մայրագրություն, սակայն ճշշող մեծամասնությամբ Զահուկյանի քնարերգության հիմքն ու առանցքը սիրերգությունն է: Բանաստեղծական իր բոլոր դրսորումներում, սակայն, տեսանելի է Զահուկյան անհատը՝ իր խորը մարդկային և խորը դրամատիկ նկարագրով: Նա իր դարաշրջանի մարդն է՝ իր ժամանակի, սերնդի, հոդի ճսունդը, նախնաց արժեհամակարգը կրողը: Իբրև այդպիսին, նրան, անշուշտ, խիստ հարազատ են հայրենասիրական զգացումները, որոնք իրենց վառ արտահայտությունն են գտել «Հեռավոր երկնքում շողացող ոսկի ամպ» տողով սկսվող բանաստեղծության մեջ, որտեղ Հայրենիքը և մանկության երազ ու լուսեղն հերթաք է, և նոր հույսերի ու տենչերի մարմնացում՝ միշտ սրբազն ու նվիրական:

*Դու որպես վառ փարոս ինձ կանչում ես հիմա երգերով մեղմօրոր, քարերով հնամայ, ու ծխոսմ է նորից ծխանին քո ինը տան, իմ պայծան հայրենիք, իմ անոնց Հայասպան... (167)*



Հայրենասիրական զգացումներին միահյուսվում է քաղաքացիական պարտքի խորը գիտակցումը և ծնունդ տալիս «Քառասունհինգի սերունդը» բանաստեղծությանը: Այն գրվել է 1990 թ., և յոթանասանամյա հեղինակը փորձում է հետադարձ հայացք նետել և արժեվորել իր ու նաև իր՝ քառասունհինգի սերնդի անցած ուղին, գնահատել նվաճումները, ձեռքբերումներն ու կորուստները. ստեղծվում է զարմանալի հակադրություն: Որքան մեծ է նվաճումը, որքան մեծ է աշխարհին, հայրենիքին ու մարդկությանը մատուցած ծառայությունը, այնքան չգնահատված ու անտեսված է անհատը ու նաև սերնդը, որն իր միխթարությունն է գտնում գործի անմահության և ապագայում գնահատված լինելու գաղափարի մեջ.

*Հաղթանակ դարած, բայց պարտված կյանքում, Հարվածներ կրած, բայց չեկած ծնկի՝ Կվարձապրվենք միայն զայրեն Սենք՝ զավակներս քառասունհինգի: (184)*

Զահուկյան բանաստեղծի քնարական հերոսը որդիական ամենաշերմ սիրով ու քնքությամբ է հիշում մորը.

*Բնչքան ցավեր դարար քո մայրական սրբում, Ների՛, մայր իմ, ների՛ քո մեղավոր որդոս: (176)*

Ինչպես արդեն նշեցինք, Զահուկյանի քնարերգության մեջ իշխող թեման սերն է: Թեմա, որ ինը է ու միշտ նոր, արվեստագետի համար միշտ արդիական: «Մարդկային ոչինչ խորթ չէ ինձ»,՝ մի առիթով ասել է Զահուկյանը. Նույնն է պարագան Զահուկյանի հերոսի համար: Եվ հեղինակը նրբուն բացահայտում է նրա հոգեվիճակի փոփոխությունները, ուրախությունն ու տրտմությունը, երջանկության հույսն ու սպասումը, կորստի ցավը, հուսահատությունն ու տառապանքը, սերն ու նույնիսկ ատելությունը: Սիրո մեծ զգացմունքի մասին հեղինակը երբեմն խոսում է շատ պարզ, իրերը կոչելով իրենց անուներով, ինչից, սակայն, ամենին չեն տուժում արտահայտչականությունն ու հուզականությունը, ինչպես.

Մեկի հետ անկեղծ լինել եմ ուզում,  
Մեկին իմ բոլոր վշտերը պարունակում են,  
Մեկի հետ շնչել կյանքի երազում,  
Մեկի հետ խնդալ, մեկի հետ դրսմել... (112)

Երբեմն խոսքը տեղափոխում է իրականի սահմանագծից այն կողմ, ուր մեր առջև պարզվում է որոնող և տառապող հոգին.

Ծովում խալար, և սիրավառ փերիներ  
Կանչում են հոր, լուսափրիոր հեռուներ:

Ծովը մընեմ, այնքեղ գընեմ իմ փերուն,  
Իմ ուկեծամ հավերժական սիրուհուն... (11)

Երբեմն էլ գաղափարն արտահայտում է պատկերավորման որևէ լեզվական միջոցով՝ փոխաբերության, շրջասության և այլն՝ առանցքառ հիշատակելու.

Դու քեզնով զրադշած  
Չդեռապ ներքւում,  
Որ իմ սիրուն էր թաղված  
Քո ուրիշ հեգիքերուն: (167)

Երբեմն բանատեղօր սերը գրում է մեծատառերով՝ սրանով ավելի ընդգծելով նրա դերն ու կարևորությունը բառաշղթայում.

«Միթե չի հասկանալու այդ աղջիկը, որ սուր են բոլոր խոսքերը, և իրական է միայն Սերը՝ հավերժական Սերը, որ երգն է երգում կյանքի բոլոր ոսղիների վրա... (155):



Ուրիշ դեպքում, բացի մեծատառով գրելուց, բառն առնում է չակերտների մեջ՝ ստեղծելով վերնագիր խոսքաշարում. «Այս, անցած է հավելու այն լուսեղն երգը, որ հյուսեցինը ես ու դու մեր ամենայութիւն ներշնչման ժամին և անվանեցինը «Սեր»» (146):

Մեկ այլ դեպքում դարձյալ մեծատառով է գրում սերը, սա, կարելի է ասել, ձռն է սիրուն, սիրո ջահուկյանական ըմբռնման կիզակետը. «կանոք քեզ, հավերժական Սեր, կանոք քեզ, խորհուրդ քերկրաշող գանցանքի» (110):

Զափածո խոսքում այս և այլ թեմաների արծարծման համար հերիխնակը դիմում է ձևի բազմազանության՝ նախընտրելով բանատեղծության, ինչպես նաև բանատան միանգամայն տարրեր տեսակներ: Իհարկե, ճնշող մեծամասնությամբ նա նախապատվությունը տվել է բանատեղծական ամենից հաճախակի կիրառություն ունեցող քառատող տանը, այստեղ էլ, սակայն, գրելով տարրեր երկարության՝ երեքից մինչև տասնվեց վանկանի, ինչպես նաև անհավասար տողերով ու հանգավորման տարրեր եղանակներով: Քնարերգության մեջ լայն տարածում գտած խաչաձև, օղակաձև, կից և այլ հանգավորումների կողքին Զահուկյանը գրել է նաև այլ սկզբունքներով: «Այս անլույս աշխարհի հերիաթում» տողով սկսվող բանատեղծության մեջ նա դիմել է տողի կրկնության ոճական հնարանքին: Բանատների առաջին երեք տողերը միմյանց հետ հանգ են կազմում, իսկ չորրորդը, որ անհանգ է, նույն է բոլորի համար և խտացնում է հիմնական ասելիքը.





*Այս անլոյս աշխարհի հերիաքում*

*Իմ սրբից ալ արյոն է կաթում,*

*Իմ հոգին դեպի մահ է թռչում,*

*Այս, ինչո՞ւ, չզիկում, թե ինչո՞ւ... (164)*

Հայ բնարեգության մեջ բանաստեղծական բառատող տան բոլոր տողերը իմաստականում հավասար վանկեր են ունենում, և հակառակը թիւ է հանդիպում: Այսպիսի դեպքեր նույնպես առկա են բանաստեղծական գրքում, ինչպես «Արցունքով է լցված հավելու» տողով սկսվող բանաստեղծության մեջ, որտեղ տողերն անհավասար են, բայց բանատունը ոիթմական ամբողջություն է՝ շնորհիվ խաչաձև հանգավորման և ութ ու իննգ վանկանի տողերի հավասար հաջորդականության:

*Արցունքով է լցված հավելու*

*Իմ անլոյս հոգին,*

*Իմ մարրափայլ սերը դավելու*

*Սևաչյա մի կիս: (132)*

Քառատողը կարող է լինել ինքնուրույն բանաստեղծություն, որի վառ օրինակը քառյակն է: Զահուկյանը գրել է քառյակ խաչաձև, սովորական հանգավորմամբ, տասներկու վանկանի տողերով.

*Նա՛ ցնորդ անցավոր, նա՛ հերիաք մոռացված,*  
*Նա՛ հավերժ խավարած իմ կյանքի զիշերում,*  
*Նրա լուրջ աչքերում ողջ աշխարհն էր բացված,*  
*Բայց անորջ է հիմա միմիսյն հուշերում: (79)*

Զահուկյանը գրել է բանաստեղծություններ երկտող, վեցտողանի, ութտողանի, նաև տարբեր մեծության տներով: Վերջիններից է «Պատրանք» ուտանավորը, որն սկսվում է բառատող տնով, սրան հաջորդում է, եթե կարելի է այդպես ասել, տասնչորս տողանի տուն, ապա դարձյալ բառատող: Նրա արձակ բանաստեղծությունները մեծավ մասամբ սիրային բովանդակություն ունեն: Ինչպես հայտնի է, «Ազատ ուտանավորի մեջ մեծ մասամբ չի պահպանվում ոիթմի՝ մեզ հայտնի պայմաններից (վանկերի և շեշտերի քանակը, նրանց դասավորությունը) և ոչ մեկը: Ուտանավորը կառուցված է շատ ազատ՝ զգալիորեն մոտենալով արձակ խոսքին: Այստեղ զգալիորեն մեծանում է յուրաքանչյուր տողի շարահյուսական և արտասանական ինքնուրույնությունը: Ամեն մի տող դառնում է մի առանձին շարահյուսական միավոր (հաճախ՝ ավարտված միտք-նախադասություն), որն ընդգծված դադարով բաժանվում է մյուսներից»<sup>3</sup>:

Զահուկյանի ազատ ուտանավորները հիմնականում խոհափիլխոփայական գործեր են, որոնք արտահայտում են ինչպես հեղինակի, այնպես էլ հեղինակին քաջածանոթ՝ զանազան իմաստափրական ուսմունքներում առկա մտքեր ու ծշմարտություններ, ինչպես. «Մի՛ գու երկու պարիժ նոյն հանցանքի համար, Անհիշաշար եղի՛ր մայր բնության նման», «Քեզ առաջնորդ ընպրի՛ր իղձի արևն արթուն, Որ ժանգ չապրի երեկը քո ուկելիայլ սրբում», «Բարի նախանձով միայն նախանձիր, Ոչ թե կործանի՛ր, այլ գերազանցի՛ր» (78) և այլն:

<sup>3</sup> Էդ.Զրբաշյան, Գրականության տեսություն, Ե., 1980, էջ 303:

Ազատ ոտանավորի սկզբունքով են գրված նաև Դամրանագրերն ու Հյուսիսգերմանական դամրանագրերը. «Այս հողի գույք հանգչում է մի անհաջող ողի: Մահից առաջ ընդդեմ մահիան նաև մարտեց, Մահից հետո՝ հանուն անմահության» (82) կամ «Նա մարդում ընկապ հերոսի մահով, Ու թեպելու մարմինն անզօս է հար, Բայց նրա հոգին Վալիալլայի մեջ իր հավերժական խնջույքն է անում» (83) և այլն:

Այստեղ առկա է անդրադարձ սկանդինավյան դիցարանությանը և միֆին Վալիալլայի դոյակի մասին, որտեղ, համաձայն հավատալիքի, Վալկիրիաներն ուղեկցում էին ռազմի դաշտում զոհված հերոսների հոգիներին:

Զահուկյանի բանաստեղծական գրքում հանդիպում ենք նաև գաղելների: Ահա մի օրինակ.

*Դու լուսեղեն վառ անոն, բայց ինչ օգուտ ինձ համար,*

*Դու սիրո ծով մի անհոն, բայց ինչ օգուտ ինձ համար:*

*Դու աշխարհը լցորեցիր քո հրաշրով դյուրական, Սեր կա ամեն անկյունում, բայց ինչ օգուտ ինձ համար... (136)*

Հայ գրականության մեջ գաղելներ գրել են աշուղ-բանաստեղծներ՝ Սայաթ Նովան, Զիվանին, նաև Վահան Տերյանը, Եղիշե Չարենցը և ուրիշներ: Հետաքրքրական է, որ ինչպես մեծ բանաստեղծ Եղիշե Չարենցն է գաղել նվիրել մորը՝ այն անվանելով «Միրս համար գաղել», այնպես էլ Զահուկյանը, որն իր բանաստեղծությունն անվանել է «Գաղել մայրական»:

Զահուկյանն արել է տրիուսի մի քանի բավական հաջողված փորձեր: Հայ գրականության պատմության մեջ տրիուսի անգույքական վարդես էր Վահան Տերյանը: «Տրիուսը բաղկացած է ութ տողից: Առաջին տողը նույնությամբ կրկնվում է իբրև չորրորդ և յոթերորդ տողեր, իսկ երկրորդ տողը՝ իբրև ութերորդ տող»<sup>4</sup>.

*Ես քեզ եմ սիրում, իսկ դու՝ ուրիշին, Եվ գիրտեմ՝ հոգոս փրկություն չկա, Ես իզուր այս իւնք աշխարհը եկա, Ես քեզ եմ սիրում, իսկ դու ուրիշին: Իւնք է աշխարհը՝ երկուսի բաժին Սկրենծել է նա լոկ մի աղջկա. Ես քեզ եմ սիրում, իսկ դու՝ ուրիշին, Եվ գիրտեմ՝ հոգոս փրկություն չկա: (81)*

<sup>4</sup> Էղ. Զրբաշյան, Հ. Մախչանյան, Գրականագիրական բառարան, Ե., 1972:

Զահուկյանը գրել է նաև բանաստեղծական հազվագյուտ հանդիպող կայուն ձևերով՝ ոռնդել և վիլանել: Սրանց հազվագյուտ լինելու մասին խոսում է թեկուզ այն, որ հայկական գրականագիտական դասագրքերում և բառարաններում վկայված չեն: Հայ քնարերգության պատմության մեջ այս ձևերով գրված բանաստեղծություններ մեզ գոնե անծանոթ են, ոուս գրականության մեջ վիլանելի փորձեր արել է Վալերի Բրյուսովը, ոռնդելը հանդիպում է հիմնականում թարգմանական գրականության մեջ:

«Ո՞նդելը հնագոյն ձև է, այն գրիուելի յուրօրինակ լարդերակ է, ավարդուն բանաստեղծություն՝ բաղկացած լաւաներեր լոռից: Առաջին երկու լոռերը կրկնվում են որպես յոթերորդ և ութերորդ, իսկ առաջինը՝ նաև որպես լաւաներերորդ, վերջին լոռը»<sup>5</sup>:

Զահուկյանի ոռնդելը կառուցված է դասական սկզբունքով, վերջինս «Ներկայացնում է հորինվածքային պարուրագիծ՝ կանոնականացված հատուկ ձևափոխություններով... Այստեղ անհրաժեշտ է ընդգծված շարահյուսական դադար չորրորդ և ութերորդ տողերից հետո՝ նշելու բանատան սահմանները, քանի որ բանաստեղծության բոլոր երեք մասերը ագուցված են նույնանման հանգերով»<sup>6</sup>:

Զահուկյանի ոռնդելն ունի մեկ տարբերություն. բանաստեղծությունն ավարտվում է ոչ թե առաջին տողով, այլ երկուողով՝ դրանով շատ ավելի ընդգրկուն ու ամբողջական դարձնելով ասելիքը.

*Ես ապրեցի դյուրական  
Ցնորների աշխարհում: (81)*

«Վիլանելը հնագոյն իտալական ձև է, «գեղջկական» երգ (վիլան նշանակում է ձորտ), որը ներմուծվել ու տարածվել է հնագոյն ֆրանսիական քնարերգության մեջ՝ վերագտնվելով XIX դարավերջում, իսկ ոուս գրականության մեջ արտացոլված է թարգմանությունների ու նմանակումների միջոցով: Այն կազմված է անսահմանափակ թվով եռատողերից, որոնց բոլորի երկրորդ՝ մեջտեղի տողերը միմյանց հետ հանգ են կազմում: Առաջին եռատողի առաջին և երրորդ տողերը միմյանց հետ հանգ են կազմում, հետո հա-

<sup>5</sup> Գ.Ա.Շենգելի, Տեխնիկա ստիխա, Մ., 1960, ստ. 296.

<sup>6</sup> Վ.Մ.Կիրմունսկի, Տեօրիա ստիխա, Լ., 1975, ստ. 527.



շորդաբար ավարտում յուրաքանչյուր նոր եռատող՝ պահանջելով առաջին տողի համար համապատասխան հանգ: Այսպիսով՝ երկրորդ եռատողն ավարտվում է առաջինի առաջին տողով, իսկ երրորդը՝ դրա երրորդ տողով, չորրորդը՝ դարձյալ առաջինի առաջին տողով, ինչն զերորդը՝ նորից երրորդով և այսպես շարունակ: Վերջին տունը պետք է ավարտվի առաջինի առաջին տողով, որին հաջորդում է առաջինի երրորդ տողը, այսինքն՝ վերջին տունը դառնում է քառատող: Այսպիսով, բանաստեղծությունն ունենում է միայն երկու հանգ, ինչն այս ձևը դարձնում է բավական դժվար»<sup>7</sup>:

Հայ գրականության մեջ վիլանելի օրինակ մեզ անհայտ էր, և ահա բանաստեղծական գրքում գտնում ենք մի նորը, լիրիկական բանաստեղծություն՝ վերնագրված «Վիլանել».

*Այս, իմ թռչնակը թռավ,  
Որ հավիպյան հեր չզա,  
Ուկե թնարս դարավ:*

*Վիշպր թռեց ինձ գրավ,  
Թռեց սրբիս լուս վկա,  
Այս, իմ թռչնակը թռավ... (85)*

Բանաստեղծական գրքում հանդիպում ենք գիշերերգի, մահերգի, նաև հեղինակի գրչին ոչ այնքան բնորոշ երգիծական բանաստեղծության, որն անվանել է «Բանաստեղծական իրաժեշտի երգ» կամ պարողիա և փորձել է վերարթեվորել անցած կյանքի և ստեղծագործական ուղին, մի պահ աշխարհին նայել այլ տեսանկյունից.

*Հերիք է, դարձնենք կռնակը  
Երգերի հանդես սենդիմենդալ,  
Հերիք է, արդեն ժամանակն է  
Բոյորի հետ ապրել ու խնդալ... (87)*

<sup>7</sup> Գ.Ա.Ռենգելի, նշվ. աշխ., էջ 292:

Ինչպես կարելի է այս համառոտ քննությունից եզրակացնել, ականավոր լեզվարան Գևորգ Զահուկյանը լուրջ հայտ է ներկայացնում որպես բանաստեղծ: Իր բանաստեղծական գրքում նա դիմել է բովանդակության ու ձևի մեծ բազմազանության՝ արծարծելով միանգամայն տարրեր թեմաներ միանգամայն տարրեր ձևերով ու եղանակներով: Բանաստեղծական սովորական համարվող տեսակների կողքին գրել է բնարերգության պատմության մեջ մշակված կայուն, նաև խիստ հազվադեպ հանդիպող ձևերով՝ կրելով հայ և համաշխարհային մշակույթի, գրականության, վիլխովայության ազդեցությունը, երբեք, սակայն, չկրնելով, չնմանակելով, այլ ստեղծելով իր, ուրույն զահուկյանական բանաստեղծական աշխարհը:

Եվ անշուշտ բանաստեղծությունը նրա համար չի եղել ազատ ժամանակն անցկացնելու գեղեցիկ միջոց կամ պարապ վախտի խաղալիք, այլ կենսակերպ, կյանքի մի մաս, ինչի մասին անկեղծորեն խոստովանել է ինքը՝ մեծ գիտականը՝ «Եթե կյանքը Ձեզ նորից տրվեր, այսօր նոյն ճանապարհը կընտրեիք» հարցին պատասխանելով. «Կարծում եմ ո՞չ: Խորհրդային շրջանը մենագաղափարախոսական էր: Եթե ես վիլխովայության բնագավառում լինեի, մարքսիզմից բացի ուրիշ ի՞նչ սկզբունքներով պիտի առաջնորդվեի: Հասարակական գիտությունների մեջ նոր խոսք ասել չէի կարող, բացի լեզվանությունից, որը համեմատաբար չեզոք բնագավառ է, և որն էլ դարձավ սեփական գաղափարներն ու սկզբունքներն արտահայտելու լավ ճանապարհ: Իսկ ըստ Էության, ժամանակին մտածում էի գրող կամ բանաստեղծ դառնալ: Ու երսի հենց այլ ճանապարհն էլ ընտրեի»<sup>8</sup>:

<sup>8</sup> Մարդկային ոչինչ խորք չէ ինձ, «Առաքյալ», Ե., 1997, N 1:

# ԳԵԼԵՐԱԼ- ԼԵՅՏԵՆԱՆՏ ՄՈՎՍԵՍ ՍԻԼԻԿՅԱՆ



ՌՈՒԲԵՆ ՍԱՀԱԿՅԱՆ

պատմական գիտությունների  
դոկտոր

այստանի առաջին հանրապետության կայացման գործում անգնահատելի է հայ զինվորների և սպաների դերը: Նրանք 1918 թ. մայիսյան հերոսամարտերի ժամանակ կասեցրին օսմանյան զորքերի առաջխաղացումը և փրկեցին հայությունը վերջնական կործանումից: Հայ զինվորականների թվում էր գեներալ Մովսես Բաբայի Սիլիկյանը (Միհսեյ Սիլիկով, 1862-1937): Նրա անունը մշտապես կապված է 1918-1920 թթ. իրադարձությունների հետ և գեներալի գործունեության այդ շրջանը գրեթե ամբողջովին ուսումնասիրվել է պատմաբանների կողմից: Սակայն անհայտ են մնացել Մ. Սիլիկյանի մինչպատերազմյան և հետպատե-

րազմյան կյանքի մասն բամանել եր, որոնք կցանկանանք ներկայացնել ընթերցողին:

Ապագա գեներալը ծնվել է Ելիսավետպոլի (Գանձակ) նահանգի Նուխի գավառի Վարդաշեն գյուղում, ազգությամբ ուտի է, իսկ հավատով՝ Հայ առաքելական: Ամուսնացած էր Նատալյա Ալեքսանդրովնայի հետ, որոին՝ Գեորգին, մասնագիտությամբ ձարտարագետ էր:

1882 թ. օգոստոսի 28-ին Մ. Սիլիկյանն ընդունվել է Մոսկվայի Պահպանական գիմնազիան, որն ավարտել է 1884 թ. օգոստոսին՝ ենթապրոտչիկի կոչումով: Ապա



Մովսես Սիլիկյան

<sup>1</sup> Այս իրադարձությունների անմիջական ականատես Ա-Դոյջ (Հովհաննես Տեր-Սարտիրոսյանի) գնահատմամբ, Մ. Սիլիկյանը, Դանիել Բեն-Փիրումյանը և Դրոն (Դրաստամատ Կանայան)՝ Սուլը Երրորդությունն էին, որոնք Մայիսյան հերոսամարտերում կանգնեցրին թուրքական բանակը:



ավարտել է Ալեքսանդրովյան III զինվորական ուսումնարանը, իսկ 1904-ին՝ Օրանիենբաումի (Լոմնոսով) սպայական հրածգային դպրոցը, որից հետո նրան շնորհվել է կապիտանի սպայական աստիճան:

1914 թ. Մ. Սիլիկյանին շնորհվում է գնդապետի աստիճան, և Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին նա նշանակվում է հրամանատար Կովկասյան VI հրածգային գնդի, որը մտնում էր Կովկասյան II հրածգային բրիգադի, ապա դիվիզիայի կազմի մեջ: Վերջինիս հրամանատարն էր գեներալ Թովմաս Նազարենյանը (1855-1931):

Առաջին աշխարհամարտի ոռու-թուրքական (Կովկասյան) ռազմածակատում Մ. Սիլիկյանի մարտական ուղու մասին հիմնական տեղեկությունները պահպանվել են Թ. Նազարենյանի անտիպ հուշերում և նրան գրած նամակներում:

Պատերազմի սկզբում VI հրածգային գունդը մարտական գործողությունները մղում է Հյուսիսային Պարսկաստան ներխուժած օսմանյան զորամասերի և համբդեական գնդերի դեմ:

1915 թ. դեկտեմբերին Կով-

դիրքեր: Հունվարի 10-ին Կովկասյան I բանակային կորպուսի հրամանատար, գեներալ Պ. Կալիտինի հրամանով VI հրածգային գունդը՝ մեկ մարտկոցով, արագացված երթով Ալաշկերտի հովտից շարժվում է Էրզրում մասնակցելու քաղաքի գրավման գործողությանը: Հունվարի 22-ին գունդը տեղակայվում է Էկիրաստ գյուղում, իսկ հունվարի 24-ին՝ Հասան Կալեում, որպես բանակային պահեստագոր:

Էրզրումի գրավման օրը՝ 1916 թ. փետրվարի 2-ի լույս 3-ի գիշերը VI հրածգային գունդը մտնում է քաղաքը: Գնդապետ Մ. Սիլիկյանը նշանակվում է Էրզրումի գինվորական պարետ: Նա ձեռնամուխ է լինում քաղաքում կարգուկանոն հաստատելուն:

Էրզրումի հայերի տարագրության ժամանակ տեղական երիտրուրբական իշխանությունները հայերից բռնագրավել էին մեծ քանակությամբ գույք, որը կենտրոնացրել էին քաղաքի Մ. Աստվածածին եկեղեցում, սակայն չին հասցել ամրոջությամբ տեղափոխել: Այդ մասին գնդապետը հեռագ-

կասյան բանակի հրամանատար, գեներալ Ն. Ցույենիչը սկսում է Էրզրումի (Կարինի) գրավման գործողությունը: Թ. Նազարենյանի դիվիզիային և նրա կազմում գտնվող VI հրածգային գնդին, ի թիվս մյուս զորամասերի, հանձնարարված էր ապահովել գործողության գաղտնիությունը, հաղորդակցության ուղիները պաշտպանել գլխավորապես քրդական հարձակումներից:

1916 թ. հունվարի 5-ին գնդապետ Մ. Սիլիկյանը Թ. Նազարենյանին ուղղված գեկուցագրում հայտնում է, որ գունդը հասել է Դայար և զբաղեցրել



րում է Թիֆլիսի քաղաքագլուխ Ալ. Խատիսյանին և խնդրում է վստահելի մարդ ուղարկել, որպեսզի հսկի կամ տնօրինի եկեղեցում գտնվող ապրանքները: Այս հեռագիրը առիթ է հանդիսանում, որպեսզի Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ Ե-ն պաշտոնապես դիմի Կովկասյան բանակի հրամանատարությանը՝ գույքի հետ կապված խնդիրը տնօրինելու համար:

1916 թ. մարտի վերջին Մ. Սիլիկյանի գունդը տեղակայվում է Բիթլիսում (Բաղեշ),

թյան աշխատակիցներ Կարո և Արմեն Սասունիները և Հ. Մանուկյանը՝ ցեղասպանությունից ողջ մնացած բնակչությանն օգնություն ցույց տայու և քրդական գերությունից հայերին ազատելու համար: Կ. Սասունու խմբին հանձնարարված էր քրդական գերությունից ազատել հայերին: Քրդերը հայերին՝ հիմնականում կանանց ու երեխաներին, ազատում էին ուսական մեկ ոսկու դիմաց, ուստի Կ. Սասունին առաջարկում է ոուսական հրամանատարությանը՝

գործողություններ: Սասունցի Մանուկի ղեկավարությամբ 100 հոգուց բաղկացած ջոկատը կարողանում է գերությունից ազատել 3 հազարից ավելի հայերի:

Մ. Սիլիկյանի հրամանատարության ներքո գործել է Դրոյի ենթակայության տակ գտնվող Հայկական II կամավորական խումբը, որը գեներալին հիացմունք էր պատճառել իր մարտական պատրաստվածությամբ, քաջությամբ և կարգապահությամբ: Խորհր-



իսկ ապրիլի սկզբին հրաման է ստանում քաղաքում թողնել երկու գումարտակ ու լեռնային չորս թնդանոթով շարժվել Մուշ, քանի որ վերջինիս ուղղությամբ հարձակվում էին օսմանյան Դարդանելյան VII և VIII դիվիզիաները: Մ. Սիլիկյանը նշանակվում է Մուշ քաղաքի կայազորի պետ: Ինչպես վկայում է իր հուշերում գեներալ Թ. Նազարբեկյանը, այդ ժամանակ Մուշում և շրջակա գյուղերում հնարավոր է լինում գտնել ողջ մնացած 70 հայ կիս և երեսա:

Մուշ են գալիս Կովկասի Հայոց բարեգործական ընկերու-

գեներալ Զ. Միջիվանիին, թույլատրել Խնուսում հայերից կազմակերպել աշխարհազորային խմբեր, սակայն գեներալը թույլատրում է զբաղվել գուտ գաղթականական գործերով: Գնդապետ Մ. Սիլիկյանի խորհրդով՝ նույն խնդրանքով Կ. Սասունին դիմում է 66-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատար, գեներալ ի. Սավիցիկուն: Վերջինս հայերին տրամադրում է գենք, որը տրվում է սասունցիներից և մշեցիներից կազմված մարտական խմբերին, որոնք իրականացնում են որոնողական, ենտախուզական և մարտական

դային տարիներին Թ. Նազարբեկյանին գրած մի նամակում Մ. Սիլիկյանը հետևյալ գնահատականն է տվել Դրոյի խմբին. «Դրոյի դրուժինան՝ դա փառահեղ դրուժինա է, Հայաստանի հպարտությունն ու գեղեցկությունն է»: Խոկ 1928 թ. Թ. Նազարբեկյանին գրած նամակներից մեկում Մ. Սիլիկյանը հետևյալն է հաղորդել. II խմբի քաջագործությունների մասին ինքը գեկուցել է Կովկասյան IV բանակային կորպուսի հրամանատարությանը և Դրոյին ու աչքի ընկած մարտիկներին ներկայացրել է Գեորգիս-

յան խաչով պարզեատրման: Խնչպես վկայում է Մ. Սիլիկյանը. «Հետագայում ես խնացա, որ նրանք (կորպուսի հրամանատրությունը-Ռ.Ս.) մերժել է այդ պարզեաները և խնդրել այլս ներակայացումներ շանել»:

1917 թ. փետրվարյան հեղափոխությունից հետո Մ. Սիլիկյանը նշանակվում է Վանի ջոկատի հրամանատր: Զոկատը կազմված էր երեք շարային գնդերից: Որոշ ժամանակ անց, նա նշանակվում է բրիգադի հրամանատր: Օգոստոսի 22-ին Մ. Սիլիկյանին շնորհվում է գեներալ-մայորի կոչում: Միշն 1918 թ. հունվար գեներալը գտնվել է Վանում, ապա Թիֆլիսի հայոց ազգային խորհրդի հրամանով այլ սպաների հետ գալիս է Թիֆլիս, որտեղ Հայկական կորպուսի հրամանատր, գեներալ Թ. Նազարբեկյանի հրամանով նշանակվում է Արքայացու դիվիզիայի հրամանատր:

1918 թ. հունիսի 4-ի Բաթումի պայմանագրով հայկական զինուժը չախեր է գերազանցեր մեկ դիվիզիայից: Առանձին հայկական դիվիզիան հրամանատր է նշանակվում գեներալ-մայոր Մ. Սիլիկյանը:

1919 թ. մարտին ստեղծվում է ՀՀ բանակի ռազմական խորհուրդը, որի նախագահ է նշանակվում գեներալ-Լեյտենանտ Թ. Նազարբեկյանը: Ապրիլի 24-ին, ի թիվս այլոց, խորհրդի անդամ է նշանակվում Մ. Սիլիկյանը: Հունիսի 1-ին Մ. Սիլիկյանին շնորհվում է գեներալ-Լեյտենանտի գինվորական կոչում:

1918 թ. դեկտեմբերին սկսվում է հայ-վրացական պատերազմը: Գեներալ Մ. Սի-

լիկյանին հանձնարարվում է մարտական գործողությունների ընդհանուր հրամանատրությունը: Նա պետք է հսկողության տակ վերցներ մինչև Խրամ գետը տանող շրջանը: Գետը հանդիսանալու էր հայվրացական սահմանը:

1920 թ. ապրիլին Մ. Սիլիկյանը նշանակվում է Նոր Բայազետ և Դարձագյազ գավառների գեներալ-նահանգապետ: Նա միաժամանակ վարել է Նոր Բայազետ գավառում տեղակայված գորքերի շտարի պետի պաշտոնը: Նրա նշանակման նպատակն էր՝ աջակցել Դրո-



յի ջոկատին՝ անցնել Լեռնային Ղարաբաղ՝ տեղի հայ բնակչությանն աղբքացանական բանակի դեմ մղվող պայքարում օգնելու համար:

Նոր Բայազետում գգալի էր բոլշևիկյան ազդեցությունը: Մ. Սիլիկյանից և նրա սպաներից անսկատ չի մնում բոլշևիկների ակտիվությունը: Գեներալը տեղեկանալով, որ բոլշևիկ Հովհաննես Սարուխանյանը հակապետական լայն քարոզություն է ծավալել՝ նրան արտաքսում է գավառից: Սակայն 1920 թ. մայիսի 7-ին Հ. Սարուխանյանը, չնայած արգելվին, վերադառնում է Նոր Բայազետ:

Մայիսի 10-ին Մ. Սիլիկյանը

Ղարանլուղ (Մարտունի) գյուղում հանդիպում է Հ. Սարուխանյանին, որը հակապետական քարոզություն էր ծավալել բնակավայրում տեղակայված գինվորների շրջանում: Հավանաբար, Մ. Սիլիկյանը փորձել է անձնական հանդիպման ժամանակ համոզել նրան դադարեցնելու հակառավարական քարոզությունը և գործն արյունահեղության չհասցնել: Որպես գեներալ-նահանգապետ՝ Մ. Սիլիկյանն ուներ բոլոր հնարավորությունները Հ. Սարուխանյանին ձերբակալելու համար: Գեներալը, սակայն,

չի դիմում կտրուկ միջցների, որը հնարավորություն է տալիս Հ. Սարուխանյանին 300 զինվորների գլուխն անցած մտնել Ղարանլուղ և ձերբակալել միքանի սպաների, այդ թվում, իրեն՝ Մ. Սիլիկյանին: Վերջինիս կալանումը կատարվում է Հ. Սարուխանյանի անմիջական մասնակցությամբ: «Աշխատավոր»

թերթը հետևյալն էր գրում. Մ. Սիլիկյանի այն հարցին, թե՝ «չ» որ դուք ինձ ազնիվ խոսք տվեցիք բանակին ձեռք չտալ, այ. Սարուխանյան», վերջինս պատասխանել է. «Ես այն ժամանակ ձեզ ստեցի, ընկեր Մ. Սիլիկյան»:

1920 թ. մայիսի 19-ին կեսօրին կառավարական գործը մտնում է Նոր Բայազետ և բանակտիվ ազատում կալանված բոլոր սպաներին: Խնչպես պարզվում է Մ. Սիլիկյանի վկայությունից՝ իր բանտախցիկի դուռն անհայտի կողմից է բաց արվել, որից հետո ինքը թաքնվել է գյուղացիներից մեջի տանը:

1920 թ. դեկտեմբերի 2-ին



Երևանում Հայաստանի Հանրապետության և Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչների միջև ստորագրվում է համաձայնագիր, որով Հայաստանը դառնում է խորհրդային:

Սակայն, խախտելով դեկտեմբերի 2-ի համաձայնագիրը, բոլշևիկները սկսում են բռնությունները: Զերբարակալվում են ՀՀ նախկին կառավարության, սոցիալիստական կուսակցությունների անդամները, բարձրաստիճան զինվորականներ և ուրիշներ: Զինվորականների ձերբակալությունները շարունակվում են նաև 1921 թ. հունվարին: Նրանց ստիպում են Երևանից ոտքով անցնել 170 կմ ծանապարհ մինչև Աղստաֆա, որտեղից գնացքով տեղափոխում են Բաքու, ապա Շայագանի համակենտրոնացման ձամբար:

Զերբարակալվածների թվում էր Մովսես Միլիկյանը: Նա արտավայրից վերադարձում է 1921 թ. սեպտեմբերին և աշխատանքի անցնում շվեդա-

կան «Բալթիկ» ընկերության Վլեսսանդրավոլի (Լենինական, Կումայրի, Գյումրի) մասնաճյուղում՝ որպես հաշվապահ և վաճառող: Ընկերությունում Մ. Միլիկյանն աշխատում է 1,5 տարի և 1923 թ. ծառայության է անցնում «Մերձավոր Արևելքի օգնության ամերիկյան կոմիտեում» կամ Արմենկոմում, որտեղ աշխատում է մինչև 1929 կամ 1930 թթ.: Ամերկոմը զգալի դեր է ունենում հայ գաղթականության և հատկապես որբերի փրկության գործում:

Գեներալ Թ. Նազարբեկյանի անձնական արխիվում պահպանվել են Մ. Միլիկյանի միքանի նամակ, ինչպես նաև մեզ չհասած նամակներից արված քաղվածքներ: Թ. Նազարբեկյանը բնակվում էր Թիֆլիսում, նախաձեռնել էր հուշագրություն, որը վերաբերում էր Առաջին աշխարհամարտի ռուս-թուրքական (Կովկասյան) ռազմածակատում ընթացած մարտական գործողություններին, 1918

թ. Մայիսյան հերոսամարտերին: Մի շարք մարտական գործողությունների, դեպքերի և հրամանատարների վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ ու ճշտումներ կատարելու համար գեներալ դիմել էր Մ. Միլիկյանին՝ խնդրելով օժանդակել այդ խնդրում:

Տեղեկանալով, որ Թ. Նազարբեկյանը քաղվածքներ է կատարում իր նամակներից, Մ. Միլիկյանը պատրաստակամություն է հայտնում ստանձնել այդ աշխատանքը՝ խնդրելով իրեն ուղարկել այդ նամակները և նյութերը:

1927 թ. Մ. Միլիկյանը ձերբակալվում է անվտանգության մարմինների կողմից և օգոստոսին վարչական կարգով արտորվում Դոնի Ռոստով: Հոկտեմբերին նրան թույլատրվում է գալ Երևան: 1935 թ. նոյեմբերի 25-ին Մ. Միլիկյանը կրկին ձերբակալվում է՝ ամրաստանվելով միապետական հայացքների և նախկին դաշնակցական դաշնակցության համականության հայության պահպանության մասին առաջարկությունում:

կան Հրիփսիմե Մուշեղյանի հետ կապ ունենալու համար: Մ. Սիլիկյանին քննիչը հայտնել է, որ Հ. Մուշեղյանի ամուսինը ծառայել է նախկին ՀՀ-ի հակահետախուզությունում: Քննիչը պահանջում է Մ. Սիլիկյանից՝ հաստատել, որ «Բալթիկ» ընկերության երրեմսի աշխատակից Գևորգ Քրմոյանն իրեն 1922 թ. հայտնել է, որ նախկին ՀՀ կառավարությունը նախատեսում է վերականգնել իշխանությունը Հայաստանում և կազմել կառավարություն, որտեղ Մ. Սիլիկյանը վարելու է զինվորական նախարարի պաշտոնը: Գեներալը կտրականապես հերքում է այդ՝ ավելացնելով, որ նման հնարավորություն եղել է 1919 թ., սակայն ինքը հրաժարվել է:

Նոյեմբերի 29-ին տված ցուցմունքում Մ. Սիլիկյանը պարզաբանել է, թե ինչու է որոշ դեպքերում ազգությունը նշել հայ՝ «քանի որ չէին հասկանում, թե ինչ ազգ է ուտին»:<sup>2</sup>

1936 թ. հունվարի 23-ի հարցաքննության ժամանակ Մ. Սիլիկյանը հայտնում է, որ մինչև 1928 թ. նամակագրություն է ունեցել թ. Նազարելյանի հետ, իսկ Հ. Մուշեղյանի հետ ծանոթ է եղել Կարսից, որտեղ նրա եղբայրը ունեցել է լուսանկարչատուն: Վյոլ տիկնոց հետ հաջորդ հանդիպումը եղել է Վանում, որտեղ նա աշխատել է սանիտարական լազարեթում, իսկ Ամերկոնում ծառայելիս ծանոթացել է Վարազդատ Տերյանի հետ: Մ. Սիլիկյանը հերքել է, որ վերը նշված անձանց հետ վարել է հակասորհրդային բնույթի զրոյցներ:

1936 թ. փետրվարի 27-ի որոշման մեջ ՆԳԺԿ-ի քաղա-



քական գաղտնի բաժնի լիազոր Զամյանը, ուսումնասիրելով գեներալի դեմ հարուցված թիվ 4061 գործը, եզրակացրել է, որ բոլոր մեղադրանքները հետաքննությունն ապացուցել է: Լիազորը, սակայն, հաշվի առնելով Մ. Սիլիկյանի տարիքը (74 տարեկան), որոշում է նրան ազատել կալանքից՝ Երևանից չբացակայելու պայմանով, մինչև նրա մասին վերջնական որոշում ընդունվելը:

Մարտի 16-ին ՀԽՍԽ դատախազի տեղակալ Միքայելյանը, քննելով Մ. Սիլիկյանի դեմ հարուցված մեղադրանքները, առանձնացրել է հետևյալները.

1. Նոր Բայազետում կոմունիստաներին հետապնդելը,

2. 1921 թ. արտրից հետո «գերմանոֆիլ» Վ. Տերյանի հետ ունեցած մտերիմ հարաբերությունները,

3. դաշնակցական ընդհատակյա կազմակերպության Կենտրոնական կոմիտեի անդամ Հ. Մուշեղյանի հետ հանդիպելը:

Քննելով վերը նշված հարցերը

Միքայելյանը եզրակացնում է, որ Մ. Սիլիկյանի դեմ հարուցված մեղադրանքներն ապացուցված են և բրեսկան գործը պետք է հանձնել ՆԳԺԿ Հատուկ խորհրդակցությանն առանց դատական կարգի:

Ապրիլի 5-ին, սակայն, պետական անվտանգության լեյտենանտ Սարկիսովը, քննելով Մ. Սիլիկյանի դեմ հարուցված մեղադրանքները, եզրակացրել է, որ դրանք ապացուցվել են մասնակիորեն, ուստի գործը պետք է կարծել՝ հանձնել արխիվ և Երևանից չբացակայելու որոշումն համարել անվավեր:

Ցավոք, Մ. Սիլիկյանը երկար չմնաց ազատության մեջ. 1937 թ. նա ձերբակալվում է չորրորդ անգամ: Նոյեմբերի 16-ին ՀԽՍՀ ՆԳԺԿ-ի Եղյակը գեներալին



<sup>2</sup> Հայաստանի ազգային արխիվ, Փոսդ 1191, ցուցակ, 1, գործ 1124, թ. 6:



դատապարտում է մահապատճի, որն ի կատար է ածվում նոյեմբերի 22-ին:

ՀԽՍՀ պետական անվտանգության կոմիտեի կողմից Հայաստանի ազգային արխիվ հանձնած և բռնադատվածներին վերաբերող քրեական գործերից մեկում, որը վերաբերում էր խորհրդային զինծառայող Սարգսի Զանոյանին, մենք գտանք հիշատակություն Մ. Սիլիկյանի մասին:

Մ. Զանոյանը եղել է ռուսական բանակի հրետանու ենթասպա, մասնակցել է 1914-1917 թթ. ռուս-թուրքական ռազմածակատի մարտական գործողություններին, պարգևատրվել է շքանշաններով, իսկ Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելու հետո ծառայության է անցել Կարմիր բանակում Հայկական դիվիզիայում: Հետաքրնության նյութերից «պարզվում» է, որ Մ. Զանոյանը, գեներալներ Ռ. Ալավերդյանը և Մ. Սիլիկյանը եղել են «հակահեղափոխական սպայական կազմակերպության» անդամներ: ՆԳԺԿ-ի հորինած այս քրեական գործը հայտնի է «Տուխաչևսկի գործ» անունով:

Նշենք, որ այդ անհերթեթ ամբաստանությունների հիման վրա ձերբակալվել և գնդակահարվել են Խորհրդային Միության մարշալ Մ. Տուխաչևսկին, Կիևյան ռազմական օկրուգի հրամանատար Ի. Ցալիկը և շատ ուրիշներ:

Մ. Զանոյանի քրեական գործի բնություններից երեսում է, որ Մ. Սիլիկյանը հարցաքննվել է միայն մեկ անգամ՝ 1937 թ. սեպտեմբերի 22-ին: Քննիչին տված ցուցմունքում նա հայտնել է, որ եղել է ցարական բանակի գեներալ-մայոր, և որպես գեներալ-լեյտենանտ ծառայել է «դաշնակցական» բանակում և վարել է Նոր Բայազետի գեներալ-նահանգապետի պաշտոնը: Մ. Սիլիկյանը այսպես կոչված «սպայական գաղտնի կազմակերպության» մասնակից լինելու վերաբերյալ չի հարցաքննվել: Գաղտնի կազմակերպության անդամ լինելու «փաստը» արդեն բավական է եղել, որպեսզի Եռյակն անմիջապես մահապատճի վճիռ ընդունի և գնդակահարության դատապարտի անմեղ մարդկանց:

Հայտնի է, որ 1937 թ. լայն ծավալ էին ստացել ստալինյան

բռնությունները: Պատժիչ մեքենան գործում էր ողջ թափով, և պետական անվտանգության մարմինները ցանկանում էին ամեն գնով ապացուցել իրենց հավատարմությունը կոմկուսին ու անձամբ Ի. Ստալինին, ուստի ձերբակալում և մահվան էին դատապարտում նաև տանյակ հազարավոր անմեղ մարդկանց: Պատահական չէ, որ Մ. Սիլիկյանի քրեական գործի վրա արված էր հետևյալ մակագրությունը՝ "Օքրասկա սշտացած լուծում":

Հայկական բանակի գեներալ-լեյտենանտ Մովսես Սիլիկյանի բարի անունը վերականգնվեց միայն 1987 թ. նոյեմբերի 10-ին. ՀԽՍՀ Գերագույն դատարանը չեղյալ հայտարարեց ՆԳԺԿ-ի Եռյակի որոշումը, այն բանից հետո, եթե Մ. Սիլիկյանի որդին՝ Գեորգին, դիմել էր ՀԽՍՀ ՊԼԿ-ի նախագահ Վ. Չերքիկովին: Միաժամանակ Գ. Սիլիկյանը ինքը էր հայտնել հոր մահվան հանգամանքները, տարեթիվը և վայրը:

1988 թ. հունվարի 14-ին ՀԽՍՀ ՊԼԿ-ի նախագահ Մ. Ցուլբաշյանը դիմում է ՀԽՍՀ արդարադատության նախարար



# ԲԱՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԿՐՈՆԸ



ԱՄՆ Հյուսիսային Կարոլինա նահանգի համաստանի բնապահպան Կարլոս Բոտերոյի կարծիքով՝ տարբեր ժողովուրդների կրոնները մեծապես կախված են բնապահպանական պայմաններից: Համադրելով աշխարհի ժողովուրդների ավանդական կրոնների քարտեզը բնական պայմանների քարտեզի հետ՝ Բոտերոն հայտնաբերել է, որ դաժան պայմաններով և բնապահպանական հաճախակի ցցումներով շրջաններում, որպես կանոն, կրոնը թելադրում է բարոյախրատական խիստ կանոններ, իսկ աստված կամ աստվածները խստորեն պատժում են դրանք խախտելու համար: Այս շրջաններում, որտեղ պայմանները մեղմ են, և բնապահպանական աղետներ չեն պատահում, ավելի մեղմ է նաև կրոնը, աստվածները շատ պահանջուն չեն, մեծ է անաստվածների թիվը:

Ա. Դադայանին՝ խնդրելով հրահանգել, որ Երևանի Սպանդրայան շրջանի Քաղաքացիական կացության ակտերի գրանցման բաժնում արձանագրվի Մ. Սիլիկյանի մահը, որը տեղի է ունեցել 1937 թ. նոյեմբերի 22-ին:

1988 թ. հունվարի 25-ին ՀԽՍՀ ՊԱԿ-ի Խ բաժնի պետ փոխգնդապետ Ե. Աթրաբյանը դիմում է Աղբեջանի ԽՍՀ գործընկերոջ՝ փոխգնդապետ Բ. Զամբարովին, խնդրելով Բարու քաղաքի բնակիչ Գեղրգի Սիլիկովին տեղեկացնել, որ հայրը 1937 թ. նոյեմբերի 16-ին դատապարտվել է պատժի առավելագույն չափի՝ գնդակահարության: Տեղեկացվում է, որ Գ. Սիլիկովը հոր մահվան վկայականը կարող է ստանալ Երևանի Սպանդրայան Քաղաքացիական կացության ակտերի գրանցման բաժնից: Փետրվարի 10-ին Բ. Զամբարովը պատասխան գրույրունում հայտնում է, որ Գ. Սիլիկովը հրավիրվել է ՊԱԿ և նրան բանավոր տեղեկացվել է հոր մահվան հանգամանքների և մահվան վերաբերյալ տեղեկանք ստանալու հնարավորության մասին:

Գեներալ-լեյտենանտ Միվսես Սիլիկյանը կիսեց ոռւսական և ազգային բանակներում ծառայած տասնյակ հազարավոր սպանների դժբախտ ծակատագիրը: Հարկ է նշել, որ ճիշտ է, բավական ուշ, այսուամենայնիվ, պատմական արդարությունը հաղթեց: Հայ ժողովուրդը բարձր գնահատեց Մ. Սիլիկյանի ծառայությունը, այսօր գեներալի անունն է կրում թաղամաս Երևանում, իսկ ՀՀ պաշտպանության նախարարությունը սահմանել է զորավարի անվամբ մեղալ:



\* «Наука и жизнь», 2015, N 3.

# ԱՅԴ ԶԱՐՄԱՆԱՀՐԱԾ ՀԵՂՈՒԿ ԲՅՈՒՐԵԴՆԵՐԸ. ՆՈՐ ՍԵՐՆԴԻ ՕՊՏԻԿԱ

“Հեղուկ բյուրեղները գեղեցիկ են  
և խորհրդավոր...”

Պիեռ Ժիլ Պը’ֆեն,  
Նորելյան մրցանակի դափնեկիր



ՀԱԿՈԲ ՄԱՐԳԱՐՅԱՆ


Փիզ. մաթ. գիտ. թեկնածու, ԵՊՀ  
Կիսամիադորդչային սարքերի  
և նանոտեխնոլոգիաների կենտրոնի  
առաջատար գիտաշխատող

Գիտական հետաքրքրություններ.  
Կիսամիադորդչային բարակ  
թաղանթների տեխնոլոգիա,  
նանոտեխնոլոգիաներ,  
հեղուկ բյուրեղների օպտիկա,  
պոլիմերային հեղուկ բյուրեղներ  
Էլ. փոստ: marhakob@ysu.am

Այօր դժվար է  
գտնել մեկին,  
ում ծանոթ չեն  
հեղուկբյուրեղային վահանակ-  
ները՝ սկսած բջջային հեռա-  
խոսներից, վերջացրած ժամա-  
նակակից հեռուստացույցներով  
և համակարգչային էկրաննե-  
րով ու ժամացույցներով։ Իսկ  
ի՞նչ են հեղուկ բյուրեղները,  
ե՞րբ և ի՞նչպես են դրանք հայտ-  
նագործվել և ի՞նչ ապագա է  
դրանց սպասում։

**Հեղուկբյուրեղային** վի-  
ճակը յուրահատուկ ֆազա-  
յին վիճակ է, որին որոշ օր-  
գանական նյութեր անցնում  
են որոշակի պայմաններում  
(ջերմաստիճան, ճնշում, լու-  
ծույթի կոնցենտրացիա): Ըստ  
կառուցվածքի՝ դրանք մածու-  
ցիկ հեղուկներ են՝ կազմված  
որոշակիորեն կարգավորված,  
ձգված կամ սկավառականման  
մոլեկուլներից։ Հեղուկ բյու-

րեղները (ՀԲ) միաժամանակ  
օժտված են և հեղուկներին, և  
բյուրեղներին բնորոշ հատկու-  
թյուններով։ ՀԲ-ի հիմնական  
առանձնահատկությունն այն է,  
որ անգամ շատ քույլ արտաքին  
դաշտերի ազդեցությամբ դրա  
մոլեկուլների կողմնորոշումը  
կարելի է հեշտությամբ փոփո-  
խել, որը ՀԲ-ների կիրառու-  
թյան լայն հնարավորություն-  
ներ է բացում։





### **Պարմական ակնարկ**

1888-ին ավստրիացի բուսաբան Ռայխիտցերը հայտնաբերել է, որ իր սինթեզած նյութը հալվելիս վերածվում է ոչ թափանցիկ, պղտոր հեղուկի, իսկ այդ նյութի կարծրությունն այնպիսին է, որ այն կարելի է անվանել հեղուկ: Այդպես ծնվեցին «հեղուկ բյուրեղներ» անվամբ նյութերը, որոնց վիճակված էր հեղափոխել XX դարի տեխնիկան: Ֆիզիկոսները և քիմիկոսները երկար ժամանակ սկզբունքորեն չէին ընդունում ՀԲ-ի՝ որպես նյութի առանձին վիճակի գոյությունը, քանի որ

այն հակասում էր նյութի երեք վիճակների մասին ընդունված պատկերացմանը: Նույնիսկ 1904 թ. Օտտոն Լեհմանի «Հեղուկ բյուրեղներ» գրքի հրապարակումից հետո էլ հայտնագործությունը չգտավ ոչ մի կիրառություն:

1924 թ. խորհրդային գիտնական Վ. Կ. Ֆրեդերիկսն ուսումնասիրել է ՀԲ-ի մոլեկուլների կողմնորոշումն արտաքին դաշտերում: 1963 թ. ամերիկացի գիտնական Ջեմս Ֆերգյուսոնը ջերմային դաշտերը բացահայտելու համար օգտագործել է ՀԲ-ի ջերմաստիճանի ազդե-

ցության հետևանքով գույնը փոխելու հատկությունը: Միայն այն բանից հետո, եթե նա այդ գյուտի համար արտոնագիր ստացված, հետաքրքրությունը ՀԲ-ների նկատմամբ կտրուկ աճեց: 1965 թ. ԱՄՆ-ում կայացավ հեղուկ բյուրեղների առաջին միջազգային գիտաժողովը, որտեղ քննարկվեցին և ի մի բերվեցին ստացված գիտական արդյունքները և նախանշվեցին կիրառության հնարավոր ոլորտները: Մի քանի տարի անց ամերիկացի գիտնականները տեղեկատվության վերարտադրման համակար-



գերի համար ՀԲ-ի հիման վրա ստեղծեցին սկզբունքը նոր լուսավահանակ, որի աշխատանքի սկզբունքը կայանում էր նրանում, որ ՀԲ-ի մոլեկուլները, պտտվելով էլեկտրական դաշտում, տարբեր կերպ էին անդրադանում կամ բաց թողնում լույսը, և լուսավահանակին

հայտնվում էին միկրոսկոպական կետերից կազմված պատկերներ: Չսայած ալշայտ առավելություններին, ՀԲ-ները լայն կիրառություն գտան միայն այն բանից հետո, երբ 1973 թ. մի խումբ բրիտանացի բիմիկոսներ ձորջ Գրեյի գլխավորությամբ կարողացան ՀԲ ստանալ համեմատաբար էժան և մատչելի հումքից:

Առաջին գործնական կիրառումը ՀԲ-ները գտան ջերմագրության բնագավառում՝ որպես տարրեր ջերմաստիճանային տիրույթների զգայակներ (սենսոր): Այսօր ՀԲ-ների կիրառության ամենամեծ ոլորտը, անշուշտ, տեղեկատվական տեխնոլոգիաներն են, սկսած բոլորին քաջ հայտնի էլեկտրոնային ժամացույցից մինչև ժամանակակից հեղուկրյուրելային էկրանով հեռուստացույցները և համակարգիչների ցուցասարքերը (մոնիթոր):

Այսուհանդերձ, էլեկտրաօպտիկական երևույթի հայտնաբերումից և տարրեր տեսակի լուսավահանակներում ու զգայակներում կիրառումից հետո, անցած դարի վերջերին հետաքրքրությունը ՀԲ-ների նկատմամբ փոքր-ինչ նվազեց: Ճիշտ է, սարբերը և լուսավահանակներն այժմ էլեկտրոնակում են կատարելա-



գործվել, սակայն առաջընթացը հիմնականում պայմանավորված է կիսահաղողացային տեխնոլոգիաների, հատկապես նանոտեխնոլոգիաների բուռն զարգացմամբ: Փորձեր են արվել ստանալու որակապես նոր հատկություններով ՀԲ-ներ նանոմասիկների՝ ֆուլերների, նանոխողովակների և վերջերս հայտնաբերված նոր նյութի՝ գրաֆենի օգտագործմամբ: Իհարկե, հատկությունների որոշակի բարելավում նկատվել է, սակայն այն կրել է զուտ քանակական բնույթը: Թվում էր, թե հեղուկ բյուրեղներն իսկապես սպառել են իրենց: Սակայն բառացիորեն վերջին տարիներին սինթեզվել են նոր նյութեր՝ հեղուկրյուրելային պոլիմերներ, որոնք շեշտակիորեն ընդարձակել են օպտիկայի և ֆոտոնիկայի տարրերի ֆունկցիոնալ հնարավորությունները:

## Հեղուկրյուրելային պոլիմերներ


Պոլիմերը նույթ է, որի ոչ մեծ մոլեկուլները փոխազդեցության հետևանքով ձևավորում են երկար և ձկուն շղթաներ: Թե ինչ է պոլիմերը, այսօր հայտնի է շատերին, սակայն «հեղուկրյուրելային պոլիմեր» համադրությունը հասկանա-

լի է, թերևս, միայն մասնագետներին: Այս նյութերը համատեղում են, մի կրղմից, ՀԲ-ների երկրեկման, մյուս կրղմից՝ պոլիմերների մեխանիկական հատկությունները: Հեղուկրյուրելային պոլիմերների առանձնահատկությունը բացառապես լույսի ազդեցությամբ մոլեկուլների

կողմնորոշումը փոփոխելու ունակությունն է: Այն հնարավորություն է տալիս ձևավորելու ընդհատ և անընդհատ, շարունակաբար փոփոխվող, բարձրորակ կողմնորոշում՝ զերծ էլեկտրատափական լիցքերից ու մեխանիկական վասավածքներից: Նոր սերնդի օպտիկական տարրերի ստեղծման հիմքում հենց լույսի ազդեցությամբ իրենց կողմնորոշումը փոփոխելու ունակությամբ օժտված հեղուկրյուրելային պոլիմերներն են:

## Նոր սերնդի օպտիկական տարրեր

Հեղուկրյուրելային պոլիմերների վրա հիմնված տարրերն օժտված են յուրօրինակ հատկություններով և հաճախ չունեն իրենց նախատիպը ժամանակակից օպտիկայում: Դրանք հարթ կողմնորոշմամբ փուլային հապաղիչներն են, կենտրոնական համաչափությամբ տարրերը, տարրեր կարգերի մրրկային կառուցվածքները, բևեռացման նկատմամբ զգայուն դիֆրակտային ցանցերը, ինչպես նաև փուլի ավելի բարդ երկրաչափական բաշխածությամբ կամ, ինչպես ընդունված է ասել, Պանչարատնամ-Բերիի տարրերը: Ի տարրերություն նախորդ սե-



բունդների օպտիկական տարրերի, որոնք բնութագրվում էին ոսպնյակի ձևի և հաստության (առաջին սերունդ՝ 1G), բեկման ցուցչի (ինչպես բրեգի ցանցերում, երկրորդ սերունդ՝ 2G) կամ օպտիկական անիզոտրոպության (ինչպես հեղուկրյուրեղային էլեկտրաներում, երրորդ սերունդ՝ 3G) մոդուլմամբ, նոր՝ շորբորդ սերնդի (4G) օպտիկական տարրերը հեղուկրյուրեղային պոլիմերի բարակ թաղանթներ են՝ օպտիկական անիզոտրոպության բարդ երկրաչափական բաշխվածությամբ, որը պայմանավորված է լուսի օգնությամբ մոլեկուլային մակարդակով ՀԲ-ի կողմանուշման հնարավորությամբ։ Այս տարրերն օժտված են սկզբունքորեն նոր ֆունկցիոնալ հատկություններով և ձևավորում են օպտիկական տարրերի նոր սերնդի դաս։

Նշենք չորրորդ սերնդի հեղուկրյուրեղային օպտիկական տարրերի հիմնական առավելությունները։ Առաջինը չափերն են։ Եթե ավանդական օպտիկական տարրերը (ոսպնյակ, պրիզմա և այլն) ունեն մի քանի սմ չափեր, ապա այս դեպքում խոսքը միկրոնի կարգի հաստությունների մասին է։ Այս տարրերը գործում են լուսային սպեկտրի լայն տիրույթում (անդրամանուշակագույն, տեսանելի և մոտակա ենթակարմիր), դրանք կարելի է պատրաստել մեծ մակերեսներով ձկուն հարթակների վրա։ Բացի

այդ, դրանք ունեն ցածր ինքնարժեք։ Այդ տարրերի հիման վրա կարելի է ստեղծել կիրառական եզակի հնարավորություններով, սկզբունքորեն նոր օպտիկական սարքեր։ Առաջին հերթին դրանք հեղուկրյուրեղային էլեկտրաներն են, ըստուցման նկատմամբ զգայուն և դեկավարվող ոսպնյակները, քվանտային հաղորդակցության և ատոմների լազերային սարեցման համակարգերի հիմնարար տարրերը, օպտիկական ունելիները, ըստուաչփները և էլիպսաչփները, ինչպես նաև գերզգայուն նանոչափային զգայակները։

## Նոր սերնդի օպտիկական տարրերի կիրառության ոլորտները

Վերը նշված տարրերի օգտագործումը հանգեցրել է հեղափոխական առաջընթացի տարրեր ոլորտներում։ Թվարկենք դրանցից մի քանիսը։

Հաճախ լուսային ձառագայթների մեծ մակերեսով փնտերի կիզակետման համար, հատկապես արևային տեխնոլոգիաներում, օգտագործվում է **Ֆրենելի ոսպնյակը**, որը համակենտրոն օղակների տեսքով կառուցվածք է, ունի մեծ մակերես և համեմատաբար փոքր հաստություն ու կշիռ։ Սակայն կառուցվածքի ընդհատությունը կամ, ավելի ճիշտ, անընհատության բացակայությունը նշանակում է, որ այն չի կա-

րող լինել բավարար ճշգրիտ։ Հեղուկրյուրեղային պոլիմերային ոսպնյակն սկզբունքորեն տարրերվում է ավանդականից իր հաստությամբ (ընդամենը մի քանի միկրոմետր), պրակտիկորեն անկշիռ է, իսկ լուսակողմանորոշման մեթոդը հեշտությամբ ապահովում է կառուցվածքի անընդհատությունը և հնարավորությունը է տալիս ստեղծելու մետրական չափերով բարձրորակ ոսպնյակներ, որոնք կարող են օգտագործվել ինչպես հեռավոր տիեզերական օպտիկական կապի համակարգերում, այնպես էլ աստղադիտակներում պատկերի վերամշակման համար։

**Քվանտային հաղորդակցությունը** հեռու տարածություններ քվանտային վիճակների փոխանցման կարողությունն է հիմնված հեղափոխական հայեցակարգերի ու տեխնոլոգիաների վրա և լուծում է խնդիրներ, որոնք անհնար է իրականացնել ավանդական տեղեկատվական մեթոդներով։ Մինչև վերջերս քվանտային հաղորդակցության հետ կապված խնդիրները տեսական վարկածների մակարդակի վրա էին։ Միայն հեղուկրյուրեղային պոլիմերի բարակ թաղանթում անիզոտրոպության առանցքի բարդ տարածական մոդուլմաբ օպտիկական տարրերի ստեղծումը հնարավոր դարձրեց քվանտային հաղորդակցության համակարգերի գործ-

նական իրականացումը:

1997 թ. ֆիզիկայի բնագավառում Նորելյան մրցանակը շնորհվել է **չեղոք սպոմների կայանման և լազերային սառեցման** համար: Զերմաստիճանի իջեցումը մինչև մի քանի նանոկելվին ( $1 \text{ նանոկելվին} = 10^{-9} \text{ կելվին}$ ) կարևորագույն դեր է խաղում գերձգրիտ սպեկտրադիտման, հաճախության չափանմուշների, հիմնական ֆիզիկական ստանդարտների, ինչպես նաև նյութի նոր վիճակների (ինսային և էլեկտրոնախոռոչային հեղուկ, Բողե-Այնշտայնի ատոռմային կոնդենսատ) ստեղծման մեջ: Հեղուկքուրելային պոլիմերների հիման վրա կենտրոնահամաշափ բևեռային պարերական և տարրեր կարգերի մրրկային կառուցվածքների ստեղծման շնորհիվ այսօր իրական է դարձել լազերային փնջի լրիվ օպտիկական դեկավարումը: Դա հնարավորություն է տալիս կատարելապես նոր մակարդակով իրականացնելու ատոռմային և ինսերի սառեցումը, կալանումը և գերձգրիտ տեղափոխումները:

Այս նույն տարրերի հիման վրա ստեղծվել է որակապես նոր հնարավորություններով **օպտիկական ուժեղի**, որն ու-

նակ է չափազանց փոքր ուժերով (այլովուտոնից փոքր.  $1 \text{ պիկովուտոն} = 10^{-12} \text{ նյուտոն}$ ) դեկավարել միկրո-և նանոչափի չեղոք մասնիկներ: Հայտնի է, որ կիզակետված լազերային փնջի նեղ մասը բնութագրվում է էլեկտրական դաշտի արագ փոփոխման տիրույթով, և մասնիկները ձգվում են դեպի դաշտի այդ տիրույթ, այսինքն՝ փնջի առանցքը: Այսպիսի օպտիկական գործիքները չափանց զգայուն են և ի վիճակի են հայտնաբերելու ենթամիկրոնային (միկրոնից փոքր) չեղոք մասնիկներ և դեկավարելու դրանք նանոմետրական տարածություններում: Նման գործիքը հատկապես գրավիչ է գենային ձարտարագիտությունում, տարրեր կենսաբանական համակարգերի, ինչպես նաև առանձին մոլեկուլների, օրինակ՝ ԴՆԹ-ի, ՌՆԹ-ի, սպիտակուցների, ֆերմենտների հետագոտություններում:


### Հեղուկքուրելային պոլիմերային գերզգայուն նանոզգայակներ

Վերջերս Մուսկվայի ֆիզիկա-տեխնիկական ինստիտուտում մշակվել է նանոմետրանիկական զգայակ՝ տարրեր

թիմիական նյութերի բաղադրության որոշման համար, որը կարող է գրանցել մի քանի կիլոդատոն զանգվածով մասնիկներ (մեկ դալտոնը պրոտոնի զանգվածն է, մի քանի հազար դալտոն զանգված ունեն սպիտակուցները, ԴՆԹ-ի առանձին մոլեկուլներ): Զգայակի հիմնական մասը միկրոնային չափերի սիլիցիումային բարձակն է (կանտիլեր՝ հեծան, որի մի ծայրն ամրացված է, իսկ մյուսը կարող է տատանվել): Զգայակի զգայնությունը պայմանանավորված է բարձակի ձևով, չափերով, տատանումների հաճախությամբ ու լայնությունը: Սիլիցիումը կարծր նյութ է, ուստի զգայնության մեծացման նպատակով բարձակի չափերի անգամ փոքր փոփոխությունը հանգեցնում է զգայակի խաթարման:

Վերջերս սինթեզվել է նոր՝ ազորենազեն պարունակող հեղուկքուրելային պոլիմեր, որն օժտված է լույսի ազդեցությամբ մեխանիկական տատանումներ կատարելու յուրօրինակ հատկությամբ: Տատանումներ կատարելու ունակությունն ընկած է հենց պոլիմերի բնության մեջ, ուստի չկան հաճախությանը և լայնութին ներկայացվող սահմանափակումներ:

Ամերիկյան «BEAM Co.» ընկերության աշխատակիցներն ազորենազեն պարունակող հեղուկքուրելային պոլիմերի հիման վրա ստեղծել են բևեռացված լազերային ձառագայթի ազդեցությամբ տատանվող բարձակ, որի տատանումների լայնութը (աստիճաններով արտահայտված) կարող է հասնել մինչև շուրջ  $170^{\circ}\text{-ի}$ , այս դեպքում երբ վերը նկարագրված սարքում այն կազմում է ընդամենը  $0,1^{\circ}$ : Սակայն «BEAM



Հօնավայրում կատարված է գույքադրած բարձակնունի միջիմետրական չափեր, որն էլ սահմանափակում է դրա տատանումների հաճախությունը: Նմանատիպ բարձակը, բայց արդեն միկրոնի կամ ավելի փոքր չափերով, կարող է գերզայուն նանոզգայակի ստեղծման հիմք ծառայել:

Առաջին հայացքից թվում է, թե պոլիմերից հեշտ չէ միկրոնից փոքր չափերով բարձակ պատրաստելը: Սակայն նման խնդրի լուծման համար գոյություն ունի ստանդարտ տեխնոլոգիա: Դա ֆեմտովայրկենային ( $10^{-15}$  վ) լազերի օգնությամբ իրականացվող երկֆուտոնային պոլիմերացման հայտնի տեխնիկան է, որը վերջին տարիներին լայնորեն կիրառվում է, օրինակ, 3D-տպիչներում: 100 նմ-ից փոքր լուծունակությամբ կամայական երկրաչափական տեսքի պատկերների ստեղծման հնարավորությունը երկֆուտոնային պոլիմերացումը դարձնում է եզակի գործիք ոչ ավանդական մեթոդների զինանցում, որն այսօր հասանելի է գիտնականներին:


## ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԽԵՂՈՒԿՐՅՈՒԹԵԼՈՅԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐՔ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հպարտությամբ կարելի է նշել, որ Հայաստանը հեռու չի մնացել հեղուկրյութելոյին տեխնոլոգիաների առաջընթացից: ՀՀ ԳԱԱ Փիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտում երկար տարիներ գրադարձում են ՀԲ-ների էլեկտրական հատկությունների վրա ձայնային ալիքների ազդեցության ուսումնասիրությամբ: Երևանի պետական համալսարանի օպտիկայի ամբիոնը վերջին 15 տարիների ընթաց-

քում ակտիվորեն զբաղվում է ոչ գծային օպտիկայով, ՀԲ-ների, այդ թվում նաև նանոմասնիկներով լեզիրված նմուշների, լուսահիդրոդինամիկայով և ջերմամեխանիկայով: ԵՊՀ կիսահաղորդչային սարքերի և նանոտեխնոլոգիաների կենտրոնի հետազոտական խումբն զբաղվել է «Կիսահաղորդչ-ՀԲ» կառուցվածքի ուսումնասիրությամբ, որն ընկած է ժամանակակից ցուցասարբերի և ֆոտոնիկայի այնպիսի տարրերի հիմքում, ինչպիսիք են լուսաղեկավարվող օպտիկական փականները, լուսի տարածական մոդուլարարանները և այլն: Առաջարկվել են այդ սարքերի ժամանակային բնութագրերի բարեկավման եղանակներ: Խումբն ակտիվորեն ներգրավվել է նաև հեղուկրյութելոյին պոլիմերային նոր նյութերի ուսումնասիրության և դրանց հիման վրա օպտիկական տարրերի ստեղծման աշխատանքներում: Նոր սերնդի օպտիկական տարրի՝ ՀԲ-ային բևեռային դիֆրակտուային ցանցի հիման վրա նախագծվել և ստեղծվել է բևեռաչափ, կենսարանական օրյեկտների շրջանային երկգունության (դիքրոիզմ) չափման համար: Բացադրվել է հատկություններով

օժտված օպտիկական տարրի օգտագործումը հնարավորություն է տվել ստեղծելու փոքր չափերով, օգտագործման համար հարմարավետ, ցածր ինքնարժեքով մի սարք, որի նախագծման և ստեղծման համար խումբն արժանացել է ՀՀ նախագահի 2014 թ. մրցանակին:

Որպես վերջաբան ավելացնեաք, որ վերը նկարագրված հեղուկ բյուրեղները, հեղուկրյութեղային պոլիմերները և ֆոտոկողմնորոշման ժամանակակից մեթոդը կարող են հիմք ծառայել համեմատաբար վերջերս առաջացած արվեստի նոր ուղղության, որն ի հայտ է եկել գիտության և արվեստի խաչմերուկում, մարդու ընկալման վրա բնության երևույթների ազդեցության հետևանքով: Քանի որ հեղուկրյութեղային նյութերի մոլեկուլները լուսազգայուն են, ապա, լուսի հետ փոխազդեցության հետևանքով, դրանք ի գործու են առաջացնել վերացական պատկերներ և գույների լայն ներկապնակով կոմպոզիցիաներ: Արստրակցիոնիզմի ոգով ստեղծված պատկերները ոչ միայն հաճելի են մարդու աչքի համար, այլև գրավում և հրապուրում են մարդկային միտքն ու բանականությունը:



# ԱԶՔԵՐԸ ՄԱՔՈՒՐ ՕԴԻ ԿԱՐԻՔ ՈՒՆԵԼ

**Վ**երջին տասնամյակների ընթացքում աշխարհում աճում է կարձատեսների թիվը: ԱՄՆ-ում մեծահասակների մեկ երրորդը կրում է ակնոց, ոսպնյակներ կամ ենթարկվում է եղջերաթաղանթի լազերային շտկման: Ասիայում պարզապես սպառնալից վիճակ է: Մեռվի և Շանհայի ուսանողների 95 %-ը, կարձատես է: 20 տարի առաջ Սինգապորի գորակոչիների 43 %-ն էր կարձատես, այժմ՝ արդեն 80 %-ը:

Պատճառների մասին որոշակի ոչինչ ասել հնարավոր չէ: Միայն նկատվել է, որ կարձատեսների թիվն ավելի փոքր է նրանց շրջանում, ովքեր մանուկ հասակում ավելի շատ ժամանակ են անցկացրել տնից դուրս՝ բաց երկնքի տակ: Տարբեր բժիշկների կարծիքով՝ դրան նպաստում են բնական լուսավորությունը, հեռու առարկաներին նայելը, ֆիզիկական ակտիվությունը կամ այդ բոլոր գործուները՝ միասին: Չինաստանի Գուանչժու քաղաքում սկսել են հետևյալ փորձը. երեխաներին կարգադրել են ամեն օր դրսում անցկացնել սովորականից 1 ժամ ավելի: Փորձը դեռևս չի ավարտվել, բայց առաջին արդյունքները կարծես հաստատում են աչքերի համար զբոսանքների և դրսի խաղերի օգուտը:

Հավանաբար, նույնն են

վկայում Ասիայի երկրների քաղաքների և գյուղական վայրերի երեխաներին վերաբերող տվյալները: Նեպալում կարձատես է քաղաքներում ապրող երեխաների 22 %-ը, գյուղերում՝ ընդամենը 2,5 %-ը, Չինաստանում՝ 20 %-ը և 6 %-ը, Վիետնամում՝ 11 %-ը և 5 %-ը: Պարզ է, որ գյուղերում երեխաներն ավելի շատ են խաղում, քան քաղաքներում:

2007 թ. ամերիկացի ակնարույժներն ստուգել են 514 երրորդ դասարանցի աշակերտների տեսողությունը, իսկ հինգ տարի անց կրկնել են ստուգումները: Պարզվել է, որ



վել է դեռևս միայն ձուտիկների վրա: Բանն այն է, որ դրսի լուսավորությունը տան լուսավորությունից ուժեղ է. արևոտ օրերին բաց երկնքի տակ այն կազմում է 28-130 հազար լուսիք, իսկ տանը, որպես կանոն, 1000 լուսիքից պակաս: Այս հանգամանքն ազդում է ակնախնձորի աճի վրա. կիսամութ վայրում այն աճում է հիմնականում դեպի ներս, ցանցաթաղանթը հեռանում է ոսպնյակից, և վերջինս չի կարողանում պատկերները հստակ կիզակետել ցանցաթաղանթի վրա:



դպրոցականների 20 %-ը կարձատես է դարձել, հիմնականում նրանք, ովքեր շատ ժամանակ են լինում տանը: Նույն եզրակացությանն են հասգել ավստրիացի բժիշկները, հավելելով՝ անհրաժեշտ է ֆիզիկական ակտիվություն, բայց ոչ սպորտահիճում, այլ բաց երկնքի տակ:

Եվս մի վարկած, որն ստուգ-

Պահելով ձուտիկներին արևի լուսի տակ կամ արհեստական վառ լուսավորության պայմաններում հաջողվում է կանխել կարձատեսությունը:

Գոյություն ունի կարծիք, որ համակարգիչների, սմարթֆոնների, ալանշետների էկրաններից, ինչպես նաև ավանդական թղթային գրքեր կարդալը բացասաբար է ազդում տեսողու-

\* «Наука и жизнь», 2015, N 2.

## Ի ԴԵՊ

թյան վրա: Օրինակ՝ Խարայելի հոգևոր դպրոցներում, որտեղ մեծ ուշադրություն է հատկացվում կանոնական տեքստերի սերտմանը, ավագ դասարանների աշակերտների 80 %-ը կարծատես է: Նույն երկրի աշխարհիկ դպրոցներում այդ ցուցանիշը 30 % է: Աչքը վատ է հարմարեցված փոքր մանրամասներ մոտիկից անընդհատ ուսումնասիրելու համար: Մեր նախնիները, եթե անգամ նուրբ աշխատանք են կատարել, օրինակ՝ փորագրել մամոնտների ոսկորներ, թրծելուց առաջ նկարազարդել կճուճներ կամ հղելի քարե ծայրոցներ սետի համար, չեն նվիրել դրան մի ամբողջ օր կամ օրեր: Իսկ մենք կարդում ենք ամեն օր՝ լարելով ու փշացնելով տեսողությունը:

Գերմանիայի Մայնց քաղաքի քաղաքացիները և հոգեբանները հետազոտել են 35-74 տարեկան 4658 մարդու տեսողությունը, ընդ որում հաշվի առնելով նրանց կրթվածության մակարդակը: Դպրոցական կրթություն ստացած և ուսումը բուհում չշարունակած մարդկանցից կարծատես է եղել 20 %-ը, իսկ քարձրագույն կրթության դիպլոմ ունեցողներից՝ 53 %-ը:

Սակայն կան հետազոտություններ, որոնք չեն հաստատում ընթերցանության վսասը: Օրինակ՝ թուրք ակնարույժներն ուսումնասիրել են ուսանողների տեսողությունը: Բոլոր ուսանողները շատ ժամանակ են ծախսում դասագրքերով պարապելիս, բայց կարծատեսություն ունեն միայն նրանք, ովքեր մանուկ հասակում քիչ են զբոսնել մաքուր օդում:

Մի խորով, եթե եղանակը շատ վատ չէ, երեխաներին տանից դուրս արեք: Եթի կարձատեսությունն առաջանա, զբոսնելն արդեն ուշ կլինի:



Ֆիզիկայի բնագավառում Նորեյյան մրցանակի դափնեկիր Մաքս Պլանկը (1858-1947) հայտնի է որպես քվանտային տեսության ստեղծող: Ավելի քիչ է հայտնի, որ մանկության ու պատանեկության տարիներին նա տարվել է երաժշտությամբ, երգել է եկեղեցական երգչախմբում, նվագել երգեհոն, դաշնամուր և թավագությակ: Պլանկը գրել է երգեր թատերական ներկայացումների համար և նվագախումբ է ղեկավարել: Նա անգամ գրել է «Մերն անտառում» օակերեսի լիբրետոն, որի ձայնալիրը (պարտիտուրա), ցավոք, չի պահպանվել: Բայց եթր եկել է մասնագիտություն ընտրելու ժամանակը, Պլանկը որոշել է, որ ֆիզիկան ավելի հեռանկարային է, քան երաժշտությունը:

Տարբեր փոխադրամիջոցներով աշխատանքի և տուն գնացող 13 հազար ամերիկացիների հարցումը ցույց է տվել, որ հեծանիվից օգտ-

վողներն ունեն ավելի բարձր տրամադրություն: Երկրորդ տեղում նրանք են, ում ավտոմեքենայով տանում է ազգականը, բարեկամը կամ անձնական վարորդը: Երրորդ տեղում են նրանք, ովքեր իրենք են վարում մեքենան: Ավտորուսից կամ էլեկտրագնացքից օգտվողների տրամադրությունը լի է բացասական հոյզերով: Ճիշտ է, չի կարելի թերագնահատել այն փաստը, որ հեծանվորդները սովորաբար ավելի երիտասարդ են և, որպես կանոն, աշխատավայրից ավելի մոտ են ապրում, քան հարցման մացած մասնակիցները, որը նույնպես ազդում է տրամադրության վրա:



Ամենաերկար երկաթուղային ստորգետնյա անցուղին սկսել է գործել Շվեյցարիայում 2016 թ. Մեն Գործարդ լեռնանցքի տակ: Թունելի երկարությունը 57,1 կմ է: Մինչ այդ ամենաերկարը ձափնիայի Սեյքան թունելն էր՝ 54 կմ:



Երկրագնդի ամենամեծ ծառը Կալիֆոռնիայի «Անկվոյ» ազգային պարկում աճող «Գեներալ Շերման» անունը կրող սեկվոյան (մամոնտածառ) է: Ծառի բարձրությունը 83,8 մ է: Թեև կան ավելի բարձր ծառեր, բայց այս հսկայի բնի ծավալն ամենամեծն է՝ 1489 խորանարդ մետր՝ առանց զյուղերի ծավալի:

\* «Наука и жизнь», 2015, N 1.

# ՄԻԶՈՒԿԱՅԻՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ



ԱԼԲԵՐՏ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Ա. Ալիխանյանի անվան Ազգային գիտական լաբորատորիայի (Երևանի ֆիզիկայի ինստիտուտ) իզոտոպների հետազոտման և արտադրության բաժնի ղեկավար, ֆիզ. մաթ. գիտությունների թեկնածու

Արդեն մի քանի տասնամյակ է, ինչ միջուկային էներգիան ծառայում է մարդկությանը: Շատերը մինչև այժմ էլ մտածում են, որ միջուկային արդյունաբերությունը՝ միայն ատոմային էլեկտրակայաններն են, միջուկային գենքն է և ուրանի հանքարդյունաբերությունը: Իրականում վերը նշվածը հսկայական սահցադաշտի գագաթն է միայն: Այսօր կյանքն անհնար է պատկերացնել առանց միջուկային տեխնոլոգիաների: Դա և՛ տարրական մասնիկների հսկայական արագարաններն են, որոնց միջոցով գիտնականները հետազոտում են տիեզերքի առաջացման գաղտնիքը, և Արկտիկայի սառուցները կոտրող ատոմային սահցահատներն են, և քաղկեդից փրկված միլիոնավոր կյանքները: Միջուկային տեխնոլոգիաները հենց բժշկության մեջ գտան իրենց ամենախելա-

միտ մարդասիրական կիրառումները:

Իոնացնող ձառագայթների օգտագործման պատմությունն սկսվել է ռենտգենյան ձառագայթների հայտնագործումից: 1895թ. նոյեմբերի 8-ին Վյուրցբուրգի համալսարանի պրոֆեսոր Վիլհելմ Կոնրադ Ռենտգենը հայտնագործեց ձառագայթներ, որոնք ունեին թափանցման մեծ ունակություն: Այդ ձառագայթները նա անվանեց X-ձառագայթներ: Ռենտգենի հոդվածը՝ «Ճառագայթների նոր տեսակ» վերնագրով, հրատարակվել է 1895թ. դեկտեմբերի 28-ին Վյուրցբուրգի Փիզիկաբժշկական ընկերության ամսագրում: Հաջորդ հոդվածում (1896թ.) նա հրապարակել է Ալբերտ Ֆոն Կյոլիկերի ձեռքի նշանավոր լուսանկարը (նկ.1), որը Ռենտգենին հոչակ բերեց և բացահայտեց ռենտգենյան ախտորոշման հեռանկարները:



Նկար 1. Պատմության մեջ առաջին ռենտգենյան պատկերը

Ճառագայթաակտիվ նյութերը լայնորեն կիրառվում են միջուկային բժշկության մեջ: Ներկայում աշխարհում արտադրվող ճառագայթաակտիվ նյութերի ավելի քան 50%-ը ծախսվում է միջուկային բժշկության կարիքների համար:

- Միջուկային բժշկության բնագավառում ձառագայթաակտիվ իզոտոպներ օգտագործող կարևորագույն մեթոդներն են՝
- Մեկֆոտոնային առաքումային համակարգչային շերտագրում՝ ՍՓԱՀԸ (անգլերեն՝ SPECT – Single Photon Emission Computed Tomography)
  - Պոզիտրոնային առաքումային շերտագրում՝ ՊԷՇ (անգլերեն՝ PET – Positron Emission Tomography)

Ձառագայթաակտիվ նյութեր չեն օգտագործում շերտագրման հետևյալ մեթոդները.

- Համակարգչային ռենտգենյան շերտագրում՝ ՀՌԸ (անգլերեն՝ CT – Computer Tomography)
- Մագնիսա-ռեզոնանսային շերտագրում՝ ՄՌԸ (անգլերեն՝ MRI – Magnetic Resonance Imaging)

Ռադիոիոնուկլիդային ախտորշման հիմնադիրը և նշակիր աստումների մեթոդի հայրն է համարվում Զ. Հեվիշին, ով առաջինն է օգտագործել յոդ-131 ( $^{131}\text{I}$ ) ռադիոիզոտոպը վահանաձև գեղձի ֆունկցիայի ուսումնասիրության համար և 1943 թ. արժանացել է Նորեյյան մրցանակի:

## ՁԱՌԱԳԱՅԹԱՎԱԿՏԻՎ ԻԶՈՏՈՊՆԵՐՈՎ ՀԵՏԱԳՈՒԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՆԴՆԱՀԱՏ- ԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ


Եթե ռենտգենյան ձառագայթների օգտագործման վրա հիմնված մեթոդները հնարավորություն են տալիս «տեսանելի» դարձնելու մարմնի ներքին կառուցվածքը, ապա ռադիոիոնուկլիդային ախտորշման օգնությամբ կարելի է հետևել նաև դրանցում ընթացող

ֆիզիկական և կենսաբիմիական պրոցեսներին: Միաժամանակ, գրանցելով ռադիոնուկլիդի առաքած ձառագայթները, կարելի է «տեսնել» նշակիր մոլեկուլները և հետևել օրգանիզմում դրանց շարժմանը:

Հիմնականում օգտագործվում է հետևյալ մեթոդը՝ պատրաստվում է ռադիոիոնուկլիդի կամ ռադիոիդապատրաստուկ (ՈԴՊ). այն ռադիոնուկլիդի խառնուրդն է հատուկ քիմիական միացության հետ, որն ունի որոշակի օրգանում կուտակվելու հատկություն: ՈԴՊ-ն մարդուն ներարկելուց հետո պատրաստուկն իր հետ տանում է ձառագայթաակտիվ նյութը, կուտակվելով այն որոշակի օրգանում: Եթե այնուհետև այդ օրգանից ձառագայթված գամմա-քվանտները գրանցվեն ձառագայթման աղբյուրի կողորդինատները ցուցադրող հատուկ սարքով, ապա կատացվի հետազոտվող օրգանի պատկերը: Այդպիսի սարքը կոչվում է գամմա-իզոգիկ, իսկ հետազոտման մեթոդը՝ մեկֆոտոնային առաքումային համակարգչային շերտագրում (ՍՓԱՀԸ): Մեկ այլ եղանակում օգտագործվում են պոզիտրոններ արձակող ձառագայթաակտիվ իզոտոպներ, օրինակ՝ ֆոտոր-18-ը ( $^{18}\text{F}$ ), որը հաճախ միացվում է գյուկոզայի մոլեկուլին՝ փոխարինելով թթվածնի աստոմներից մեկին: Արդյունքում ստացվում է գյուկոզային շատ նման հատկություններով ՈԴՊ: Այն ներարկվում է հետազոտվողին, և այդ ՈԴՊ-ն արյան հետ տարածվում է ամբողջ մարմնով, իսկ օրգանիզմի քիչներն «ուտում» են այն: Հայտնի է,

որ բաղցկեղի քիչների նյութափոխանակության արագությունը շատ ավելի մեծ է, քան սովորական՝ առողջ քիչներին: Ուստի ձառագայթաակտիվ ֆոտոր ավելի շատ կուտակվում է բաղցկեղային քիչներում, քան շրջապատի առողջ քիչներում: Եթե այժմ հատուկ սարքով գրանցվեն մարմնից դուրս եկող ձառագայթների ծննան կետի կողորդինատները, ապա հնարավոր է վերականգնել ուսուցքի պատկերը: Այս մեթոդն օգտագործվում է պոզիտրոնային առաքումային շերտագրության սարքերում:

ՍՓԱՀԸ-ում օգտագործվող գամմա-իզոգիկ մեծ չափի առկայօւմային բյուրեղ է, որում ձառագայթաակտիվ իզոտոպի արձակած գամմա-քվանտներն առաջացնում են լրացային առկայօւմներ, իսկ բյուրեղի վրա տեղադրված բազմաթիվ ֆոտոէլեկտրոնային բազմապատկիշներն այդ առկայօւմները վերածում են էլեկտրական իմպուլսների: Նույն առկայօւմնից հարևան ֆոտորագմապատկիշներում առաջացած իմպուլսների լայնույթների հնարավորություն է տալիս ճշտությամբ վերականգնելու գրանցված գամմա-քվանտների աղբյուրի կո-



Նկար 2. Գամմա-իզոգիկ աշխատանքի սկզբունքը




Նկար 3. ՄՖԱՀԸ սարքի տեսքը

որդինատները: Այդպիսով՝ գրանցված կոռորդինատների բազմությունը հնարավորություն է տալիս վերականգնելու ձառագայթող օրյեկտի, տվյալ դեպքում՝ ռադիոֆոնով կուտակած օրգանի պատկերը: Նկար 2-ում բերված է գամմա-խցիկի աշխատանքի սկզբունքը, իսկ նկ. 3-ում՝ ժամանակակից ՄՓԱՀԸ սարքի տեսքը:

ՊԱՇ-ի աշխատանքի սկզբունքն այլ է: Այստեղ օգտագործվում են, այսպես կոչված, պողիտրոն ձառագայթող իզոտոպներ: Մարմնի բջջից դուրս գալուց հետո պողիտրոնն անմիջապես հանդիպում է էլեկտրոնի, և զույգն անմիջապես անմիջացվում է՝ էլեկտրոնը և պողիտրոնը վերանում են՝ ծնելով երկու գամմա-քվանտ, որոնք շարժվում են հանդիպակաց ուղղություններով: Դուրս գալով հետագոտվողի մարմնից՝ դրանք ընկնում են օղակածն շարված դետեկտորների համակարգ, և այդ դետեկտորներից երկու հանդիպակացները գրանցում են այդ քվանտների զույգը: Պո-

գիտրոնի ծննման կետն ընկած է այդ երկու դետեկտորներն իրար միացնող գծի վրա: Այդպիսի գծերի բազմության հատման կետերի տիրույթը հենց նկարագրում է ուռուցքի տիրույթը: Նկար 4-ում բերված է ՊԱՇ զննման սկզբունքը, իսկ նկ. 5-ում՝ ժամանակակից ՊԱՇ տեսածրող սարքի տեսքը:



Նկար 4. ՊԱՇ զննման սկզբունքը




Նկար 5. ՊԱՇ տեսածրող սարքը

1977թ. Մալինկրոդտի ինստիտուտի (ԱՄՆ) ձառագայթակատիվ հետազոտությունների բաժնում Միշել Տեր-Պողոսյանի ղեկավարած ֆիզիկոսների, քիմիկոսների և բժիշկների խմբում ստեղծվել է ՊԱՇ առաջին տեսածրող սարքը (նկ. 6), որը հաջողությամբ կիրառվել է կլինիկաներում: Արդարացիորեն Միշել Տեր-Պողոսյանը համարվում է պողիտրոնային առաքումային շերտագրման մեթոդի հայրը:



Նկար 6. Միշել Տեր-Պողոսյանը և նրա ստեղծած առաջին ՊԱՇ սարքը

Հետազոտման ընթացքում ստացված տվյալների հիման վրա իրական պատկերի վերականգնման համար կիրառվում են տարրեր մեթոդներ: Համակարգչային շերտագրման ժամանակ ամեն փուլում վե-



Նկար 7. Սրտի՝ տարբեր մեթոդներով ստացված պատկերները. ՄՈՇ՝ մագնիսառէզոնանսային շերտագրում, <Ծ՝ համակարգչային շերտագրում, ՄՖԱՌ՝ մեկֆուտոնային առաքումային համակարգչային շերտագրում

րականգնվում է որոշակի հաստությամբ մեկ շերտի երկշափ պատկերը, իսկ եռաչափ պատկերն ստացվում է իրար հաջորդող երկշափ պատկերների համադրմամբ: Նույն մեթոդն է կիրառվում ՊԱՇ գննման ընթացքում: Իսկ ՄՖԱՌ սարբով գննման արդյունքում ստացվում են հետազոտվող օրգանի երկու երկշափ պատկերներ:


Պատկերների վերականգն-

ման բոլոր մեթոդները պահանջում են բարդ մաթեմատիկական ծրագրերի օգտագործում: Շատ հաճախ պատկերի լավացման համար օգտագործվում է երկու կամ երեք մեթոդներով ստացված պատկերների համադրում, որի հետևանքով պատկերի ցայտունությունը կտրուկ լավանում է և, օրինակ՝ ուռուցքի դիրքը և չափերը երևում են շատ ավելի ցայտուն:

## Իզոտոպների ստացման մեթոդները

Ինչպես հետևում է վերը նշվածից՝ ՊԱՇ և ՄՖԱՌ հետազոտությունների համար, համապատասխան սարքավորումներից բացի, անհրաժեշտ են համապատասխան ձառագայթաակտիվ իզոտոպներ՝ պոզիտրոններ ձառագայթող ՊԱՇ-ի համար և գամմա-քվանտներ ձառագայթող՝ ՄՖԱՌ-ի համար: Դրանք արտադրվում են միջուկային ֆիզիկայի տարրեր մեթոդներով:

ՄՖԱՌ համար օգտագործվող ամենատարածված նյութը տեխնեցիումի  $^{99m}\text{Tc}$  ձառագայթաակտիվ իզոտոպն է, որով կատարվում է ՄՖԱՌ մեթոդով գննումների ավելի քան 80%-ը:  $^{99m}\text{Tc}-ի$  ստացման համար մինչ այսօր օգտագործվում են այսպես կոչված հետազոտական միջուկային ռեակտորները: Եթե այդպիսի ռեակտորի ակտիվ միջավայրում տեղադրվի հարստացված ուրան-235 ( $^{235}\text{U}$ ), ապա նեյտրոնների հոսքի ազդեցությամբ ուրանի միջուկների մի մասը կտրոհվի՝ առաջացնելով երկու տարբեր զանգվածներով բեկորներ: Ժամանակի ընթացքում կուտակված բեկորների զանգվածների շուրջ 6 տոկոսը մոլիբդեն-99 է ( $^{99}\text{Mo}$ ), որը տրոհելով (կիսատրոհման պարբերությունը՝  $T_{1/2} = 65$  ժամ)՝ առաջացնում է տեխնեցիում-99m իզոտոպ: Փաստորեն,  $^{99}\text{Mo}$  իզոտոպը «մայրական տարր» է  $^{99m}\text{Tc}$  իզոտոպի համար: Բարդ և թափոններով առատ տեխնոլոգիաներով այդ բեկորներից զատվում է մոլիբդեն-99-ը, որը տեղադրվում է «մոլիբդեն-տեխնեցիում գեներատոր» կոչվող հատուկ սարքում: Այդ



Նկար 8. ՊԱՇ և <Ծ պատկերների համադրմամբ գանգուղեղի պատկերի որակի լավացումը

սարքի հատուկ կլանիչ խողովակում տեղադրված  $^{99}\text{Mo}$  իզոտոպը «կապվում է» հատուկ կլանիչ նյութով: Եթե այդ խողովակը լցվի ֆիզիոլոգիական լուծույթով, օրինակ՝ աղաջրով, ապա այն իր մեջ կլուծի մոլիբդենի տրոհումից առաջացած  $^{99\text{m}}\text{Tc}$  տեխնիցիումը՝ առաջացնելով այսպես կոչված պերտեխնետառ՝  $\text{NaTcO}_4$ , որն արդեն վերջնական հումք է ռադիոդեղապատրաստուկի համար:


Այս եղանակով այսօր արտադրվում է օգտագործվող  $^{99\text{m}}\text{Tc}$  տեխնիցիումի գրեթե ամբողջ քանակը: Հիմնական արտադրողներն են Կանադան (համաշխարհային արտադրության գրեթե 40%-ը), Ֆրանսիան, Հոլանդիան և Հարավաֆրիկյան հանրապետությունը: Վերջին տարիներին այս նույն եղանակով արտադրությունը է սկսել նաև Ռուսաստանի Դաշնությունը (Դմիտրովգրադ):

Գոյություն ունի մեկ այլ եղանակ՝ նույնպես հիմնված հետազոտական միջուկային ռեակտորի օգտագործման վրա: Այս դեպքում ռեակտորի ակտիվ տիրույթում տեղադրվում է մոլիբդեն-98 ( $^{98}\text{Mo}$ ) ոչ ճառագայթակատիվ իզոտոպը: Նեյտրոնային հոսքի ազդեցությամբ մոլիբդենի միջուկը զավթում է մեկ նեյտրոն՝ ավելացնելով իր ատոմային զանգվածը և  $^{98}\text{Mo}$  մոլիբդենից վերափոխվելով  $^{99}\text{Mo}$  մոլիբդենի: Այս մեթոդը թիվ արդյունավետ է, և լայն տարածում չի ստացել, այնուամենայնիվ օգտագործվում է Ռուսաստանում և Ղազախստանում՝ տեղական արտադրության համար:


## Տեխնիցիումի իզոտոպի արտադրության այլընտրանքային մեթոդները

Ավանդական եղանակով  $^{99\text{m}}\text{Tc}$  տեխնիցիումի արտադրության համար օգտագործվում է միջուկային ռեակտորում հարստացված ուրան-235-ը ( $^{235}\text{U}$ ) հենց այն նյութը, որն օգտագործվում է ատոմային ռումբում: Այս հանգամանքը մտահոգում է Միջուկայի էներգիայի միջազգային գործակալությանը (ՄԷՄԳ), քանի որ քաղաքացիական նպատակներով օգտագործվում է ռազմական նշանակությամբ նյութ, որը կարող է, օրինակ, ընկնել ահարենիչների ձեռքը: Մյուս կողմից, այս արտադրության համար օգտագործվող հետազոտական ռեակտորներն արդեն շատ հին են, բազմիցս հայտնվել են վթարային իրավիճակներում: Հանգեցնելով ճառագայթակատիվ նյութերի արտահոսքի: Նոր ռեակտորներ կառուցելու նախագծեր առաջմ չկան, ուստի ՄԷՄԳ-ն ակտիվորեն խրախուսում է այդ իզոտոպի այլընտրանքային մեթոդների զարգացումը: Այդ խնդրի համար ամենաիրատեսական տարրերակը տարրական մասնիկների օգտագործումն է ֆոտոմիջուկային և միջուկային ռեակցիաներում:

Երևանի ֆիզիկայի ինստիտուտում գործող արագարարներից մեկն էլեկտրոնային գծային արագարարն է, որն ստեղծվել էր ողակաձև արագարարի համար՝ որպես ներարկիչ: Արագացված էլեկտրոնների էներգիան 50 ՄէՎ է, որը բավարար է ֆոտոմիջուկային ռեակցիայի միջոցով  $^{99}\text{Mo}$  արտադրելու համար՝ հետևյալ ֆոտոմիջուկային ռեակցիայի միջոցով.



Այս խնդրի լուծման համար, նախ, հարկավոր է էլեկտրոնային փունջը ձևափոխել ֆոտոնայինի, որն իրականացվում է արգելակային ճառագայթման միջոցով: Որպես ռադիատոր օգտագործվել է լավագույն՝ 2 մմ հաստությամբ տանտալե



Նկար 9. Վերևվում՝ Mo/Tc իզոտոպներ ստանալու համար պատրաստված փորձարարական սարքավորումը, ներքևում՝  $\text{MoO}_3$ -ի փոշիով լցված թիրախը

թիթեղ: Պատրաստվել է համապատասխան փորձարարական սարքավորում (նկ. 9), որը տեղադրվել է օղակաձև արագարարի ստորգետնյա թունելում:

Ճառագայթահարումն իրականացվում է  $E_e = 40 \text{ U}^{\frac{1}{2}}$  էներգիայով էլեկտրոնային փոշով՝ 9,5 միկրոամպերի միջին ուժգնությամբ, 100 ժամում: Ճառագայթումից հետո թիթախը տեղափոխվում է այսպես կոչված «թեժ» սենյակ, որտեղ ճառագայթման արդյունքում առաջացած տեխնեցիումը զտվում է մոլիբդենի եռօրսիդից: Քանի որ ֆոտոմիջուկային ռեակցիայով ստացված տեխնեցիումի տեսակարար ակտիվությունը (թիթախի միավոր զանգվածում ստացված ճառագայթակալիք) նյութի ակտիվությունը) համեմատաբար ցածր է, ապա զուման համար նպատակահարմար է օգտագործել այսպես կոչված կենտրոնախույս զտիչ: Դրա աշխատանքի սկզբունքը հետևյալն է: Ճառագայթված ՄօՕ<sub>3</sub> մոլիբդենի եռօրսիդը լուծվում է KOH հիմքում, լուծույթին ավելացվում է մեթիլէթիլկետոն անունով եթեր, որում լուծվում է ճառագայթման հետևանքով ստացված տեխնեցիումը: Արդյունքում ստացվում է երկու հեղուկների խառնուրդ՝ մեկում լուծված միայն մոլիբդենի եռօրսիդը, մյուսում՝ միայն տեխնեցիումը: Այդ երկու հեղուկները տարրերվում են իրենց խտությամբ, ուստի կենտրոնախույս զտիչը բաժանում է լուծույթներն իրարից:

Ճառագայթակալիք իզոտոպների արտադրության արդյունավետության զնահատականն այսպես կոչված «թեժված» ակտիվությունն է, այսինքն՝ ճառագայթված նյութի միավոր զանգվածից ստացված ակտի-

վությունը ճառագայթման մեկ ժամում և փնչի ուժգնության մեկ միկրոամպերի համար: Այդ մեծության չափման միավորն է՝ Բ/ք. մգ. մկԱ. ժ (թերեր/միլիգրամ · ժամ):


Մինչ այս գիտափորձի իրականացումը, ֆոտոնային փոշերով նման հետազոտություններ կատարող խմբերի տպագրված հոդվածներում հանդիպում էին «թեժված» ակտիվության խիստ տարրերվող մեծություններ՝ 90-ից մինչև 3200 միավոր: Մեր փորձում ստացվել է 3000 միավոր, որը մոտ է նախորդ տվյալներից առավելագույնին: Այս արդյունքները կարող են շատ հուսադրող լինել ավելի հզոր էլեկտրոնային արագարարների կիրառման դեպքում: Հաշվարկները ցույց են տվել, որ Հայաստանի առողջապահության տեխնեցիում-99m իզոտոպի կարիքներն ապահովելու համար անհրաժեշտ է գծային էլեկտրոնային արագարարի էլեկտրոնային փոշի հոսանքը հասցնել առնվազն 50-60 միկրոամպերի, ցանկալի է՝ 100 միկրոամպերի: Ցավոք, եթեի-ի գծային արագարարը նախատեսված չէ այդպիսի հոսանքներ ստանալու համար, և այն սկզբունքորեն հնարավոր չէ արդիականացնելով հասցնել պահանջվող ցուցանիշներն ապահովող վիճակի:



**Պրոտոնային  
արագարարների վրա  
հիմնված եղանակներ.  
Հայաստանում  
նորսի զարգացման  
հեռանկարներ**

Վերջին տարիներին շատ արագ զարգանում է պրոտոնային արագարարներով տեխնեցիում-99m-ի ստացման տեխնոլոգիան: Բանն այն է, որ 15-30 ՄէՎ էներգիաներով պրոտոնային շրջանային արագարարներ՝ ցիկլոտրոններն աշխարհում լայնորեն կիրառվում են ՊԱՇ սարքերի համար պողիտրոն ճառագայթող իզոտոպների, օրինակ՝ ֆոտո-18 (<sup>18</sup>F) իզոտոպի արտադրության համար: Քանի որ պողիտրոն ճառագայթող իզոտոպների կյանքի տևողությունը շատ կարծ է, նպատակահարմար է դրանք արտադրել հենց ՊԱՇ հետազոտման կլինիկայի մոտակայքում: Ուստի աշխարհի բազմաթիվ առաջատար կլինիկաներ իրենց տրամադրության տակ ունեն ՊԱՇ իզոտոպ արտադրող ցիկլոտրոններ: Որպես օրինակ՝ Ճապոնիայում միայն այս տեսակի «թշչկական» կոչվող ցիկլոտրոնների թիվը գերազանցում է 200-ը: Վերջին տասնամյակում պարզվել է, որ ՊԱՇ իզոտոպի հետ միաժամանակ, այդ նույն ցիկլոտրոններում հնարավոր է արտադրել տեխնեցիում-99m իզոտոպ ՍՖԱՀ-ի համար: Ըստ որում, այս եղանակով անմիջապես ստացվում է <sup>99m</sup>Tc՝ շրջանցելով մայրական <sup>99</sup>Mo մոլիբդենի ստացման փուլը: Այդ տեխնոլոգիան ակտիվություն զարգանում է ցիկլոտրոն ունեցող բռնոր երկրներում:

Մի քանի տարի առաջ ՀՀ Կառավարությունը որոշում կայացրեց Երևանի Փիզիկայի



Նկար 10. Չախից՝ C18 გħal-purpur ġejha, որը բերված փনջի փնչատարով, աջից՝ ռադիոհղոսոպաների արտադրության կենտրոնում տեղադրված გħal-purpur.

ինստիտուտին կից տարածքում կառուցել Ուռուցքարանության գ්‍රෑටාලාյության կենտրոն, որի առաջին փուլում ստեղծվելու էր Ռադիոհղոսոպաների արտադրության կենտրոն: Այդ կենտրոնը կառուցվել է, այս-տեղ արդեն տեղադրված են բෛෂ්‍යාකան IBA կենտրոնում արտադրված C18 տիպի გħal-purpur (նկ. 10), ինչպես նաև ՊԱՇ-ՀՏ և ՍՖԱՎՀ տեսածրող սարքեր (նկ. 11):

Այդ ցիլոպորոնն, ըստ գործարանային տեխնոլոգիայի, նախատեսված է ֆտոր-18 իզոտոպ արտադրելու համար: Բոլոր սարքավորումները տեղադրված են, և հույս կա, որ շուտով կենտրոնը կսկսի գործել և իրականացնեն հիվանդների զննում: Ուռուցքարանության գ්‍රෑටාලාյության կենտրոնի զարգացման երկրորդ փուլով նախատեսվում է իրականացնել քաղցկեղի որոշ տեսակներով հիվանդների բուժում, մասնավորապես՝ ձառագայթային մեթոդներով: Այդ խնդրի լուծմանը նույնական կօժանդակեն ժամանակակից մի-

ջուկային ֆիզիկայի միջոցները: Նախատեսվում է տեղադրել հատուկ տեսակի էլեկտրոնային արագարարներ, որոնցում ստացված էլեկտրոնային փնջերով կրայքայվեն ուռուցքի բաղցելային բջիջները:

Այս որոշումների ընդունման, ինչպես նաև աշխատանքների ընթացքին աջակցման գործնթացում մեծ դեր է խաղացել ՌԴ ակադեմիկոս, ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ

Յուրի Հովհաննիսյանը:

ՀՀ Կառավարության մեկ այլ որոշումով հանձնարարված է պայմաններ ստեղծել Երևանի ֆիզիկայի ինստիտուտի գիտնականների համար՝ այդ արագարարի պրոտոնային փնջով իրականացնելու հիմնարար և կիրառական հետազոտություններ: Այդ նպատակով նախագծվել և կառուցվել է հատուկ փորձարարական դահլիճ, որում դուրս է բերվել առանձին



Նկար 11. Չախից՝ Ռադիոհղոսոպաների արտադրության կենտրոնում տեղադրված ՊԱՇ տեսածրող սարքի մոտ ակադեմիկոս Յուրի Հովհաննիսյանն է, աջից՝ ՍՖԱՎՀ տեսածրող սարքը.

## ՖԻԶԻԿԱ

փնջատար: Ցիկլոտրոնը կարող է միաժամանակ երկու փունջ արտադրել, որոնցից մեկը կաշխատի ֆոտո-18 իզոստոպի արտադրության համար, իսկ մյուսը՝ արտաքին փնջատարով դուրս կրերվի փորձարարական դահլիճ:

Այստեղ կատարվելու են հետազոտական աշխատանքներ նյութի կառուցվածքի, նեյտրոնային փնջերի ստեղծման և դրանց բնութագրերի ուսումնասիրման համար՝ միջուկային ռեակտիվաների բնագավառում, ինչպես նաև բժշկական իզոտոպներ ստանալու տեխնոլոգիաների մշակման և զարգացման նպատակով:


Ինչպես արդեն նշվել է՝ այսպիսի ցիկլոտրոնի պրոտոնային փնջով հնարավոր է ստանալ տեխնեցիում-99մ՝ շրջանցելով մայրական մոլիբդենի իզոտոպի ստացումը: Այդ տեխնոլոգիան ակտիվորեն զարգացվում է նաև Երևանի Փիզիկայի ինստիտուտի իզոտոպների բաժնում: Նկար 12-ում պատկերված արտաքին փնջատարի վրա տեղակայվող պինդմարմ-



նային թիրախային սարքում տեղադրվելու է տիտանի սկավառակ, որի մեջ մամլված է մոլիբդենի փոշի:

Այս սարքի մեջ տեղադրված թիրախն ամբողջությամբ կլանելու է պրոտոնային փնջի լրիվ ուժգնությունը՝ վերածելով այն ջերմային էներգիայի: Այդ պատճառով սարքի մեջ տեղադրված թիրախի սկավառակը սառեցվում է հետնամասից հոսող ջրով, իսկ ձակատային

Նկար 13. Տիտանի սկավառակում մամլված մոլիբդենի փոշին և լազերային մշակման հետևանքով առաջացած ցանցած ակոսները



Նկար 12. Պինդմարմանային «Nitra Solid Compact TS06» թիրախային սարքը

մասում՝ հելիումի հոսքով: Այդայիսով՝ հնարավոր է չեղոքացնել 500 Վտ ջերմային հզորությունը, որը փնջի մասնիկների 18 ՄՎէ էներգիայի դեպքում համապատասխանում է 30 միկրոամպեր հոսանքին: Իսկ ցիկլոտրոնն ի վիճակի է ապահովել մինչև 75 միկրոամպեր հոսանք: Ուստի, խնդիր է առաջանալ ավելացնել սառեցման հզորությունը:

Խնդրի լուծման համար լազերային տեխնոլոգիաներով մշակվել են մոլիբդենի փոշուց մամլված թիրախներ՝ մակերևույթին ակոսած հալեցված շերտերով, որի շնորհիվ մեծացվել է մոլիբդենի շերտի թե՛ մեխանիկական ամրությունը, և թե՛ ջերմահաղորդականությունը: Նկար 13-ում բերված է տիտանի սկավառակի պատկերը, կենտրոնում՝ մոխրագույն մոլիբդենի փոշուց մամլված թիրախն է, հաջորդ նկարում այդ նույն թիրախը՝ լազերային մշակումից հետո, երրորդ նկարում՝ նույնի մեծացված պատկերը: Փորձարկումների արդյունքում արձանագրվել է մեխանիկական ամրության և ջերմահա-


դորդականության զգալի աճ:

Հաջորդ հնարքը կայանում էր կրիոգեն սառեցման մեթոդ-ների կիրառման մեջ: Նախազգվել և պատրաստվել է թիրախի համար պղնձե հատուկ հիմք, որի միջով խողովակներով հոսում է հեղուկ ազոտ: Այդ հիմքի վրա ամրացված թիրախը թիկունքից շատ ավելի արագ սառեցման է ենթարկվում, քան հնարավոր է ստանալ ջրային սառեցման համակարգի օգտագործման դեպքում:

Վսպիսով՝ երևանում տեղադրված ցիլինտրոնը հնարավորություն կտա ներդնելու հիվանդների հետազոտման

նորագույն տեխնոլոգիաներ՝ հիմնված միջուկային ֆիզիկայի այնպիսի նվաճումների վրա, ինչպիսին ՊԱՇ զննումն է: Միևնույն ժամանակ, ՄՖԱՀՀ զննման համար ներմուծվող տեխնուցիում-99 ու իզոտոպը կարելի կլինի արտադրել տեղում, ներդնելով տեղում ստեղծված նորագույն տեխնոլոգիաները: Հաշվարկները ցույց են տալիս, որ ցիլինտրոնի փնջով ստացված իզոտոպները կապահովեն Հայաստանում այդ իզոտոպների ամբողջ պահանջարկը:

Ցավոր սրտի, Ռադիոիզոտոպների արտադրության կենտրոնի շահագործման սկիզբը հետաձգ-



վում է, սակայն հույս ծագեց, որ մոտակա ամիսներին կենտրոնը վերջապես կսկսի իր գործունեությունը, և հայրենական առողջապահության համակարգը կհամալրվի ժամանակակից սարքավորումով, հատկապես՝ ուսուցչարանական ախտորոշման բնագավառում:

Հուսանք...

## Ի ԴԵՊ

# ՆԱՍԱ-Ի ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԸ ՀԱՅՏԱԲԵՐԵԼ ԵՆ ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՊԻՏԱՆԻ ԵՐԵՔ ՄՈԼՈՐԱԿ\*

Վերջերս հայտնագործված TRAPPIST-1 մոլորակների համակարգում գիտնականները բացահայտել են չափերով երկրին նման 7 մոլորակ, ընդորում դրանցից երեքի վրա առկա են, այսպես կոչված, կյանքի գոտիներ: Կյանքի համար ենթադրաբար պիտանի մոլորակների վրա կարող է լինել ջուր և մթնոլորտ: Գիտնականների եզրակացություններ պարունակող գեկույցը հրապարակել է "Nature" գիտական հանդեսը:

«Մեր դիտարկումների համաձայն՝ առնվազն 7 մոլորակ չափերով ու զանգվածով նման են երկրին և պտտվում են TRAPPIST-1 շուրջը»,՝ ասված է հոդվածում:

TRAPPIST-1 աստղը չափերով ու զանգվածով նման է Լուսնաթագին, այն Զրիոսի համատեղության կողմում է՝ երկրից հեռու մոտավորապես 39 լուսատարի: Անցյալ տարի գիտնականներն այդ աստղի մոտ հայտնաբերել են 3 մոլորակ, այս տարի՝ ևս 4-ը:

«Նախքան TRAPPIST-1-ի հայտնագործումը գիտնականներին հայտնի էր երկրին նման

ընդամենը 4 մոլորակ, որոնք կարող էին ուսումնասիրել՝ բուն երկիրը, Հրատը, Արուայրը և Մերկուրին: Այժմ դրանց թիվը ավելացել է 7-ով: Մենք կարող ենք ուսումնասիրել դրանք ոչ թե 5-10 տարի հետո, այլ հենց հիմա: Դրանց հատկությունների մասին առաջին տվյալները մենք կստանանք մոտ շաբաթների և ամիսների ընթացքում: TRAPPIST-1-ի պատմությունը դեռ նոր է սկսվում»,՝ բերվում է հոդվածում Լյեժի համալսարանի աստղագետ Միշել Ժիյոնի մեկնարանությունը:

Գիտնականների կարծիքով՝ 7 մոլորակների ջերմաստիճա-

\* <http://www.vedomosti.ru/technology/articles/2017/02/22/678868-uchenie-na-sa-obnaruzili>



Նը կարող է բարենպաստ լինել հեղուկ ջրի գոյության համար: Ընդ որում՝ կյանքի համար առավել հարմարավետ պայմաններ, հավանաբար, առկա են հայտնաբերված 3 մոլորակների վրա: Աստղին ամենամոտ 3 մոլորակների վրա կյանքի գոյության համար չափազանց շոգ է, իսկ ամենահեռավորի վրա՝ չափազանց ցուրտ: Այդ կապակցությամբ կյանքի հետքեր փնտրելու համար հետաքրքրություն են ներկայացնում դրանց միջև ընկած 3 մոլորակները:

Գիտնականների մի խումբ արդեն ուսումնասիրել է TRAPPIST-1 աստղի ձառագայթների լուսակը (սպեկտր) և հայտնաբերել, որ դրանք քարքարոտ մոլորակներ են, որոնց մակերևույթին, ջրից ու թթվածնից բացի, կարող են լինել նաև ածխաթթուներ: Բայց ոչ բոլոր աստղագետներն են համոզված, որ այդ մոլորակները գոյություն ունեն: Ոմանց կարծիքով՝ աստղի պարբերաբար

թուլացող պայծառությունը կարող է առաջանալ անտեսանելի լուսատուի՝ TRAPPIST-1-ի արբանյակի պատճառով:

Հայտնաբերված մոլորակներն ունեն երկրի շառավղի 0,7-ից մինչև 1,08 մասին հավասար շառավիղներ: Դրանց խտությունները մոտ են կամ փոքր-ինչ զիջում են երկրի խտությանը, որը վկայում է մակերևույթի քար-

բարոտ բնույթի մասին: Գիտնականների կարծիքով՝ դրանք կարող են լինել նաև օվկիանոս-մոլորակներ: Ի տարբերություն Երկրի՝ այդ 7 մոլորակները պատվում են աստղի շուրջ դրան մոտ ուղեծրով. դրանց վրա տարին տևում է մեկուկես օրից մինչև 2 շաբաթ: Համակարգի ամենահեռավոր մոլորակը մոտավորապես 4 անգամ ավելի մոտ է աստղին, քան Մերկուրին՝ Արևին:

TRAPPIST-1 համակարգը ներկայում ուսումնասիրում են Hubble, TRAPPIST տիեզերական աստղադիտակների և «Սպիտցեր» ուղեծրային աստղադիտակի օգնությամբ: Այժմ գիտնականները ցանկանում են իմանալ՝ արդյոք դրանք ունեն մթնոլորտ:




# «ՆԱՐԻՆԵ»-ի ՀԱՌԱՐՃԱՎԸ



ԼԱԼԻՐԱ ՀԱԿՈԲՅԱՆ

Կենսաբանական  
գիտությունների դոկտոր

Հետաքրքրությունների  
բնագավառը՝ մանրէաբանություն,  
«Նարինե» ացիդոֆիլային կաթի  
հատկությունների հետազոտում



**Նվիրվում է**  
**անվանի մանրէաբան,**  
**հասարակական գործիչ,**  
**կենսաբանական**  
**գիտությունների**  
**դոկտոր, պրոֆեսոր՝**  
**Լևոն Հակոբի**  
**Երգինկյանի ծննդյան**  
**110 ամյակին**

**L**երգինկյանը ծնվել է 1906թ. Թիֆլիսում: 1924 թ. ավարտել է Թիֆլիսի արտադրա-տնտեսական տեխնիկումի քիմիական բաժինը, 1930թ.՝ Երևանի պետական համալսարանի գյուղատնտեսական ֆակուլտետը: Դեռևս ուսանողական տարիներին խորապես հետաքրքրվել է մանրէաբանությամբ: Լ. Երգինկյանն իր առաջին քայլերը գիտության մեջ կատարել է հայտնի մանրէաբաններ՝ Պ. Քալանթարյանի և Ս. Արովյանի դեկավարությամբ՝ գյուղատնտեսական ինստիտուտի կաթի մանրէաբանության նոր կազմավորված ամբիոնում: Որպես խոստումնալից երիտասարդ մասնագետ նա գործուղվել է Վոլոգդայի կաթնարդյունաբերության ինստիտուտ՝ կատարելագործման: Ուսանել է կաթնամթերքների գծով հայտնի մասնագետներ Ս. Կորուցովի և Գ. Ինիխովի մոտ, որոնց խորհրդով էլ կրթությունը շա-

րունակել է Մուկվայի անասնապահության համամիութենական գիտահետազոտական ինստիտուտում: 1931թ. նա արդեն այդ ինստիտուտի ասպիրանտն էր, և նրա գիտական դեկավարն էր կաթնաթթվային բակտերանների բնագավառի ճանաչված գիտնական Ա. Վոյտկիչը:

1933 թ. Մուկվայում Լ. Երգինկյանը պաշտպանում է թեկնածուական ատենախոսություն. կաթի մանրէաբանության բնագավառում նրան շնորհվում է ավագ գիտական աշխատողի կոչում՝ բարձրագույն ուսումնական հաստատություններում դոցենտի պաշտոն զբաղեցնելու իրավունքով: Մուկվայից նրան գործուղում են կաթի և կաթնամթերքների համամիութենական գիտահետազոտական ինստիտուտի հայկական մասնաճյուղ՝ գիտական աշխատանքի: Նրա ջանքերով Կալինինոյի և Բազարչայի պանրագործարաններում գի-

## ԿԵՆՍԱՏԵԽՆՈԼՈԳԻԱ

տական հետազոտություններ են կատարվում պանիրների մանրէաբանության բնագավառում: Իր անջատած կաթնաթթվային բակտերիաների կիրառման շնորհիվ Լ. Երգինկյանը լավացնում է պանիրների որակը՝ արժանանալով փորձագետների բարձր գնահատականին: Այդ տարիներին նաև մեկուսացնում, ուսումնաժողում և արտադրության է հանձնում կաթնաթթվային բակտերիաների նոր տեսակներ:

Գիտական աշխատանքին զուգահեռ նաև մանկավարժական աշխատանք է կատարում բարձրագույն գյուղատնտեսական դպրոցներում, գյուղատնտեսական ինստիտուտում, դասավանդում «Քիմիա», «Կարֆև» կաթնամթերքների տեխնոլոգիա», «Մանրէաբանություն» առարկաները:

Շուտով, որպես փորձառու մասնագետ, նաև նշանակվում է «Հայպանիրտեստ»-ի կաթնափորձարարական լաբորատորիայի վարիչ, այսուհետև՝ գլխավոր ճարտարագետ: 1941 թ. նաև նշանակվում է ՀԿԿ 2-րդ քարտուղարի օգնական, 1943 թ.՝ ՀԿԿ անսանապահության բաժնի վարիչ, իսկ 1944 թ.՝ ՀԽՍՀ Երկրագործության կոմիսարիատի բարձրագույն ուսումնական հաստատությունների և տեխնիկումների վարչության նախագահ: 1945 թ. Լ. Երգինկյանը ՀԿԿ-ի և ՀԽՍՀ ԳԱ նախագահության որոշմամբ աշխատանքի է նշանակվում ԳԱ միկրոկենսաբանության սեկտորում՝ որպես լաբորատորիայի վարիչ:

Այդ տարիներին նրան մտահոգել է կրծքով սնվող երեխաներին անհրաժեշտ սննդով ապահովելու խնդիրը: Մայրական կաթի բացակայությու-



նը կամ անբավարար քանակը գիտնականը բացատրում է կերակրող մայրերի որոշ մասի մոտ առկա «առիքլինիկական մաստիտ» հիվանդությամբ կամ արյան ռեզուս-բացասական գործոնով, որոնք էապես ազդում են երեխաների նորմալ աճի ու զարգացման վրա, հաճախ առաջ բերելով աղեստամոքսային համակարգի հիվանդություններ, իսկ երբեմն՝ մահ: Այդպիսի երևոյթները կանխելու միտումով 1949 թ.-ից գիտնականն անջատում է կաթնաթթվային ացիդոֆիլային բակտերիաներ, ընտրում դրանց լավագույն տեսակները՝ ստեղծելով բուժիչ ացիդոֆիլային կաթ՝ «Նարինե», որի համար ԽԽՍՀ գյուտերի և հայտնագործությունների պետական կոմիտեն (ԳՀՊԿ) 1963 թ. նրան տվել է հեղինակային վկայական:

Միևկայում և Երևանում կլինիկական փորձարկումները հաստատեցին ացիդոֆիլային կաթի բուժիչ դերն աղեստամոքսային հիվանդությունների բուժման և մայրական կաթին փոխարինելու գործում: Փորձարկումները ցույց տվեցին նաև, որ այն անփոխարինելի սնունդ է մայրական կաթից զուրկ երեխաների համար: Բուժիչ հատկություններից բացի, այն նաև սննդարար է: ՀԽՍՀ Նախարարնե-


րի խորհրդի 1966 թ. մարտի 10-ի որոշմամբ «Նարինե» կաթը մուտք գործեց մանկական կաթնախոհանցներ, որոնց «Նարինե»-ի մերաններ էր մատակարարում ՀԽՍՀ ԳԱ միկրոկենսաբանության ինստիտուտի խմորող միկրոօրգանիզմների լաբորատորիան: Հետագայում Երևանի 5-րդ՝ «Արարկիր» մանկական հիվանդանոցին կից կազմակերպվեց հատուկ կենտրոն, որտեղ արտադրված «Նարինե»-ն մատակարարվում էր հանրապետության տարբեր շիջանների մանկական հիվանդանոցներին, իսկ ԽԽՍՀ շուրջ 50 հիվանդանոցներին և գիտահետազոտական ինստիտուտներին մերաններ էր մատակարարում Միկրոկենսաբանության ինստիտուտի խմորող միկրոօրգանիզմների լաբորատորիան: Լ. Երգինկյանը Հայաստանի և ԽԽՍՀ բոլոր հիվանդանոցներին, անհատ մարդկանց, գիտահետազոտական ինստիտուտներին «Նարինե»-ի մերաններ տալը գրանցել է: Նրա գրանցումների համաձայն՝ 1950–1991 թթ. առարկել է շուրջ 700000 մերան: Լաբորատորիայի մի աշխատակցի վրա դրված էր փոստով մերաններ ուղարկելու պարտականությունը:

Մեծ գիտնականի աշխատանքները չեն վրիպել գիտնականների և բժիշկների տե-

սաղաշտից. նրանով սկսել են հետաքրքրվել Մոսկվայի Համամիութենական գյուղատնտեսական միկրոկենսաբանության, Կաթնարդյունաբերության գիտահետազոտական ինստիտուտերը, Մոսկվայի Ռուսակովի անվան, Երևանի Հ. Գաբրիելյանի անվան մանկական հիվանդանոցները, ԳԱ կենսաբանական բաժանմունքը, Երևանի սուր-վարակիչ կլինիկական հիվանդանոցը, զինվորական հոսպիտալը և այլ կազմակերպություններ: 1965 թ.-ից Համամիութենական կաթնարդյունաբերության գիտահետազոտական ինստիտուտի բակտերիական մակարդների լաբորատորիան Լ. Երգինկյանի անշատած և ուսումնասիրած ացիդոֆիլային բակտերիաներն օգտագործել է հեղուկ և չոր բակտերիական մակարդներ պատրաստելու համար և այն առաքել ԽՍՀՄ կաթի կոմիտինատներին, հիվանդանոցներին, մանկական կոնսուլտացիաներին, դեղատներին՝ դիետիկ և բուժիչ պատրաստուկներ պատրաստելու համար:

«Նարինե»-ն պարունակում է մանկական օրգանիզմին անհրաժեշտ բոլոր նյութերը՝ կաթնայուղ, տարրեր սպիտակուցներ, կաթնաշաքար, ամինաթթուներ, կարնոր միկրոտարրեր, որոնք ապահովում են երեխաների նորմալ աճն ու զարգացումը: Այն բարձրացնում է երեխայի պաշտպանունակությունն աղիքային բազմաթիվ հիվանդությունների և վարակների նկատմամբ՝ նպաստելով բուժման ժամկետների կրճատմանը և հիվանդների արագ ապաքինմանը:

«Նարինե»-ն ենթարկվել է կլինիկական բազմազան փոր-



ձարկումների միութենական և հարբավետական տարրեր գիտահետազոտական ինստիտուտներում և հիվանդանոցներում պարզելու համար դրա արդյունավետությունը դիզենտերիայի, դիսպեպսիայի, որովայնային տիֆի, պարատիֆի, պալարախստի (տուբերկուլոզ), սալմոնելոզի և այլ տարարնույթ հիվանդությունների կանխարգելման և բուժման գործում:

ՀԽՍՀ ԿԿ և Նախարարների Խորհուրդը դեռևս 1984 թ. որոշում են ընդունել «Նարինե»-ի արտադրության համար գործարան կառուցելու վերաբերյալ: Հետագայում մշակվել են

կաթի արտադրության համար գիտատեխնիկական հրահանգները, տեխնիկական պայմանները (1985 թ.), ՀՀ Պետական ստանդարտը (Աֆրիկյան Է. Գ., Հակոբյան Լ. Հ., 1998 թ.):

Լ. Երգինկյանն իր գործընկերների հետ առաջարկել է տեսություն, որի համաձայն՝ թշկության և անասնարուժության մեջ օգտագործվող կաթնաթթվային բակտերիաները ֆիզիոլոգիական, կենսաքիմիական, արտադրական բարձր հատկությունների հետ մեկտեղ պետք է ունենան նաև քիմիաբուժական և հակաբիոտիկ դիմացկունություն ֆտալազոլի և ֆենոլի նկատմամբ: Վեր-

## ԿԵՆՍԱՏԵԽՆՈԼՈԳԻԱ

ջինս սինթեզվում է աղիքներում որպես թունավոր նյութ՝ սպիտակուցների ձեղքման և քայլայման պրոցեսում: Նշված թունավոր նյութերը, որոնք օգտագործվում են բժշկության մեջ, ձնշում են գործադրում մարդու աղեստամորսային միկրոֆլորայի վրա, առաջացնելով դիսբակտերիոզ: Նրան հաջողվել է անջատել և ընտրել այդ նյութերի նկատմամբ դիմացկուն կարնաթերպային բակտերիաներ, որոնք այժմ լայնորեն կիրառվում են բժշկության մեջ:

Բազմազան է Լ. Երգինկյանի ուսումնասիրությունների բնագավառը: Նրան երկար տարիներ մտահոգել են բույսերի էպիֆիտ միկրոֆլորայի փոփոխությունները՝ պայմանավորված գյուղատնտեսական վնասատուների դեմ օգտագործվող թունաքիմիկատների (կրոտիլին, հերսաքլոր, սիմազին, ոռզոր և այլն) ազդեցությամբ: Պարզվել է, որ թունաքիմիկատները ոչչացնում են ոչ միայն գյուղատնտեսական մշակաբույսերի վնասատուներին, այլ նաև բույսերի էպիֆիտ օգտակար միկրոֆլորան, կաթ-

նաթթվային բակտերիաները, որոնք կարևոր դեր են խաղում մարդու և կենդանիների մարտողության, բանջարեղենի թթու դրման, բույսերի սիլոսացման, ինչպես նաև տարբեր կաթնամթերքների պատրաստման գործում: Լ. Երգինկյանը և իր աշխատակիցներն անջատել և ուսումնասիրել են բազմաթիվ կաթնաթթվային բակտերիաների շտամներ, որոնք դիմացկուն են վերը նշված բիմիկատների նկատմամբ և չեզոքացնում են թունաքիմիկատների ազդեցությունը մարդկանց առողջության վրա:

Լ. Երգինկյանն զբաղվել է նաև հայկական կաթնամթերքների պատմությամբ: Նրան մտատանջել է այն փաստը, որ հայկական յուղորդը չի օգտագործվում Հայաստանում, իսկ արտասահմանում լայն կիրառություն ունի, իսկ գիտական գրականության մեջ այն նույնիկ համարվում է բուլղարական կաթնամթերք:

Հնուց հայերը պատրաստել են յուղորդ և օգտագործել այն որպես աղեստամորսային հիվանդությունների, արևահարության, այրվածքների, օճի ու



կարիքի խայթոցների, մարդկանց ու կենդանիների թունավորումների բուժման միջոց: Լ. Երգինկյանը, անդրադառնալով այս հարցի լուսաբանմանը, Մաշտոցի անվան մատենադարանի և իր աշխատակիցների միջոցով տարբեր մատենագրություններից, ինչն հայկական ձեռագրերից փաստեր է հավաքել յուղորդի պատրաստման, պահպանման, օգտակար, բուժիչ հատկությունների մասին և ապացուցել, որ այն իրոք հայկական կաթնամթերք է, իսկ բազում հալածանքների և դժվարությունների պատճառով իրենց բնօրբանից գաղթած հայերը յուղորդը տարածել են ամբողջ աշխարհում:

Հայտնի է, որ ոուս կենսաբան-մանրէաբան ի. Մեշնիկովս Արևմտյան Հայաստանում ձամփորդելիս ծանոթացել է տեղաբնակ հայերի՝ յուղորդի պատրաստման տեխնալոգիային: Նրա աշխատակիցներ Կուենդին և Միխելսոնը յուղորդից անջատել են մանրէներ, որոնց Մեշնիկովս անվանել է «բուլղարական» ցուպիկ (1907):

Լ. Երգինկյանին հաջողվել է լեռնային շրջանների բնակիչներից վերցնել տարբեր կաթնամթերքների նմուշներ, անջատել կաթնաթթվային բակտերիաներ և պատրաստել յուղորդ: Ուսումնասիրություններից պարզվել է, որ այդ կաթնաթթվային բակտերիա-





## ԿԵՆՍԱՏԵԽՆՈԼՈԳԻԱ

այն քամել, ֆերմենտացնել հատուկ կաթնաթթվային ստրեպտակուլներով, ացիդոֆիլային բակտերիաներով և ստացված մածուկը խառնել կաթնաշիձուկին, հալած պանիրներին՝ դրանք հարստացնելով վիտամիններով և միաժամանակ բարելավելով համը և բուրմունքը: Համտեսության հանձնաժողովն այդ կաթնաշիձուկը և հալած պանիրներն արժանացրել են բարձր գնահատականի:

1985 թ. ձապոնիայի «Միկի-Տրեյդինգ» ընկերության ներկայացուցիչները ժամանել են Երևան՝ մոտիկից ծանրթանալու «Նարինե» կաթնամթերքին, որը բուժում և կարգավորում էր աղեստամոքսային համակարգի միկրոֆլորան և աղիքային բազմաթիվ հիվանդություններ:

Նրանք ցանկանում էին «Նարինե»-ն օգտագործել 1945 թ. ձապոնական Հիրոսիմա և Նագասակի քաղաքների ատոմային ռմբահարման արդյունքում ծառագայթահարված 195000 մարդկանց բուժման մեջ, որոնք տառապում էին նաև դիսրալիտիզով: ՀՀ ԳԱ ակադեմիկոս Գ. Աֆրիկյանի դեկավարությամբ, շուրջ մեկ տարի նորից ստուգվել են «Նարինե»-ի կենսարանական և մանրէարանական հատկությունները, ամփոփվել փորձարկված տարրեր հիվանդությունների ժամանակ «Նարինե»-ի բժիշկների կիրառած քանակները, հիվանդության տևողությունը և բուժման ժամանակահատվածը: Ձապոնացիների խնդրանքով թարգմանվել են միկրոկենսարանության ինստիտուտի և բժիշկների կատարած և տպագրած աշխատանքները, հանրամատչելի հոլվածները: Այս ամենից հե-

տո տրվել է լիցենզիա՝ 8-ական տարով՝ 1986–1994 թթ, երկրորդ անգամ՝ 1994–2002 թթ.: Վյդ տարիներին միկրոկենսարանության ինստիտուտում և ձապոնիայի «Միկի-Տրեյդինգ» ընկերությունում «Նարինե»-ի նոր ուսումնասիրությունների արդյունքները միմյանց էին փոխանցում հաշվետվություններով: Ձապոնիայի գիտնականները պարզել էին, որ «Նարինե»-ն խթանում է արյան մեջ ինսերֆերոնի կոնցենտրացիայի աճը՝ բարձրանելով օրգանիզմի իմունիտետը

րի (Բուլղարիա, ԱՄՆ, Կանադա, Հոլանդիա, Ռուսաստան, մերձալթյան և միջինասիական հանրապետություններ, Ուկրաինա, Բելոռուս) տարրեր բժշկական գիտահետազոտական ինստիտուտներ, հայ գիտնականներ և բժիշկներ այն փորձարկել են աղեստամոքսային տարրեր հիվանդությունների (թունավոր դիսպեչապիա, որովայնային տիֆ, պարատիֆ, պալարախտ, դիգենտերիա, սալմոնելոզ, նորածինների պորտի թարախսակալումներ և այլն) կանխարգելման և բուժ-



բարձկեղային բջիջների հանդեպ, իսկ աղեստամոքսային համակարգում թուլացնում է աղիներում ուսուցքներ առաջացնող «գյուկոռոնիդազա» ֆերմենտի ակտիվությունը: Վյժմ այդ ուղղությամբ շատ աշխատանքներ են կատարում նաև ԱՄՆ գիտնականները:

«Նարինե»-ի հակարաղցեղային հատկությունները դեռևս լրիվ ուսումնասիրված չեն, բայց կասկած չկա, որ այդ հատկությունները նրանում առկա են: Ձապոնիայի հետ լիցենզիոն պայմանագրի կնքումից հետո շատ երկրնե-

ման գործում: «Նարինե» կաթնամթերքը փորձարկել են հատուկ վտանգավոր հիվանդությունների (տուլարեմիա, ժանտախտ, խոլերա և այլն) հարուցիչների և արյան լեյկոզով հիվանդ երեխաների միկրոֆլորայի կարգավորման գործում: Պարզվել է, որ «Նարինե»-ն ճշել է այդ վտանգավոր ախտածին մանրէների զարգացումը, ուստի հարկ եղած դեպքում այն կարելի է օգտագործել (Հակոբյան Լ. Հ., Զարյան Լ. Մ.):

ՀՀ ԳԱ ակադեմիկոս Հ. Ավետիսյանի նախաձեռնությամբ և



գովազդով սկսվել են «Նարին»-ի փորձարկումները նաև ՀԽՍՀ ԳԱ ֆիզիոլոգիայի ինստիտուտում (ՀՀ ակադեմիկոս Ս. Կարապետյան և ուրիշներ), իսկ Բ. Ֆանարջանի անվան ուռուցքաբանության գիտական կենտրոնում կազմակերպվել է «Նարին»-ի արտադրություն (ղեկավար՝ կ.գ.թ. Լանա Չիլ-Հակոբյան):

1988 թ. Սպիտակի երկրաշրմից հետո աղետի գոտուց 8000 երեխա տեղափոխվեց Աղլեր և Ասապա: Նրանց մեծ մասն ուներ աղեստամոքսային հիվանդություններ: ՀՀ առողջապահության նախարարության պահանջով Լ. Հակոբյանը և Լ. Չարյանը գործուղվել են ծովափնյա քաղաքներ և «Նարին»-ի կիրառմամբ կանխարգելել և բուժել այդ հիվանդությունները: Աղլերի և Ասապայի մասկական հիվանդանոցների գլխավոր քժիշկներ Ս. Շեմենկոն և Դ. Գրոսմիկոն «Նարին»-ս ընդգրկել էին ինչպես երեխաների, այնպես էլ

ամբողջ տարածքի երեխաների և ամռանն այդ քաղաքներում հանգստացող մասնուկների օրաբաժնում, որպես սնունդ և ստամոքսաադիքային սուրվարակիչ հիվանդությունների կանխարգելման և բուժման միջոց: Հայ և արտասահմանի շատ գիտնականներ և քժիշկներ Սպիտակի երկրաշրմի և Զեռնորիլի ատոմակայանի վրարից հետո ուսումնասիրել և պարզել են, որ աղետի գոտիներում բնակվող մարդկանց կերաբաժնում օգտագործելով «Նարին»-ս՝ կարելի է կարգավորել նրանց աղեստամոքսային համակարգի միկրոֆլորան, նյարդային համակարգը, բարելավել քունը:

ՀՀ առողջապահության նախարարաւթյան ռադիոկենսաբանության ինստիտուտում Զեռնորիլում ձառագայթահարված և դիսբակտերիտոզով հիվանդների ուսումնասիրումից պարզվել է, որ ընդունված եղանակներով հնարավոր չէ կարգավորվել կենսացենոզի

միկրոֆլորան: Հակարիտոտիկների, սուլֆամիդային պատրաստուկների երկարատև օգտագործումը հանգեցրել էր այդ պատրաստուկների նկատմամբ դիմացկունության: Փորձարկվել էր նաև դիսբակտերիոզը բիֆիդոբակտերիաների տարբեր պատրաստուկներով և գենտամիցինով կարգավորելու տարբերակը: Պարզվել էր, որ գենտամիցինով կարգավորությունը տևում է 22-30 օր, մինչդեռ «Նարին»-ով՝ 7 օր, ըստ որում «Նարին»-ս վերականգնել էր նաև հաստ աղիքի բնական միկրոֆլորան: (Ն. Մ. Հովհաննիսյան և ուրիշն. 1990-1993 թթ.):

«Նարին»-ի ուսումնասիրությամբ և փորձարկումներով ներկայում գրաղվում են նաև Ռուսաստանի, Ուկրաինայի, Բելուստի, Վրաստանի, մերձբալթյան և միջինասիական երկրների գիտնականները և քժիշկները, որոնք ստացել են բազմաթիվ արտոնագրեր:

Հարկ է հատուկ նշել այն հսկայական դժվարությունները, որոնք կապված էին հանրապետության համար ծանր տարիներին, լույսի և ջերմության գործնականում բացակայության պայմաններում «Նարին»-ի Ep.317/402 շտամի (հեղ. Լ. Հ. Երգինսկյան) պահպանման հետ:

Դրանց հաղթահարման շնորհիվ է, որ այսօր ԳԱԱ կենսատեխնոլոգիայի ինստիտուտը և միկրոօրգանիզմների ավանդադրման հանրապետական կենտրոնն ունեն այդ «հրաշք» մասրէն:

Հողվածի հեղինակը 2004 թ. կազմակերպված ԳԱԱ միկրոկենսաբանության ինստիտուտում մանրէների ավանդադրման հանրապետական

## ԿԵՆՍԱՏԵԽՆՈԼՈԳԻԱ

Կենտրոնի պահպանությանն է հանձնել Լ. Երգինկյանի ստորագրությամբ դիմումը և «Նարինե»-ի մանրէն:

Հայ գիտնականները չեն բավարարվել «Նարինե»-ի «Երկրային» ուսումնասիրություններով. «Նարինե»-ն բազմիցս ուղարկվել է նաև տիեզերք: Ժամանակ առ ժամանակ Բայկոնուրից ստացվող «Նարինե»-ի մակարդներն ապացուցում են, որ մի քանի տարի տիեզերքում մնալը չի ազդել դրա կենսաբանական հատկությունների վրա (ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Է. Գ. Աֆրիկյան):

Պրոֆեսոր Լ. Երգինկյանը հեղինակ է ավելի քան 200 գիտական հոդվածների, 3 մենագրության, 7 մեթոդական ձեռնարկների, բազմաթիվ ուսցինալիքատորական առաջարկությունների: Նոր արտադրաքարտերով միկրոօրգանիզմների, մեթոդների մշակման և դրանք ժողովագրության և բժշկության մեջ ներդնելու համար ԽՍՀՄ ԳՀՊԿ-ն նրան շնորհել է հեղինակային 35 վկայական: Պրոֆ. Լ. Երգինկյանն զբաղվել է նաև հասարակական ակտիվ աշխատանքով 1959-1990 թթ. եղել է Համամիութենական միկրոկենսաբանական ընկերության



հայկական մասնաճյուղի նախագահ, միութենական միկրոկենսաբանական ընկերության կենտրոնական վարչության անդամ: Գիտական գեկուցումներով հանդես է եկել միության, հանրապետության, արտասահմանյան բազմաթիվ գիտաժողովներում և ուսումնական հաստատություններում:

ՀԽՍՀ Կառավարությունը բարձր է գնահատել Լ. Երգինկյանի գիտամանկավարժական և հասարակական գործունեությունը: Նա պարգևատրվել է «Պատվո նշան» շքանշանով, Համամիութենական ժողովրդական տնտեսության նվաճումների ցուցահանդեսի սոցմրցման հաղթողի մեդալներով և այլ պարգևներով: Գիտնականի համար մեծագույն պարգևն էր 1986 թ. ԽՍՀՄ ԳԱ նախագահության և Համամիութենական միկրոկենսաբանական ընկերության՝ նրան տրված Լուի Պաստորի ծննդյան 150-ամյակի հորելյանական մեդալը: Իր աշխատակիցների հետ Լ. Երգինկյանն արժանացել է նաև «ԽՍՀՄ Կաստակավոր Գյուտարար»

բարձր կոչմանը՝ բազմաթիվ գիտական հայտնագործությունների և դրանք արտադրության և բժշկության մեջ ներդնելու համար:

Մեծ են Լ. Երգինկյանի ծառայությունները նաև մանրէաբանական կադրերի պատրաստման գործում: Նրա դեկավարությամբ և խորհրդատվությամբ պաշտպանվել են թեկնածուական և դոկտորական բազմաթիվ ատենախոսություններ: Շատ աշխարհահիշակ գիտնականներ մինչ օրս հետաքրքրվում են նրա աշխատանքներով:

Մինչև իր կյանքի վերջը Լ. Երգինկյանն աշխատում էր երիտասարդական ավյունով, ուներ նախանձելի հիշողություն: Նա 85 տարեկանում էլ կրկնում էր. -ես 40 տարեկանի ուժ ու եռանդ ունեմ և շատ գործեր պետք է ավարտին հասցնեմ: Նա հանկարծամահ է եղել 1991 թ. մայիսի 31-ին Երևանում:

Երգինկյան-գիտնականի բազմաթերուն գործնեությունը գիտության անշահախնդիր ծառայելու վառ օրինակ է:



# ԻՆՉ Է «ԼԱՎ ԵՂԱՆԱԿԸ» ԵՎ ՈՐՏԵՇԴ ԱՅՆ ՓՆՏՐԵԼ

**Ա**վելի ոյուրին է սահմանել, թե ինչ է վատեղանակը, գրում է “Weatherwise” գիտահանրամատչելի ամերիկյան հանդեսը, որն ամբողջությամբ նվիրված է կլիմայի, եղանակի և օդերևոթաբանության խնդիրներին: Այս կլիման, որում մարդը չի կարող մի քանի րոպեից ավել ապրել առանց հատուկ հազուստի, ջերմությամբ կամ օդորակիչ սարքերով ապահովված կացարանի պաշտպանության, վատահորեն վատն է: Իսկ լավ կլիման հիմնականում սովորությունից կախված անհատական հասկացություն է: Մեկի համար հաձելի է ապրել այստեղ, որտեղ եղանակը կլոր տարի գրեթե նույնն է, մյուսի համար՝ այստեղ, որտեղ հստակ արտահայտված են տարվա չորս եղանակներն իրենց դրական ու բացասական կողմերով:

Այսուամենայնիվ, ելեղով մեր օրգանիզմի պահանջներից, կարելի է մոտավորապես սահմանել, թե մարդու համար ինչպիսի կլիմայում է ավելի հեշտ ապրել: Մեր մարմի բնականու ջերմաստիճանը

36,6 °C է: Այդ ցուցանիշի շրջակայրում ջերմաստիճանը պահպանում է գլխուղեղի հատուկ բաժին՝ ենթատեսաթումբը (հիպոթալամուս): Ցրտից մենք դողում ենք, և մկանների հածախակի թույլ կրծատումների շնորհիվ մեր մարմինը տարանում է: Շոգից մարդը քրտնում է, քրտինքը գոլորշիանում է՝ սառեցնելով մաշկը: Բազմաթիվ փորձերը ցույց են տվել, որ հանգիստ վիճակում, այսինքն՝ առանց մկանային ճիգերի, թեթև հագնված մարդն առավել հարմարավետ է զգում իրեն 20 °C ջերմաստիճանում: Զուրչէ, որ այդ ջերմաստիճանն անվանում են սենյակային:

Այժմ՝ խոնավության մասին: Չափազանց բարձր խոնավությունը խանգարում է ջերմակարգավորմանը, քանի որ դժվարացնում է մաշկից քրտինքի գոլորշիացումը: Չափազանց ցածր խոնավությունն առաջացնում է մաշկի ու աչքերի, թոքերի ու շնչողիների գրգռում: Կատարված փորձերի արդյունքները հակասական են (հավանաբար այն պատճառով, որ, ի տարրերություն մաշկի ջերմաստիճանի, մարդկանց

մաշկերը տարբեր են), սակայն մեծամասնության համար հարմարավետ է 50 %-անց խոնավությունը (երբ օդում ջուրը երկու անգամ ավելի քիչ է, քան կարող էր լինել տվյալ ջերմաստիճանում):

Ել ինչ ենք հասկանում եղանակ ասելով: Ամպամածություն, տեղումներ: Հոգեբանները պարզել են, որ տարվա ընթացքում արևոտ շատ օրեր ունեցող վայրերում ապրող մարդկանց տրամադրությունը, որպես կանոն, ավելի բարձր է, քան ամպամած կլիմայի պայմաններում ապրողներինը: Անձրևը նույնպես փչացնում է տրամադրությունը, ձիշտ է, կարծ ժամանակով: Բայց կան մարդիկ, ում տրամադրությունը հենց արևոտ եղանակին է փչանում: Հարավոր է՝ այն պատճառով, որ հածախ հենց այդ եղանակի հետ է հածախ կապվում տապը, որը բորբոքում է գրգռականությունը և ագրեսիվությունը:

Իսկ ինչ կարելի է ասել քամու մասին: Բեռլինի Հումքության անվան համալսարանի հոգեբանները պարզել են, որ

\* «Հայկա և յիշնե», 2015, N 2.

բամին բացասարար է ազդում տրամադրության վրա: Մարդկանց 90 %-ի տրամադրությունը կախված է նաև տրավա եղանակների փոփոխությունից, ընդ որում՝ այն փշանում է հատկապես աշնանից դեպի ձմեռ անցնելիս:

Ուրեմն, ո՞ր կլիման կարելի է մարդկանց մեծամասնության համար կատարյալ համարել: «Բարեղանակ» ենթադրական երկրում քամիներ, առավել ևս՝ թայֆուններ կամ տոռնադրուներ չեն պատահում: Այդ օրինյալ վայրի երկնքում սև ամպեր չեն կուտակվում: Անշուշտ, այնտեղ չի լինում ամպրոպ կամ կարկուտ: Այստեղ ծանոթ են մառախուղին և, իհարկե, ծիսածածկույթին, անզամ եթե կան ավտոմեքենաներ և գործարաններ: Թեև բոլոր օրերն արևոտ են, ջերմաստիճանը ցերեկը չի գերազանցում  $20^{\circ}\text{C}$ -ը, նույն չափավոր ջերմաստիճանն է դիտվում նաև գիշերը, ընդ որում՝ կլոր տարի: Տարվա ընթացքում փոխվում է միայն ցերեկվա ու գիշերվա տևողությունը: Խոնավությունը

մշտապես 50 % է:

Մեր մոլորակի վրա այդպիսի երկիր չկա, բայց կան վայրեր, որտեղ կլիման քիչ թե շատ մոտենում է այդ երազանքին: Ղեկավարվելով թվարկված չափանիշներով՝ կարելի է առանձնացնել երկրի 3 շրջան:

Մարոկոյի արևմտյան ծովափը, որի կենտրոնում Կասպիանկա քաղաքն է: Ամենացուրտ ամսին՝ հունվարին, այստեղ ցերեկային ջերմաստիճանը  $17,2^{\circ}\text{C}$ , իսկ գիշերայինը՝  $7,2^{\circ}\text{C}$ : Ամենաշող ամսին՝ օգոստոսին, ցերեկը դիտվում է  $27^{\circ}\text{C}$ , իսկ գիշերը՝  $21^{\circ}\text{C}$ : Ամենախոնավ ամսիսը դեկտեմբերն է: տեղումների միջին քանակը 129 մմ է: Ամենաշորը հունիսն է՝ 12 մմ տեղումներով: Ուժեղ քամիներ գրեթե չեն լինում:

Կանարյան կղզիների Լաս-Պալմաս քաղաքի կլիման ավելի լավն է: Միջին ցերեկային ջերմաստիճանը տարվա ընթացքում այստեղ  $21^{\circ}\text{C}$  է, առավելագույնը՝  $23,5^{\circ}\text{C}$ , գիշերային նվազագույնը ցերմաստիճանը  $7,2^{\circ}\text{C}$  է: Հունիսի օգոստոս ամսիներին տեղումներն ընդհանրապես բա-

ցակայում են, իսկ ամբողջ տարվա ընթացքում տեղումների քանակը շուրջ 127 մմ է: Շատ արև, քիչ քամիներ: Ճիշտ է, պատահում են եղանակային աղետալի երևույթներ. 2005 թ. այստեղ էական վնաս է հասցել արևադարձային Դելտա փողոքիկը:

Վերջապես, երկրագնդի ամենալավ կլիմա ունեցող վայրը Չիլիի Վինյա դել Մար քաղաքն է (բնակչությունը՝ շուրջ 350 հազար): Միջին առավելագույն ջերմաստիճանը  $19^{\circ}\text{C}$  է, նվազագույնը՝  $13^{\circ}\text{C}$ : Ամենաշող ամսին՝ հունվարին, ցերեկային ջերմաստիճանը  $24^{\circ}\text{C}$  է, գիշերայինը՝  $15^{\circ}\text{C}$ : Զմեռային հովիս ամսին ցերեկը ջերմաստիճանը  $15^{\circ}\text{C}$  է, իսկ գիշերը՝  $10^{\circ}\text{C}$ : Ամենաշատ տեղումները լինում են հունիսին և հովիսին, իսկ տարվա ընթացքում դրանց քանակը 480 մմ է: Ցիկլոններ և տոռնադրուներ չեն պատահում, բայց երբեմն քաղաքը պատվում է մառախուղով (հիրավի, աշխարհում չկա կատարելություն):

Ահա թե որտեղ է պետք ապրել:




# ԴԵՂԵՐԻ ԱՆՀԱՄԱՏԵ- ԴԵԼԻՌԻԹՅՈՒՆԸ



ՌՈՒԴԻԿԱ ՀԱԿՈԲՅԱՆ

Մ. Հերացու անվ. ԵրՊԲՀ դոցենտ Գիտական հետաքրթությունների ոլորտը՝ դեղագիտություն



**F**ազմադեղաբուժությունը կամ պոլիֆարմակոթերապիան (հունարեն՝ «պոլի»՝ բազմաթիվ, «ֆարմակոն»՝ դեղ և «թերապիա»՝ բուժում բառերից) զարգացել է դեռևս մ.թ.ա.: Ներկայում, չնայած 15000-ից ավելի պատրաստի դեղաձևերի առկայությանը, հանպարաստի դեղատոմսերը չեն կորցրել իրենց նշանակությունը: Բժիշկների՝ դեղանյութերի զուգակցված օգտագործման ձգտումը հետապնդում է 2 նպատակ՝ բարձրացնել բուժամիջոցի արդյունավետությունը և վերացնել կամ մեղմացնել ակտիվ նյութի կողմանակի, վտանգավոր ազդեցությունը:

Դեղերի զուգակցման նախապայմաններն են՝

- մեկ դեղով բուժման անբա-

վարար արդյունավետությունն ու անվտանգությունը,

- մի քանի հիվանդության առկայությունը:

Դեղերի սխալ զուգակցումները կարող են հանգեցնել բուժման այրոցեսի անվերահսկելիության, կողմնակի երևույթների և բուժման արժեքի մեծացման:

Զուգակցումները կարող են լինել՝ խելամիտ, անխմասր, վրանզավոր:

Եթե դեղերի զուգակցման դեպքում նկատվում են ակտիվ նյութերի բուժական ազդեցության թուլացում կամ խիստ ուժեղացում, խեղաթյուրված, թունավոր երևույթներ կամ մահ, ապա այդ դեղերն անհամատեղելի են: Ըստ Համաշխարհային առողջապահական կազմակերպության (ՀԱԿ) վի-

ճակագրական տվյալների՝ զուգակցված դեղերի 25%-ը պոտենցիալ վտանգավոր է, և դրանց օգտագործման պահանջվ տարեկան գրանցվում է մոտ 80 հազար մահ:

Դեղերի ֆիզիկական և քիմիական անհամատեղելիությունը դիտարկվում է իմաստականում դեղաձևային փուլում (նախքան օրգանիզմ մտնելը, դեղաձևային անհամապեղելիություն): Ֆիզիկական և քիմիական անհամատեղելիությունը մեծ մասամբ նկատելի է:

Նոր դեղերի հզրը հնարք դժվարացնում է բժշկի աշխատանքը դեղերի նշանակման, առավել ևս զուգակցման գործում, որոնց մասին մասնագիտական գրականությունում լուրջ տեղեկություններն սկսել են երևալ վերջին 2 տասնամյա-

## ԴԵՂԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Կում: Այս բնագավառում մեծ է դեղագետի դերը, ով, զինված լինելով նյութերի ֆիզիկական և քիմիական հատկությունների մասին հարուստ գիտելիքներով, կարևոր դեր է կատարում առողջապահության համակարգում: Բազմաթիվ զարգացած երկրներում բժշկի դեղատոմսը պարտադիր երաշխավորում է կլինիկական դեղագետը:

### 1. Ֆիզիկական անհամատելի հիության պատճառներն են՝

- հեղուկ դեղաձևերում նստվածքագոյացումը,
- անհամասեռ խառնուրդների առաջցումը,
- սորունության կորուստը,
- լուծույթների կուագուլումը,
- շերտավորումը,
- ակտիվ բաղադրիչի մակակալանումը ադսորբենտի կողմից:

Երբեմն, բժշկի հետ խորհրդակցելուց հետո, որոշ անհամատելի հիություններ կարելի է վերացնել:

Ներկայում դեղաձևերի գործարանային արտադրության ընդարձակման և դեղատնային պատրաստուկների զգալի կրծատման, ինչպես նաև կասկածելի դեպքերում դեղերի՝ առանձին-առանձին օրգանիզմ ներմուծման հնարավորության շնորհիվ ֆիզիկական և քիմիական անհամատելի հիության պրոբլեմը մասնակիորեն լուծվել է, սակայն պետք է հաշվի առնել նաև, որ նման անհամատելի հիությունները որոշ դեպքերում կարող են հանդես գալ նաև օրգանիզմում:

2. Քիմիական անհամատելի հիությունը դեղախառնուրդի բաղադրիչների միջև քիմիական պրոցեսների արդյունք է, որը հաճախ տեսանելի է հեղուկ դեղաձևերում: Այդ երևոյթներն ուղեկցվում են նստվածքագո-



յացմամբ, գույնի, հոտի, համի փոփոխումով, զագի անջատումով, երբեմն՝ նաև առանց տեսանելի փոփոխությունների: Թույլ հիմքերից (մորֆին, ասորովին, պապավերին, դիմետրոլ, դիբազոլ և այլն) և ուժեղ թթուներից ստացված աղերն ալկալիական միջավայրում վերածվում են թունավոր, ջրում վաս լուծվող թույլ հիմքերի: Ուժեղ հիմքերի և թույլ թթուների աղերը (կոֆեին-բենզուատ, բարիտուրատներ, սալիցիլատներ, բեզոատներ և այլն) թթուների հետ զուգակցելիս նույնպես անջատվում են թունավոր նստվածքներ:

Վիտամինները զուգակցելիս, օրինակ՝ թիամինը՝ (B<sub>1</sub>) սիկոտինաթթվի (PP), ասկորբինաթթվի (C), պիրիդօքսինի (B<sub>6</sub>), ռիբոֆլավինի (B<sub>12</sub>) կամ ռետինոլ (A), էրգոկալցիֆերոլի (D) հետ՝ նկատվում է դրանց միակողմանի կամ երկկողմանի ակտիվազրկում:

3. Դեղաբանական անհամատելի հիություն: Բջջի, հյուսվածքի, օրգանի, համակարգի վրա մի քանի դեղերի տարա-

բնույթ ազդեցության հետևանքով կարող է նկատվել բուժիչ ազդեցության ուժեղացում, թուլացում, իսպառ անհետացում կամ անսպասելի երևոյթների առաջացում: Զուգակցված դեղերի ազդեցությունները կարող են մասսամբ կամ լրիվ հակադրվել կամ միավորվել:

Դեղանյութերի հիմնավորված համատեղում արդյունավետ և անվտանգ դեղերի ստեղծման ուղիներից է, այն ունի լայն հնարավորություններ և պետք է ենթարկվի որոշակի դրույթների՝


- զուգակցված դեղերը պետք է ազդեն տարբեր մեխանիզմներով,
- թունայնությամբ չպետք է գերազանցեն առանձին բաղադրիչներին,
- ակտիվ նյութերի դեղաբանակինենիկական պարամետրերը միմյանցից չպետք է շատ տարբերվեն,
- դեղաձևում բաղադրիչներից մեկի դեղաչափը չի կարելի փոխել առանց մյուս ակտիվ նյութի դեղաչափի փոփոխության:

ՀԱԿ-իառաջարկած «Հիմնա-

կան դեղերի ցուցակը» (2010թ.) ընդգրկում է 18 բուժամիջոց, որոնք երկու կամ ավելի ակտիվ նյութերի խելամիտ զուգակցումներ են: Օրինակ՝ սուլֆամեթօքսազոլի և տրիմեթօքսիմի զուգակցումը (կոտրիմօքսազոլ):

**Դեղերի դեղաբանական անհամատեղելիության տեսակները**

### 3.1. Դեղաբանակինետիկական անհամատեղելիություն:



Այս դեպքում մի նյութի ազդեցության տակ արյան մեջ փոխազդում է մյուս նյութի կամ մետաբոլիտի (կենսաձևափոխման միջանկյալ արգասիք) կոնցենտրացիան՝ կախված դեղայութի ներծծման, բաշխման, կենսաձևափոխման (մետաբոլիզմ) և արդարաւում պրոցեսներից: Նշված բոլոր փուլերում զուգակցված դեղայութերը կարող են փոխազդել միջանց հետ և էապես ազդել միջանց արդյունավետության վրա: Դեղի ազդման հետ կապված այդ տարրեր փուլերի ուսումնահրությունները կարելի է իրագործել ֆիզիկական, քիմիական, կենսարանական և այլ մեթոդներով:

**Ներծծում:** Բուժական նշանակություն ունի աղեստամոքսային համակարգից դեղի ներծծման արագությունն ու ամրութականությունը: Զուգակցված դեղերի քիմիական փոխազդեցության արդյունքում կարող է փոխվել ստամոքսի կամ աղիների պարունակության թթվայնությունը, որը նպաստում է այդ պարունակության անցմանը մարսողական համակարգ, փոխում միկրոֆ-




լորան:

**Բաշխում:** Թափանցելով արյան մեջ՝ դեղանյութերը դարձելիորեն կապվում են արյան պլազմայի սպիտակուցների հետ (ոչ մենահատուկ ընկալիչներ), և դրանց մի մասը մինչև սպիտակուցից ազատվելը չի մասնակցում կենսապրոցեներին: Որոշ նյութեր նպաստում կամ խանգարում են սպիտակուցների հետ մյուս նյութերի փոխազդեցությանը: Շատ դեղայութեր 90-98%-ով կապվում են պլազմայի սպիտակուցների հետ և, նույն սպիտակուցի նկատմամբ մեծ հակում ունեցող այլ նյութ օրգանիզմ ներմուծելիս, դրանք դուրս են մղվում սպիտակուցների հետ առաջացրած կոմպ-

լեքսից և կտրուկ մեծացնում արյան մեջ դեղի բուժիչ կոնցենտրացիան, թունայնությունը:

**Կենսաձևափոխություն:** Անկախ օրգանիզմ ներմուծման ձևից, շփվելով կենսահեղուկների հետ, դեղը ենթարկվում է կառուցվածքային փոփոխությունների: Առաջին փուլում այն վերածվում է մետաբոլիտների, որոնց ակտիվությունը ելային մոլեկուլի համեմատ կարող է լինել տարբեր: Այս փուլում գերակշռում են օրսիդացման ռեակցիաները, որոնք կենդանի օրգանիզմի էներգիայի կարևորագույն աղբյուրն են: Երկրորդ՝ փոխանակման փուլում մեթիլացում, սուլֆուրացում, ացիլացում, միացում



զյուկուրոնաթյուի, ա-ամինաթթուների հետ դեղն ակտիվագրկվում է, բունագերծվում, դառնում է ջրալոյց և արտաթրովում է օրգանիզմից: Դեղի կենսածակախությունը կատարվում է յարդում՝ միկրոստմալային ֆերմենտների միջոցով, որոնց ակտիվությունը կարող է փոփոխվել այլ նյութերի հետ դրանց կապվելու հետևանքով: Որոշ դեղանյութեր՝ **ֆերմենտախնդուկորներ** օրգանիզմում համարյա չեն փոփոխվում, որի հետևանքով խթանում են յարդում դեղերի փոխարկումները կատալիզող ակտիվ ֆերմենտների սինթեզը (քնարենքը՝ հատկապես բարիտուրատներ, ներշնչակային թմրեցնող միջոցներ՝ դիէթիլեթեր, ազոտի ենթօրսիդ, ցավազրկողներ՝ բութադիոն, հակահիատամիններ՝ դիմետրոլ, նաև ալկոհոլ, թեյ, կոֆեին, և այլն), որն արագացնում է գուգակցված դեղանյութի կենսափոխարկումը, նպաստում դրա բուժիչ ազդեցության թուլացմանը: Ֆենոբարբիտալի (նաև սուլֆանիլամիդների, սալիցիլատների) և անուղղակի հակամակարդիչների (օրինակ՝ սինկումար) գուգակցման դեպքում վերջինիս դեղաչափը ավելացվում է, իսկ բուժման պրոցեսում ֆենոբարբիտալի ներմուծումն ընդհատելիս առաջանում է արյունահոսության վտանգ: Ֆենոբարբիտալի (նույնիսկ սինկումար) գուգակցման դեպքում վերջինիս դեղաչափը ավելացվում է, իսկ բուժման պրոցեսում ֆենոբարբիտալի ներմուծումն ընդհատելիս առաջանում է արյունահոսության վտանգ: Ֆենոբարբիտալ արագացնում է նույնիսկ ներծին (էնդոքեն) նյութերի, օրինակ՝ բիլիուրինի, K և D վիտամինների կենսափոխարկումը: Որոշ դեպքերում ոչ բուժիչ դեղաչափերով առաջարկում են այն կիրառել յարդի ֆունկցիան ակտիվացնելու համար (օրինակ՝ դեղնախստի դեպքում): Դեղերի կենսածակախուման

արագության վրա ազդում են տարիքը, ախտաբանական վիճակը, սեռը, դեղերի գուգակցումները, ծխախոտը, ալկոհոլը, մսնդի բնույթը և այլ գործոններ:

**Ֆերմենտախնդուկորներ,** կապվելով ապահովակացնող ֆերմենտների հետ, դանդաղեցնում են կենսածակախուման պրոցեսները, որը վտանգավոր է հատկապես դեղերի կանոնավոր ընդունման ժամանակ: Մասնավորապես, մետրոնիդազոլը, լևոմիցետինը, ֆուրազոլիդոնը, ցեֆալոսպորինները, տետուրամը ձնշում են *ացելուլիդեհիդրեհիդրոգլունազ* ֆերմենտի (ADF) ակտիվությունը, որի արդյունքում օրգանիզմում սպիրտից առաջացած ացետալդեհիդը չի վերածվում քացախաթթվի և թունավորում է օրգանիզմը (ջերմություն, հլոց, վախ, ձնշման անկում, մահ): Դեղնամորթների շուրջ 70%-ի մեջ այդ ֆերմենտը բացակայում է: Ակնհոլի և հակադեպրեսանտների, հոգեմետների, տագնապամարիչների, թմրեցնող ցավազրկողների գուգակցումը ձնշող ազդեցություն է թողնում կենտրոնական նյարդային համակարգի (ԿնՀ) վրա, իսկ կլոֆելինի դեպքում դիտվում է կողապս, հիշողության կորուստ, մահ: Ներկայում ուսումնասիրված է մրգահյութերի, հատկապես թուրինջի արգելակիչ ազդեցությունը ցիտոռում P-450<sup>4</sup> 3A4 (CYR3A4) *իզոֆերմենտի* ակտիվության վրա, որը մասնակցում է բոլոր հայտնի բուժամիջոցների մոտ 60%-ի կենսափոխանակման պրոցեսներում: Հայտնի է, որ թուրինջի հյութը արյան արենահյութում մեծացնում է տարբեր դեղամիջոցների, օրինակ՝ դիիդրոպիրիդինների, հակասորիմիկների, հոգեմետների, ստատինների,

հակարիոտիկների կրնցենտրացիան: Թուրինջի հյութը ձնշում է սիլենաֆիլի (Վիագրա) կենսածակախումը՝ արյան մեջ զգայիրեն մեծացնելով վերջինիս կրնցենտրացիան, որը կարող է հանգեցնել թերձնշման (հիպոտոնիա) կամ մահվան: Մյուս հյութերը ևս օժտված են նույնանման հատկություններով, սակայն ավելի քիչ են ուսումնասիրված:


**Արտաքրորում:** Դեղանյութերի փոխազդեցությունը կարող է տեղի ունենալ նաև օրգանիզմից դրանց արտաքսման պրոցեսում, որում կարևորագույն դեր են խաղում երիկամները և լեղին: Մեզի թթվայնությունը (pH) նպաստում կամ խոչընդոտում է նյութերի արտաքրումանը:

**3.2. Դեղաբանադինամիկական (Փարմակատինամիկական) անհամատեղելիություն:** Այս դեպքում ուսումնասիրում են դեղերի և դրանց մետաքրուների առաջացրած փոփոխություններն օրգանիզմում: Նյութերից մեկը կարող է ազդել մյուսի ինչպես հիմնական, այնպես էլ կողմնակի դեղաբանական ազդեցության վրա: **Դեղաբանադինամիկական** փոխազդեցության արդյունքում փոխազդում են ոչ թե անմիջականորեն դեղանյութերը, այլ դրանց ազդեցությունները, և հնարավոր է ազդեցության ինչպես փոխադարձ ուժեղացում, այնպես էլ թուլացում՝ օրգանիզմի որոշակի կառուցվածքային և ֆունկցիոնալ համակարգերի վրա դեղերի հակառակ ազդեցության հետևանքով: Այս անհամատեղելիությունն արտահայտվում է սիներգիզմի (մասնավոր դեպքը՝ գերգումարային սիներգիզմ), երբ սովորաբար դեղանյութերն ազդում

Են նույնանման մեխանիզմով (հունարեն «սիներգիա՝ համարել ազդեցություն»)և անդագնիզմի (նաև մասնակի անտագոնիզմի) երևոյթներով: **Սիներգիզմի** երևոյթը դեղանյութերի գուգակցման արդյունքում դեղի ազդման ուժի՝ իր բաղադրիչներից յուրաքանչյուրի ազդման ուժի գերազանցում է՝ նույն դեղաչափերի դեպքում: **Գերգումարային սիներգիզմի** դեպքում գուգակցված բուժամիջոցն ազդեցությամբ գերազանցում է (երբեմն՝ մի քանի անգամ) բաղադրիչների ազդեցության գումարը: **Միներգիզմի** երևոյթները վերաբերում են դեղերի ոչ միայն առաջնային, այլև վտանգավոր, կողմնակի երևոյթներին: Անհամատեղելիության այս տեսակները համարվում են հարաբերական, քանի որ տեղյակ լինելու դեպքում կարելի է կիրառել փորբացված դեղաչափեր, հասնել բարձր արդյունավետության, խուսափել անցանկալի հետևանքներից, ստանալ տնտեսական օգուտ: Գերգումարային սիներգիզմի կանխատեսման որոշակի դրույթներ չկան, որի պատճով այդ երևոյթները, ցավոք, բացահայտվում և ուսումնասիրվում են դժբախտ դեպքում:

**Անտագոնիզմը** լինում է ուղղակի, անտողակի, մասնակի, մեկ կամ երկկողմանի: Անտագոնիստները կարող են ծառայել որպես հակաթույներ և ֆիզիկաբիմիական եղանակներով վնասազերծել օրգանիզմում հայտնված թույները (օրինակ՝ ունիտոլը) կամ հանդիսանալ թույների անտագոնիստներ՝ ֆերմենտների և ընկալիչների վրա ազդելու միջոցով (ֆունկցիոնալ ան-

### Դեղերի մետաբոլիզմին մասնակցող ֆերմենտների ակտիվության վրա ազդում են



տագոնիզմ): Ուղիղ անտագոնիզմը կոչվում է մրցակցային, երբ օրգանիզմում միաժամանակ շրջանառվում են քիմիական բնույթով և տարածական կառուցվածքով նման միացություններ: Սուլֆանիլամիդները և սուլֆանիլմիզանյութի ածանցյալները պայթարում են բջջի միևնույն ընկալիչի հետ կապվելու համար՝ խախտելով միմյանց կինետիկական պրոցեսների արագությունը: Օրգանիզմում կարող են առաջանալ այդ դեղանյութերի գերդեղաբաժիններ՝ համապատասխան ծանր հետևանքներով (դիսբակտերիոզ, հիպոգլիկեմիա): Միցակցային անտագոնիզմի երևոյթը է նաև մորֆինի թույնային ազդեցության վերացումը նալորֆինով:

**Պենիցիլինային** բուժման ընթացքում հակացուցված է ասկորբինաթթվի (Վիտամին C) վիկասոլի, ցիանկորալամինի կիրառումը, քանի որ դրանք մեծացնում են արյան մակարդելիությունը՝ նպաստելով օրգանիզմում մակարդուկագոյացման (թրոմբոզ) պրոցեսների գարգացմանը: Մանկաբուժու-

թյան մեջ պենիցիլինների և լսումիցետինի գուգակցումը մեծացնում է մենինգոլիկային սեպսիսից մահվան վտանգը:

**Հակարիոտիկներն** առանց խիստ անհրաժեշտության չի կարելի գուգակցել ջերմիջեցնող, քնարեր, գյուկոնկորտիկորտային (օրինակ՝ կրոտիգրն, հիդրոկորտիզոն, պրենիզոլոն) պատրաստուկների հետ: **Մորֆինն** օրգանիզմ ներմուծելիս շնչառական կենտրոնի հնարավոր ձնշումը խափանելու համար ներմուծում են ատրոպին, որը չի թուլացնում մորֆինի հիմնական ազդեցությունը: **Սրտային գլիկոգիդները** սրտի խրոնիկ անբավարության դեպքում հիմնական բուժամիջոցներն են, որոնց ազդեցությունը, հավանաբար, պայմանավորված է  $\text{Na}^+$ ,  $\text{K}^+$ -ԱՏՖ-ազ ֆերմենտի արգելակման հատկությամբ, այսինքն՝ դրանք խախտում են, այսպես կոչված նատրիումական պոմպի աշխատանքը, որի արդյունքում մեծանում է ներքջաջային նատրիումի իոնների և փոքրանում կալիումի իոնների քանակը: Հետևա-



բար՝ սրտային գլխողիդները չի կարելի զուգակցել նաև  $K^+$  իոնը չխնայող միզամուլների (հիպոթիազիդ, ֆուրոսեմիդ, կորտիկոստերոիդներ) հետ, որոնք առաջացնում են կալիումի իոնների կոնցենտրացիայի նվազում (հիպոկալիումիա): Շաքարախտով և սրտային անբավարարությամբ տառապող մարդուն չի կարելի միաժամանակ նշանակել ինսուլին և սրտային գլխողիդներ՝ միոկարդի վրա դրանց հակասական ազդեցության պատճառով:

**Ասկորբինաթթուն** նպաստում է պրոտրոմբինի առաջացմանը, այսինքն՝ բարձրացնում է արյան մակարդելիությունը: Այս և բոլոր նման դեպքերում դեղը չի կարելի զուգակցել նույնանման (մակարդիչներ, վիտամին  $K$ ) կամ հակառակ (հակամակարդիչներ՝ կումարինի ածանցյալներ) ազդեցությամբ բուժամիջոցների հետ: Ասկորբինաթթվի մեջ դեղաբժիշները ճնշում են ենթաստամոքսային գեղձի ֆունկցիան, արյան մեջ բարձրացնում սալիցիլատների, բենզիլպենիդի-

լինի, տետրացիկլինների տոլկոսը, իջեցնում կումարինի ածանցյալների հակամակարդիչ ազդեցությունը, իսկ մեզում՝ նպաստում բյուրեղագոյացմանը: Այն նաև նպաստում է աղիներում երկարի պատրաստուկի ներծծմանը, արագացնում էթանոլի արտամղումն արյան համակարգից: Ասկորբինաթթուն՝ զուգակցված ոռուտինի հետ, կիրառում են մազանորների թափանցելության մեծացման դեպքում, սակայն այն խիստ հակացուցված է շաքարախտի, տրոմբոֆլեբիտի, միզաքարային հիվանդությունների դեպքում, եղիության 1-ին եռամյակում, 3 տարեկանից ցածր տարիքում:

**Տետրացիկլինների** կանոնավոր կիրառումը կամ զուգակցումը լայն ազդման սպեկտրով այլ հակարիտափիկների հետ կարող է առաջացնել սնկային հիվանդություններ, հանգեցնել աղիքային միկրոֆլորայի (դիսրակտերիոզ), հետևաբար՝ նաև  $K$  վիտամինի սինթեզի խախտման, որը կարող է արյունահոսության պատճառ դառնալ:

**Ասպիրինը** սովորաբար խմում են կաթով, որը պահպանում է ստամոքսի լորձաթաղանթը, սակայն ներկայում համարում են, որ այդ դեպքում ասպիրինի ազդեցությունը լրիվ չեղորանում է: Կաթը թեյի, սուրճի հետ խմելիս ակտիվազրկում է կոֆեինի մոտ 40%-ը:

Դեղերի անհամարելելիության հետ ծանոթացման սույն հողվածի նպարակն է՝ զզուշացնել գարքեր դեղերի միջոցով՝ ինքնարուժությամբ զրադարձելու հնարավոր վրանգների մասին, և բուժական խնդիրներ ծագելիս անպայման դիմել բժշկի կամ դեղագելիք:

## Ի ԴԵՊ

# ՖՐԱՆՍԻԱՆ ՔԻՉ-ՔԻՉ ՀԱԼՎՈՒՄ Է


Ծովն առաջանում է դեպի Լա Մանշի առափնյա ֆրանսիական Օլու քաղաքը: Այդ մասին դեռևս գրել է 1837 թ. Վիկտոր Հյուգոն՝ այցելելով Օլու: Քաղաքը կառուցված է կավճային ափին, որը ողողում են ալիքները: 2001 թ. ողողամաշման արագությունը տարեկան 30 սմ է. Վերջին տվյալներով՝ այն հասել է տարեկան մինչև 70 սմ-ի: Նախատեսում են հաջորդ 5 տարիների ընթացքում զարթափին մոտ կառուցները տեղափոխել 160 մ-ով՝ ափից հեռացնել դեպի ցամաքի խորքը:



«Наука и жизнь», 2015, N 1.

## ՆԱՆՈՇԱՐԺԻՉ

Տեխասի համալսարանում (ԱՄՆ) ստեղծել են ամենաարագ և հոսալի նանոշարժիչը: Այն բաղկացած է ընդամենը 3 դետալից, պտտվում է դրսից գործադրվող մազնիսական դաշտի ազդեցությամբ և զարգացնում է մինչև 18 հազար պտույտ րոպեում: Սարքի երկարությունը և լայնությունը չեն գերազանցում 1 միլիոնը, այն հավաքվել է նանոդետալներից, որոնք տեղաշարժում էին էլեկտրական դաշտերի օգնությամբ: Փորձարկումների ժամանակ շարժիչն առանց ընդհատումների աշխատել է 15 ժամ, մինչդեռ գոյություն ունեցող նմանատիպ սարքերը զարգացնում են 14–500 պտույտ րոպեում և կարող են աշխատել ընդամենը մի քանի րոպե: Հետագայում նանոշարժիչը կարող է օգտագործվել մասրաչափ պոմպերում դեղամիջոցների միկրոբաժններն անմիջապես առանձին բջիջներ ներմուծելու համար:



«Наука и жизнь», 2015, N 1.




## ՏԵՍԱԽՈՍԱՓՈՂ

Լրտեսական սարբավորանքը զնալով կատարելագործվում է: Պատուհանագողին դրված է ծաղկաման, իսկ սենյակում ընթանում է գաղտնի գրույց: Դիմացի շենքից ծաղկին ուղղված է արագագործ տեսախցիկ, որը նկարահանում է, թվում է, անշարժ ծաղիկը: Բայց դրա թերթիկները թեթևակի շարժվում են՝ ձայներին համատակտ: ԱՄՆ Մասաչուսեթսի տեխնոլոգիական ինստիտուտում մշակել են համակարգչային ծրագիր, որն ընդունակ է վերականգնել ձայնը ծաղկի թերթիկի, սեղանին դրված թղթի կտորի, կարտոֆիլի չիասի թրթումներով, վարագույրի և այլ թեթև իրերի աննկատ շարժումներով: Որպես խոսափողի մեմբրան կարող է ծառայել անգամ սեղանին դրված բաժակում լցված ցանկացած հեղուկի մակերևույթը:



## ՍԵՎԻՑ ԷԼ ՍԵՎ

Ասգլիական մի ընկերություն ստեղծել է աշխարհում ամենաարագ և հոսալի նանոշարժիչը: Այն իիշեցնում է խոզանակ՝ ստեղծված այլումինե նրբաթիթերի վրա ուղղածից տեղադրված միլիարդավոր ածխածնային նանոխողովակներից: Այդ շերտի վրա ընկնող ցանկացած լույս խճճվում է խողովակների անտառում ու գրեթե չի անդրադառնում: Ամենասև մուրը կլանում է ընկնող լույսի 96 %-ը, իսկ նոր նանոնյութը՝ 99,965 %-ը: Ուստի աշքն ընկալում է այն որպես սև անցք: Գերսև նյութը կարելի է օգտագործել աստղադիտակների, մանրադիտակների, լուսանկարչական և այլ օպտիկական սարքերի դիտափողակները ներսից պատելու համար՝ կողմնակի լուսավորումից խուսափելու նպատակով: Արևային մարտկոցների այդպիսի ծածկույթը կրաքարացնի դրանց ՕԳԳ-ն: Նյութի ստեղծողներն ակնարկում են, որ այն հնարավոր է օգտագործել նաև ռազմական նպատակով, բայց խուսափում են մանրամասնել այդ միտքը: Նրանք չեն խոսում նաև դրա արտադրության արժեքի մասին, միայն նշում են, որ «նյութը շատ թանկ է»:





ՄԱԿ-ի կանխատեսումը մինչև 2100 թ. մարդկության քանակի վերաբերյալ նվազեցվել է 12 միլիարդից մինչև 10,9 միլիարդ. Երկրի բնակչության աճը փորձինչ դանդաղել է:



Մեր մոլորակի բոլոր սառցադաշտերի ընդհանուր մակերեսը, քացառությամբ Գրենլանդիայի և Անտարկտիդայի մերձքաղաքային սառցադաշտերի, 730 հազար քառ. կմ է: Վերջերս անցկացված առաջին համաշխարհային ցուցակագրման ընթացքում պարզվել է, որ սառցադաշտերի թիվը շուրջ 200 հազար է:



Ծխելու դեմ պայքարի ֆրանսիական ազգային ծրագիրը, որը ներկայացվել է հասարակությանը սեպտեմբերի կեսե-

րին, նպատակադրվել է 2014 թ. ծնված երեխաներին դարձնել չժխող ֆրանսիացիների առաջին սերունդ:



ԱՄՆ-ում ավելի շատ չինական, քան Մակդոնալդս ընկերության ռեստորաններ կան:



Ո՞ւմ անունն է ամենից շատ հիշատակվում համացանցում: «Խուզարկելով» համաշխարհային ցանցը՝ ֆրանսիացի ծրագրավորողները պարզել են, որ դա շվեդ բնագետ Կառլ Լինեյի անունն է: Բանն այս է, որ նա առաջինն է նկարագրել և լատինական գիտական անուններ տվել բույսերի և կենդանիների շուրջ երկու հազար տեսակների: Իսկ կենսաբանական անվանակարգի


կանոններով՝ ցանկացած այդպիսի անվանում ընդունված է ավարտել առաջին նկարագրության հեղինակի ազգանվամբ կամ գոնե ազգանվան սկզբնատառով: Այդ է պատճառը, որ *Linnæus* ազգանունը և *L* տառն այդքան հաճախ են հանդիպում համացանցում:



Տորոնտոյի Ռւյակերտոնի համալսարանի (Կանադա) հոգեբաններն ապացուցել են, որ ուտելուց առաջ համակարգչային խաղերով գրաղվելը նվազեցնում է ախտրժակը և կալորիաների սպառումը: Ճիշտ է, ձարպակալման դեմ այս միջոցն ազդում է միայն 9-14 տարեկան տղաների վրա, աղջիկների վրա այն ազդեցություն չի գործում:



# ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ԱՇՅՈՒՍԱԿԻ ՆՈՐ ՏԱՐՐԵՐ՝ ՕԳԱՆԵՍՈՆ ԵՎ ՈՒՐԻՇՆԵՐ\*



**Ղ**եաի հավերժություն տանող ամենաուղիղ ճանապարհն անցնում է միջատացանցի և նրբունելու միջով։ Ամեն տարի կենսաբանները շարունակում են հայտնաբերել նախկինում անհայտ կենդանիների, հիմնականում՝ միջատների 15-20 հազար տեսակներ, և դրանք բոլորն անուններ պետք է ստունան։ Վերջինների ընտրության հարցում այդ տեսակների առաջին հայտնագործողներն ունեն մեծ ազատություն։ այսպես են հայտնվում քաղաքական գործիչների, երաժիշտների, գրողների, ունաց սիրեցյալների անուններով կենդանիները։ Քիչ չեն հիշարժան անունները նաև տիեզերքում։ Աստղերը միայն բացառիկ դեպքում են կոչվում մարդկանց անուններով, փոխարենը «անվանական» աստղակերպերի, գիտասողների, երկնային մարմինների խառնարանների և բարձունքների թիվը հասնում է հազարների։

Սակայն այս մարդկանց թի-



վը, որոնց անունները հանդիպում են «Պարբերական այուսակում, ընդհամենը մեկուկես տասնյակ է։ 14 տարր անվանակոչվել է ի պատիվ 15 գիտնականի՝ ներառյալ Մարիա և Պիեռ Կյուրինները։ Եվս երկուսը կապված են այլ մասնագիտությունների մարդկանց հետ՝ սամարիումն ստացել է իր անվանումն սամարսկիտ հանքա-

նյութից, որն այդպես է կոչվել լեռնագործ ձարտարագետ Վասիլի Սամարսկի-Բիլսովցի անունով, Լիվերմորիում անվանումն առաջացել է Լիվերմորի ազգային լաբորատորիայի անունից, որը Կալիֆորնիայի նահանգի Ռոբերտ Լիվերմորի հիմնած համանուն քաղաքում է։

Կան կասկածներ, որ Լեկոկ դը Բուաբոդրանը գալիումը կոչել է ոչ թե հարազատ Ֆրանսիայի, այլ հենց իր պատվին, քանի որ նրա առաջին անունը նույնպես նշանակում է «արլոր»։ Բայց եթե հաշվի չառնենք այդ կիսազգարձալի պատմությունը, կյանքի օրոք «անձնական տարր» ունենալու պատվին արժանացած միակ մարդն ամերիկացի քիմիկոս Գլեն Սիրորգն է։ Մի ժամանակ նա ստանում էր նամակներ, որոնցում նշված հասցեն ամբողջովին կազմված էր քիմիական տարրերի անվանումներից՝ Am, Cf, Bk, Lr, Sg. ամերցիում, կալիֆորնիում, բերկլիում, լոուրենսիում, սիբորգիում «ԱՄՆ, Կալիֆորնիա, Բերկլի, Լոուրենսի

\* Պոպուլյարնա մեխаниկա, 2016, N 12

**ԹԻՄԱԿԱՆ ՏԱՐԵՐԻ ԱՆՎԱՌՈՒՄՆԵՐԻ ԾԱԳՈՒՄԸ**

H																									He
Li	Be																								
Na	Mg																								
K	Ca	Sc	Ti	V	Cr	Mn	Fe	Co	Ni	Cu	Zn	Ga	Ge	As	Se	Br	Kr								
Rb	Sr	Y	Zr	Nb	Mo	Tc	Ru	Rh	Pd	Ag	Cd	In	Sn	Sb	Te	I	Xe								
Cs	Ba		Hf	Ta	W	Re	Os	Ir	Pt	Au	Hg	Tl	Pb	Bi	Po	At	Rn								
Fr	Ra		Rf	Db	Sg	Bh	Hs	Mt	Ds	Rg	Cn	Nh	Fl	Mc	Lv	Ts	Og								
		La	Ce	Pr	Nd	Pm	Sm	Eu	Gd	Tb	Dy	Ho	Er	Tm	Yb	Lu									
		Ac	Th	Pa	U	Np	Pu	Am	Cm	Bk	Cf	Es	Fm	Md	No	Lr									

անվան ազգային լաբորատորիա, Սիրողին»:

Պարբերական աղյուսակի վերջին նորությունները հնարավորություն են տալիս նույն կերպ դիմելու նաև ակադեմիկոս Յուրի Հովհաննիսյանին՝ Ru, Mc, Db, Og: «Խուսաստան, Մհովայի մարզ, Դուրսա, Օգանեսյանին (Հովհաննիսյանին)» կամ ռութենիում, մուսկովիում, դուրսիում, օգանետուն: Դեռևս 2016 թ. հունիսին Տեսական և կիրառական քիմիայի միջազգային միությունը (ԻՅՈՒՊԱՔ)՝ կազմակերպություն, որը կարգավորում է նաև քիմիական անվանակարգը, հայտարարել է 4 նոր տարրերի անվանման մասին: 113-րդ տարրի անվանման հարցում առաջնությունը պատկանել է ճապոնական RIKEN հետազոտական կենտրոնին, և այն դարձավ նիխոնիում: 115-րդ, 117-րդ և 118-րդ տարրերը համատեղ հայտնագործել են մերձմուկովյան Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտի, Կալիֆորնիայի Լիվերմորի ազգային լաբորատորիայի և Թենեսիի

Օուք Ռիջ ազգային լաբորատորիայի գիտնականները: Դրանք դարձան մուսկովիում, թենեսին և օգանետուն:

Հետևելով ԻՅՈՒՊԱՔ-ի հանձնարարականներին՝ 117-րդ տարրը վերջանում է «ին»-ով (ինչպես աստատինը), իսկ 118-րդը՝ «ոն»-ով, ինչպես բոլոր ազնիվ գազերը: Ասենք, քիմիական տարրերի անվանման խիստ կանոններ գոյություն չունեն: Ավանդույթի համաձայն՝ դրանց անվանումները կարող են կապված լինել առասպելական կերպարի կամ օրիելտի հետ (սերայալ նրանք, որ անուններ են տվել երկնային մարմիններին), ինչպես կորալտը կամ ուրանը: Բայց այդ տարրերը կարելի է անվանել հանքանյութի (օրինակ՝ կալցիում, լատիներեն calx, այսինքն՝ կիր) կամ աշխարհագրական կետերի պատվին: Օրինակ՝ Խոերբյու շվեդական փորրիկ քաղաքը, որի շրջակայրում հայտնաբերվել են հազվագյուտ հողային մետաղների հարուստ հանքաշերտեր, ներկա է միանգամից 4 տարրե-

րի անվանումներում՝ էրբիում, տերբիում, իտերբիում և իտրիում: Վերջապես, անվանումը կարող է արտահատել տարրի հատկությունները, ինչպես արգոն՝ ազնիվ գազը՝ հունարեն argon՝ «դանդաղ, անշարժ»: Եվ միայն ընտրյալ տարրերն են արժանանում անվանի գիտնականների կամ այդ տարրերն առաջինը հայտնաբերողների անունները կրելու պատվին:

ԻՅՈՒՊԱՔ-ի հանձնարարականները վերջնական չեն. հայտարարվում է մի քանի ամիս տևող դադար (մորատորիում), որի ընթացքում ընդունվում են մեկնաբանություններ, լրացումներ և առարկություններ: Բայց այդ ընթացակարգը ընդամենս ավարտում է նոր տարրի կարգավիճակի ձանաշման երկար գործընթացը, ինչպես եզրափակիչ «այո»-ն՝ ամուսնության արարողության ժամանակ: Նոյեմբերին "Pure and Applied Chemistry" (Սարութ կիրառական քիմիա) ամսագրում տպագրվում է պաշտոնական հաղորդագրություն՝ դրանց նոր անունների վերջնական շնորհման մասին:

# ՄԱԳՆԻՍԱԿԱՆ ԲԱՐՁՈՎ ԱՐԱԳԸՆԹԱՑ ԳՆԱՑՔՆԵՐ

ԱՐԵԳ ԳՐԻԳՈՐՅԱՆ

տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր  
Գիտական հետաքրքրությունների ոլորտը՝ կառավարման և ավտոմատացման էլեկտրամագնիսական համակարգերի հետազոտություն, մաթեմատիկական մոդելների ու նախագծման եղանակների մշակում, նոր՝ կատարելագործված համակարգերի ստեղծում

**D**ամանակակից գնացքները զարգացնում են բավականաչափ մեծ արագությունների, որի հետևանաքը ասիվների ու ռելսների միջև առաջանում են համեմատաբար մեծ շիման ուժեր, որոնք կարող են շարքից հանել գնացքների ընթացամասը: Այս ուժերը փորձացնելու և դրա շնորհիվ գնացքների արագությունները հնարավորինս մեծացնելու նպատակով դրանց տակ տեղադրում են մագնիսական կախոցներ, որոնք էլեկտրամագնիսական ուժի շնորհիվ գնացքը բարձրացնում են շարժուղու վեր և պահում օդում կախված վիճակում: Կախոցների շնորհիվ վերանում է ասիվների և ռելսների միջև շիման ուժը, քանի որ գնացքը, գծային էլեկտրաշարժիչով կամ որևէ այլ բնույթի շարժիչով ստեղծված քարշի ուժի ազդեցությամբ, ոչ թե ընթանում է ռելսների վրայով, այլ թռչում (ձախրում) է շարժուղու

վրայով: Շարժուղու և օդում կախված գնացքի միջև առաջացած օդային շերտը, որին «հենվում-թիկնում» է գնացքը, պայմանականորեն անվանում են «մագնիսական բարձ»:

Սագնիսական կախոցով (մագնիսական բարձով) արագընթաց գնացքները շահեկանորեն տարբերվում են մյուս տրանսպորտային միջոցներից հետևյալ առանձնահատկություններով.

- ունեն վերգետնյա հասարակական տրանսպորտային միջոցների ամենամեծ արագությունը՝ 603 կմ/ժ,
- աշխատում են էլեկտրաէներգիայի համեմատաբար փոքր ծախսով. Էներգիան ծախսում են 3 անգամ ավելի արդյունավետ, քան ավտոմեքենայում և 5 անգամ ավելի արդյունավետ, քան ինքնաթիռում,
- ունեն շահագործման համեմատաբար փոքր ծախսեր,
- աշխատում են համեմատաբար անաղմուկ:

Ժամանակակից արագընթաց գնացքների նախատիպերն ստեղծվել են դեռևս նախորդ դարի սկզբներին. 1902 թվականին գերմանացի գյուտարար Ալֆրեդ Զայդենն ստացել է արտոնագիր առաջին գծային էլեկտրաշարժիչով գնացքի ստեղծման համար: Դրանից 4 տարի անց Ֆրանկլին Սրոթ Սմիթը մշակել է մագնիսական կախոցով գնացքի նախատիպը: Քիչ ավելի ուշ՝ 1937-1941 թթ., գերմանացի ճարտարագետ Գերման Կեմպերն ստացել է գծային էլեկտրաշարժիչով գնացքների գյուտերի մի քանի արտոնագիր:

1940-ական թվականներին բիտանացի ճարտարագետ Էրիկ Լեյզվեյտը, ում շատերն անվանում են «Մագլիի հայր» (մագլի՝ անգլերեն magnetic levitation-ից, որը բառացի նշանակում է մագնիսական ճախրանք և արձանագրում մագնիսական բարձի առկայությու-

## ՆԱՐԵԿ ԱՊԵՏՅԱՆ

Ժարտարագիտության

մագիստրոս

Գիտական հետաքրքրությունների ոլորտը՝ կառավարման և ավտոմատացման էլեկտրամագնիսական համակարգեր



Նկ. 1. Transrapid 05 համակարգը Համբուրգի ցուցահանդեսում

նը), մշակել է առաջին ասինխրոն գծային շարժիչի նախատիպը: Ավելի ուշ՝ 1960-ական թվականներին, նրա մասնակցությամբ իրականացվել է արագընթաց գնացքի ստեղծմանն ուղղված Tracked Hovercraft ծրագիրը:

1979թ. Համբուրգի միջազգային ցուցահանդեսում ներկայացվել է աշխարհում առաջին՝ ուղևորափոխադրումների համար արտոնագրված մագնիսական բարձիկով գնացքի Transrapid 05 նախատիպը (նկ. 1): Ցուցահանդեսի տարածքում

կառուցված շարժուղին ուներ 908 մ երկարություն: Transrapid 05-ը հաջողությամբ շահագործվել է երեք ամիս և փոխադրել ընդհանուր առմամբ 50000 ուղևոր: Գնացքի առավելագույն արագությունը եղել է 75 կմ/ժ:

Առևտրային նշանակությամբ առաջին գնացքը շահագործվել է 1984թ. Բիրմինգհեմում (Անգլիա). մագնիսական կախոցով և 600 մ երկարությամբ երթուղային գիծը Բիրմինգհեմի միջազգային օդանավակայանը կապում էր մոտակա երկարուղային կայարանին: Այն հաջողությամբ աշխատել է 1984-1995 թթ.:

Ներկայում գոյություն ունեցող (շահագործվող) մագնիսական բարձով գնացքներից արագությամբ առաջին տեղում է JR-Maglev MLX01 ձապոնական գնացքը (նկ. 2), որը 2015 թվականի ապրիլին Յամանասիի ձանապարհին զարգացրել է ռեկորդային՝ 603 կմ/ժ արագություն: JR-Maglev MLX01-ին են



Նկ. 2. JR-Maglev MLX01-ը Յամանասի քաղաքի ձանապարհին



Նկ. 3. Շանհայի Transrapid SMT էլեկտրագնացքը

պատկանում մի քանի տարբեր ռեկորդներ, որոնք սահմանվել են 1997–1999 թթ.: Առաջին անգամ այս գնացքը զարգացրել է 531 կմ/ժ արագություն, իսկ հետո՝ համապատասխանաբար, 550 կմ/ժ և 552 կմ/ժ: 2003 թվականի ռեկորդը՝ 581 կմ/ժ, պահպանվել է շուրջ 12 տարի: JR-Maglev MLX01-ի մրցակիցներից կարելի է նշել Շանհայի արագութաց գնացք–մագլել՝ Transrapid SMT-ը (նկ. 3), որը մշակվել է Գերմանիայում և 2003 թ. զարգացրել 501 կմ/ժ արագություն:

Այժմ աշխարհի մի շարք երկրներում հաջողությամբ շահագործվում են մագնիսական կախոցներով նաև այլ էլեկտրագնացքներ: Ճապոնիայում 2005 թվականից գործում է "Chubu" ընկերության ստեղծած մագնիսական բարձով Linimo գնացքը (նկ. 4), որի ուղեգիծն ունի 9 կմ երկարություն և 9 կայարան, և որը զարգացնում է մինչև 100 կմ/ժ արագություն:

Մագնիսական բարձով ևս մեկ երթուղային գիծ շահագործվում է Հարավային Կորեայի Տեղոն քաղաքում. UTM-02 արագութաց գնացքը (նկ. 5) 14 տարի տևած նախագծային աշխատանքներից հետո թողարկվել է 2008 թ. ապրիլին: Գնացքի երթուղային գծի երկարությունը մեկ կիլոմետր է:

Այժմ նախագծման փուլում է մագնիսական բարձով աշխատող Maglev L0 արագութաց գնացքը (Ճապոնիա): Նախատեսվում է, որ այս համակարգը կթողարկվի 2027 թ.:

Բոլորովին վերջերս ԱՄՆ-ի ուսումնառության ուժերի 846-րդ ավիացուկատի ճարտարագետներին հաջողվել է մագնիսական բարձով տրանսպորտային միջոցի համար սահմանել արագության նոր ռեկորդ՝ 1018 կմ/ժ: Ուշագրավ է, որ այս համակարգում քարշի ուժի ստեղծման համար օգտագործվում է ոչ թե գծային էլեկտրաշարժիչ, այլ ռեակտիվ շարժիչ (նկ. 6):

Հարկ է նշել նաև, որ մագնիսական բարձով գնացքների շատ նախագծեր ծախողվել են ու չեն իրականացվել: Հիմնական պատճառներից մեկն այդ ձեռնարկների թանկարժեքությունն է. արագութաց գնացքների համար անհրաժեշտ է լինում կառուցել շարժուղին, կայարանները, որոնք կազմում են ընդհանուր ծախսերի գերակշիռ մասը: Օրինակ՝ Վերոհիշյալ Շանհայի մագլելի կառուցման համար ծախսվել է 1,3 միլիարդ ԱՄՆ դոլար (43,6 միլիոն դոլար՝ 1 կմ երկկողմանի գիծ կառուցելու համար): Չնայած այս դժվարություններին, այժմ մի շարք երկրներում արագութաց գնացքների նոր մոդելներ մշակելու և նոր գծեր կառուցելու նպատակով մեծ ներդրումներ են արվում:

Շահագործվող արագութաց գնացքների մագնիսական կախոցներն ըստ աշխատանքի սկզբունքի և տեխնոլոգիական առանձնահատկությունների



Նկ. 4. Linimo էլեկտրագնացքը



Նկ. 5. UTM-02 արագընթաց գնացքը

երկու տեսակի են (նկ. 7)՝

1. Էլեկտրամագնիսական համակարգով կախող՝ EMS:
2. Գերհաղորդիչ էլեկտրամագնիսներով կախող (Էլեկտրադինամիկական կախող)՝ EDS:

Էլեկտրամագնիսական կախոցներով (EMS) աշխատող գնացքներում ձգող ուժը, որը շարժուղուց վեր է բարձրացնում գնացքը, ստեղծվում է էլեկտրամագնիսական դաշտի շնորհիվ: Այս դեպքում գնացքը շարժվում է T-աձև շարժուղու վրայով: Ձգող (բարձրացնող) էլեկտրամագնիսները տեղադրվում են շարժուղու եզրամասերում: EMS տեխնոլոգիայի հիմնական առանձնահատկությունն այն է, որ կախոցի աշխատանքը, կախված բազմաթիվ գործոններից, պետք է կառավարվի՝ վերահսկվի և կարգավորվի՝ ավտոմատացված համակարգի միջոցով: EMS կախոցի համակարգն աշխատում է (սնվում է) հաստա-


տուն հոսանքի մարտկոցներով, որոնք տեղադրված են գնացքում և լիցքավորվում են գծային գեներատորով: Այս հանգամանքի շնորհիվ արգելակումից և գծային շարժիչի աշխատանքային կամ վթարային անջատումից հետո գնացքը կարող է բավական երկար ժամանակ մնալ օդում կախված վիճակում: EMS տեխնոլոգիայով է աշխատում Շանհայի գնացքը (նկ. 3):

Էլեկտրադինամիկական

սկզբունքով (EDS) աշխատող կախոցի դեպքում գնացքի ձախրումը (լսիտացիա) իրագործվում է շարժուղու և գնացքի վրա տեղադրված գերհաղորդիչ մագնիսական համակարգերով ստեղծվող մագնիսական դաշտերի փոխազդեցության հետևանքով: EDS տիպի կախոցներով համարված են ձապոնական JR-Maglev գնացքները (նկ. 2): Այս համակարգի հիմնական առավելությունը համեմատաբար



Նկ. 6. Ուսակող շարժիչով և մագնիսական կախոցով գնացքի փորձարկումը



Նկ. 7. Գերմանական (EMS) և Ճապոնական (EDS) կախոցային համակարգերով արագընթաց գնացքներ

բարձր կայունությունն է. շարժուղու և գնացքի միջև հեռավորության չնշն փորձացման (մեծացման) դեպքում մեծանում (փորձանում) է վանող ուժը, որը գնացքը վերադարձնում է նախնական դիրք և պահում այն շարժուղուց հաստատուն բարձրությունում՝ ապահովելով գնացքի անվտանգ ընթացքը: EDS համակարգի դեպքում գնացքի և շարժուղու միջև հեռավորության չափի հսկման ու կարգավորման համակարգի անհրաժեշտություն չի առաջանում:

Հատկանշական է, որ Էլեկտրամագնիսական կախոցներով (EMS) գնացքները նախագծվում են Գերմանիայում, իսկ Էլեկտրադինամիկական կախոցներով (EDS) գնացքները՝ Ճապոնիայում:

Մագնիսական

ցով արագընթաց գնացքների ստեղծման ուղղությամբ աշխատանքներ են կատարվել նաև Հայաստանում: Դեռևս 1979–1993 թվականներին Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտի (այժմ՝ Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան) Վերգետնյա արագընթաց տրանսպորտի գիտահետազոտական լաբորատորիայում հետազոտվել են արագընթաց գնացքների գծային շարժիչներն ու կախոցները: Այս լաբորատորիան ղեկավարել են ճանաչված մասնագետներ՝ ակադեմիկոս Գերգի Արեջյանը, դոցենտներ Աղոյիկ Նազարյանը և Անտոն Մահիյանը: Նրանց ղեկավարությամբ գրվել են մի շարք արժեքավոր գիտական աշխատություններ, նախագծվել ու Հրազդան քաղաքի մերձակայքում կառուցվել է «Մարմա-

րիկ-1» գիտափորձարարական կայանը և 800մ երկարությամբ շարժուղին: Լաբորատորիայի հետազոտությունների շրջանակներում 1985թ. սկսվել է արագընթաց գնացքի «Երևանի ավտոկայան-քաղաք Արովյան» գծի շինարարությունը, որը սակայն մնացել է անավարտ: Ի դեպք, լաբորատորիայի ստեղծմանն ու գործունեությանը հնարավորինս աջակցել է Հայաստանի կառավարությունը՝ հանձինս Պետականի տրանսպորտի և կապի վարչության պետ Հենրիկ Մանսարյանի, ով արագընթաց գնացքներին նվիրված առաջին աշխատություններից մեկի հեղինակն էր (Մոհորելուսական տրանսպորտ. Երևան-Այաստան, 1976).


Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանում այսօր ևս որոշակի հետազոտություններ են կատարվում մագնիսական բարձով գնացքների կատարելագործման ուղղությամբ. Էլեկտրամագնիսական համակարգերի բազային գիտահետազոտական լաբորատորիայում ուսումնավիրվում են մագնիսական կախոցները, մշակվում դրանց մաթեմատիկական մոդելներն ու նախագծման եղանակները:

*Հողվածը պատրաստելիս օգտագործվել են, մասնավորապես, <http://itc.ua/articles/poezda-na-magnitonopodushke-transport-sposobnyiy-izmenit-mir/> հիմքերներային աղյուրի նյութերը*



# ԽՄՈՐԻՉԸ ԿԱԹ Է ՏԱԼԻՍ

Կալիֆորնիայում աշխատող հնդիկ ծագումսաբանները կարողացել են ներառել կովի կրծքի գեները սովորական խմորիչի բջիջների մեջ, և խմորիչն սկսել է սինթեզել կաթին բնորոշ 6 սպիտակուց: Այդ սպիտակուցներին ավելացնում են վերամշակված բուսական ձարպեր, կալցիումի աղեր, կաթնաշաքար և այլ ածխաջրեր, վիտամիններ ու հանքային աղեր, և ստացվում է արհեստական, բայց բնական կաթ: Այն սովորական կաթից դեռևս կրկնակի թանկ է: Բայց հաշվի առնելով, որ պետք չէ կովեր պահել և խնամել, որ կաթը պետք չէ պաստերիզացնել, քանի որ դրանում մանրէներ չկան, իսկ պահպանման ժամկետը շատ մեծ է, զանգվածային արտադրության դեպքում խմորիչային կաթն ավելի էժան կլինի:



## ՄԱՐԶԻԿԻՆ ԿԱՐԵԼԻ Է ԽԱԲԵԼ

Գերմանիայում և Նոր Զելանդիայում կատարված փորձերը ցույց են տվել, որ դոպինզի փոխարեն մարզիկներին կարելի է առաջարկել պլացերո՞ որևէ արդյունավետ դեղամիջոց չպարունակող հարեր կամ ներարկումներ, և սպորտային արդյունքները կրարելավվեն:

Վեց ըմբիշների տվել են չեզոք լցանյութ պարունակող դեղապատճեններ, բայց ասել, որ դրանք մկանների ծավալի աճին և ուժին նպաստող հորմոններ են: Ֆիզիոլոգիական և կենսարիմիական հետազոտումները ցույց են տվել, որ մարզիկի օրգանիզմում տեղի են ունեցել փոփոխություններ, որոնք բնորոշ են հորմոնների ներգործությանը: Բարելավվել են նաև մրցումներում նրանց արդյունքները:

Հեծանվորդների երկու խմբի մարզումներից առաջ նշանակել են կրթեին պարունակող հարեր՝ մի խմբի հարերում առկա էր 9 միլիգրամ կրթեին, մյուսի հարերում՝ երկու անգամ պակաս: Պարզվել է, որ 10 կիլոմետրանոց մրցարշավում առաջին խմբի արդյունքները ավելի բարձր են, թեև իրականում հարերում երկու դեպքում էլ կոֆեին չի եղել: Առանց դոպինզի դոպինգ կիրառելու բարոյական կողմն արդեն պետք է որոշեն սպորտային ֆեդերացիաները, դատավորները և հոգեբանները:

«Наука и жизнь», 2015, N 2.

# ՇՆԵՐԸ ԵՎՍ ԼԻՆՈՒՄ ԵՆ ՀՈՌԵՏԵՍ



Է լավատեսներ, ի դեպ դրանք մեծամասնություն են կազմում, մյուսներին՝ հոռետեսներ: Նրա կարծիքով՝ հոռետես շներին, որոնք խուսափում են ցանկացած վտանգից, կարելի է վարժեցնել զգուշություն պահանջող մասնագիտությունների, օրինակ, թույլ տեսողությամբ մարդկանց ուղեկցողի համար: Լավատեսները կարող են զբաղվել պայթյունների և թմրանյութերի որոնմամբ:

Սիդնեյի համալսարանի անասնաբուժական ֆակուլտետի աշխատակից Մելիսա Սթաոլինգը հետաքրքրական փորձեր է կատարել շների հետ: Նախ սովորեցրել է շներին արձագանքել որոշակի բարձրության ձայների, մի ձայնը հնչում էր, երբ ամանի մեջ կաթ էր լցվում, մյուսը՝ ջուր լցնելու դեպքում: Բնականաբար, շնիկներին կաթն ավելի է դուր գալիս:

Ապա շներին սկսել էին շփոթեցնել՝ տալով միջակա հաճախության ազդանշան: Պարզվել էր, որ փորձի որոշ մասնակիցներ գերադասում են ընկալել կասկածելի ազդանշանը որպես «կաթնային» ազդանիշ, մյուսները ընդհանրապես չեն ընկալում դրա նշանակությունը և չեն մոտենում ամանին: Առաջին խմբի ներկայացուցիչներին Սթաոլինգն անվանում



# ԱՄԵՆԱՀԵՏԱՋՐՔԻՐ ԳԻՏԱՀԱՆՐԱՍԱՏՉԵԼԻ

## ՀԱՆԴԵՍԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ԲԱԺԱՆՈՂԻԱԳՐՎԵԼՈՒ ՀԱՄԱՐ  
ԿԱՐՈՂ ԵԶ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ

+374 60 62 35 99





9771829034002

17001

http://www.ncbi.nlm.nih.gov